

# Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

ՏԵՐԻՆ-ԽՄԲԱԳՐՈՒԹՅՏ Մ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Հայրապետական կոնգակ «Համայնարան»ի խմբագրութեան ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ 33

Խմբագրական

2. Հայ կղերը եւ Գիտութիւնը [ՄԻՍԱԲ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ] 35

Դասախօսք. եւ Հրատարակախօսք.

3. Փասկալի Վարդապետութիւնը Էմիլ Պութու — [ՄՈԳ-ՊԵՏ] 41

4. Առողջակէն. Գասեր. Կերակուրները — Պրոֆ. Պրուստ — [ՅՈՎ-ՀԱՆՆԻՍԵԱՆՑ]..... 51

Գիտական Լուրեր եւ Նորոքիւններ

5. Ջերմի զէմ Պայքար [Գ.].... 59

6. Վայրենիներու Վիրաբուժութիւնը [R. S.]..... 59

7. Օդին եւ ծովային ջուրին միբրոպարանական վերլուծումը [R. S.] ..... 60

8. Արեան խանգարումները բարձրութիւններու մէջ..... 61

Գիտական Յոբէյեան

9. Մ. Պէտթըլօի Յիւնամեակը Փարիզի Սոսպոնիւն մէջ [ՆՇԱՆ] ..... 61

10. Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան [ԽՄԲ.] 63

Վերջին Հրատարակութիւններ  
Հայ գրքեր

11. — Ընդհանուր տեսութիւն. . 63

12. — Մարդակազմութիւն Միւթար Պոնտացոյ..... »

13. — Ատոմ Եարճանեանի Հատորը..... »

14. — «Լոյս» [Կիսամտեայ Գիտական հանդէս] ..... 64

15. — «Հանդէս Ամսօրեայ»ի մէկ յօդուածը ..... »

16. — Օտար հրատարակութիւններ եւ խմբագրական ծանուցում ..... 64

Բ. ՇՐՋԱՆ (1901 - 1902, ՅՈՒՆՈՒԱՐ) ԹԻՒ 2

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ — ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ — ՏՊԱՐԱՆ

4, Rue Ortolan - PARIS

ԻՇԵԱՆ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Յ Բ Ա Ն Ս Ա Հ Ա Յ

ZUSNR Ա. — (A — H)

Մեր մէջ՝ ինչպէս գրական՝ նոյնպէս եւ գիտական բառերու ճշտութեամբ այս միակ ընդարձակ բառարանին առաջին հատորը կ'արժէ 25 ֆրանք (թղթակազմ) :

Երկրորդ հատորը, որ նոյնպէս 25 ֆրանք պիտի արժէ, մտա է աւարտելու :

Գնելու համար գիմելու է առ մասեկագիրն 108 Avenue de Neuilly, à Neuilly sur Seine—Près Paris. (France)

Իշխան Գ. Լուսինեանի ուրիշ գործերէն զնէլ ուզողները կրնան դիմել: Ասեաւ մեր հասցէին, որոնց ցուցակը պիտի հրատարակենք :

ՄԿԱ ՎԱԽ ԶՈՒՆԻՄ

(ԳԻՒԼՍՏԱՆՅԷ) — Գին 50 սանթիմ

Ո Ի Խ Տ

(ԲԷԼԼՈՒ-ԲԷԿԵԱՆ) — Գին 1 ֆրանք

Ազգային կեանքէ առնուած այս երկու հեռաքրքիր եւ կարեւոր անձերու վաւերական նամակ պարունակող գրքոյկները կ'արժէ որ ամեն մարդ ունենայ: Հասոյթը՝ (ծախքերը գրցուելէ վերջ) հեղինակը հայ որբերուն կը յատկացնէ: Գնելու համար գիմել Impr. B. Missac, 4, rue Ortolan—Paris, կամ Impr. Arménienne (Venise St. Lazar, Italie).

ԳԵՂՈՒՆԻ

«Բազմալէզ» ի խմբագրութիւնը սկսած է հրատարակել ամիօր անդամ մը Գրողնի անունով գեղարուեստական թերթ մը, որ ինչպէս կ'երեւի իր յայտարարութենէն, Որբունի գթասիրական կանոնաւոր շարունակութիւնը պիտի ըլլայ: Տեղ չունենալով, չենք կրնար գծազարգար մանրամասնել անոր պարունակութիւնը (յօդուածներ եւ պատկերներ):

«Գեղունի»ն պիտի ունենայ շահագրգիռ գեղարուեստական բովանդակութիւն, բաժնեգիրն 3 ֆրանք է. ստանալու համար գիմելու է «Բազմալէզ» ի խմբագրութեան Venise (St-Lazare) — Italie.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հաւաքարանի բաժանորդագրութիւնը կ'ԱՆՆԵԻԿ է: Ամեն անոնք, որ մեզ կը գիմեն բաժանորդ գրուելու, թող բարեհաճին միեւնոյն ատեն իրենց բաժնեգիրն կաւխիսի ղրկել, որպէսզի թերթի առաքման միջոցին յապաղումներ չգատահին:

Դեռ կ'սպասենք մեր անցեալ սարուայ չվճարող բաժանորդներուն...

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

## ԿՈՆԴԱԿ

” ՀԱՄԱԼՍԱՐԱՆ « Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԿՐՏԶ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ  
ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԳԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ  
ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ Է Զ Մ Ի Ա Մ Ն Ի . մեծարոյ  
Մ ի սաքայ Պաղտատարեան , Տնօրէն-խմբագիր « Համալսարան »  
հանդիսի , հարազատի Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն  
և Հայրապետական օրհնութիւն :

Ախորժ հաճութեան յընկալաք զյղեալն 'ի յարգութենէ  
Ձերմէ զերկոտառան համարս « Համալսարան » հանդիսիդ  
կազմեալ 'ի մի հատոր ընդ գրութիւն Ձեր ուղղեալ 'ի 5  
սեպտեմ. տարւոյս : Որդեա'կ հոգեւոր , մխիթարական է  
յոյժ տեսնել զարդիս զերատարակութիւն զանազան

գիտական հանդիսից ընդ ձեռն կարող եւ ուսեալ  
երիտասարդաց Ազգիս 'ի զանազան տեղիս 'ի կեդրոնս  
լուսաւորութեան ազգաց, որ առ ոչինչ համարեալ  
զարգելաւիթ հանգամանսն եւ նիւթական սուղ միջոցս  
'ի սէր կրթութեան, յառաջդիմութեան եւ զարգացման  
Ազգիս, յանձն առին քրտնաջան վաստակօք օր ըստ օրէ  
ճոխացուցանել զգրականութիւն մեր, յաչս օտարաց  
բարձրացուցանելով զայն. 'ի թիւս որոց եւ պատուական  
հանդէսն Ձեր ըստ ամենայնի օգտակար եւ պիտանի յաղաքս  
ընթերցող հասարակութեան :

Արդ՝ հայեցեալ մեր ընդ ջանս Ձեր եւ զաշխատութիւն ,  
որպէս եւ ընդ օգտակարութիւն գործոյն , սովին  
Հայրապետական Կոնդակաւ օրհնեմք զՁեզ եւ  
զաշխատասիրութիւն Ձեր , մաղթելով առ Հայրն ամենակալ  
յաջողել Ձեզ ըստ ամենայնի յայգմաղբօգուտ եւ արդիւնաւէտ  
գործ որ ըստ ամենայնի գտանեմք անհրաժեշտ եւ արժանի  
ուշադրութեան եւ քաջալերութեան պատուական աղբայնոց  
մերոց եւ բարեգործաց Ազգիս :

Տացէ Ձեզ Տէր եւ որոց ընդ Ձեզ են աշխատակիցք եւ  
վաստակողք կար եւ զօրութիւն առ 'ի յարատեւել ընդ  
յամայր ամս ողջամիտ ուղղութեամբ յայգմ փառաւոր եւ  
պատուաբեր ասպարիզի, 'ի փառս Հայրենեաց մերոց 'ի  
կրթութիւն եւ 'ի զարգացումն որդւոյ Ս . Եկեղեցւոյն  
մերոյ եւ յուրախութիւն համակրողաց պատուական  
հանդիսիդ :

Ողջ լինել ցանկամք Ձեզ մնալով հանապազ աղօթարար :

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Թ . 1301

'ի 18 Հոկտեմ. 1901 ամի  
ըստ Տոմարիս ՌՅԾԱ.

'ի Հայրապետութեան մերում Թ . ամի ,  
'ի Տփիսիս

## ՀԱՅ ԿՂԵՐԸ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս ամեն տեղ, հայ ժողովուրդին մէջ ալ կղերը զեկալարող դեր մը ունեցած է: Դարձեալ, պատմութենէն կ'իմանանք որ կրօնական ազդեցութիւնը յարատեւ եղած է՝ միշտ ուժգին սկզբնաւորութեամբ մը եւ յետոյ շատ թէ քիչ չէզոքացումով մը, աշխարհի բոլոր ժողովուրդներուն մէջ, անխտիր: Մարդը կրօնքի մը գոյութիւնը անհրաժեշտ դատած է, որովհետեւ, ամեն բանէ առաջ, անով միայն բացատրել կրցած է տիեզերքի խորհուրդը, դադանիքը: Ու մարդկային կարողութիւնները անչարժութեան ստիպող երկար դարերու ճակատագրական սարուկ շրջան մը շատ քիչ ծնունդներ ունեցաւ, որոնք՝ աններելի ըմբոսացումով մը, բացատրել պիտի նկրտէին բնութեան ուժին հասանելիութիւնը: Տգիտութեան երջանիկ դարը խոռվքի ցնցումներ կ'ունենար ու կոյր հպատակութեան մը մէջ, — մարդկային մտքի տկարութեան ու նուաստացումի այդ համակերպութեան չարաշուք վիճակին մէջ, — կը տեսնէր միայն իր բարձրութիւնը եւ մեծութիւնը:

Մարդկութիւնը իր ծագումէն պաշտելի էակ մը փրնտընաց, որովհետեւ անոր գերազանցութեանը մէջ ճանչցաւ իր տկարութիւնը, — անկանգնելի տկարութիւն — Վուսաւորութեան արշալոյսը ու մտքերու ազատագրումը կ'ուշանար՝ միլիոնաւոր ժողովուրդներու մռայլ հորիզոնին վրայ: Որքա՛ն տարբեր ըլլային պաշտելի էակին աստուածացումի քարոզութիւնները, անոնք համանման սկզբունքներով խմորուած միեւնոյն ազետալի ներգործականութեամբ կը վարէին մարդկութիւնը: Սակայն կրօնքներն իրարու հակազդեցութիւնը կրելով ձեւափոխումի եւ մրցողական կատարելիութենէն անցան գէպի նպատակայարմարը, գէպի բարոյական բարձրացումը: Լաւագոյն կրօնքի մը պէտքը կը զգացուէր, ու անոր երեւումը չուշացաւ, որ տօնուեցաւ քրիստոնէութեամբ:

Անցած դարերէն սաղմուած ու միայն անոնց երկունքէն իր ծնունդին կարելիութիւնը կերտած քրիստոնէութեան մէջ, զանազան ցեղեր, որ զայն ողջագուրեցին, չյամեցան հերձուածներ եւ պառակտումներ առաջ բերել, իրենց անօրինակ ձգտումներով, հոգեկան ու բարոյակայն,

զանազան վիճակներով: Քրիստոնէութիւնն ալ իր ոճրագործ եւ ապերասան վայրագութեան շրջանը ունեցաւ: Քրիստոնէութիւնն ալ տարուղղուած դաւանանքներու իր արիւնոտ մոլեռանդութիւնը, հաւատաքննութիւնը ունեցաւ: Բայց իր սահմանած ճշմարտութիւններու արեգակը ամեն տեղ միեւնոյն նսեմ երկինքը չի պարզեց:

Հայ ժողովուրդը, ժողովուրդներու ամենէ բարեմոյնը, իր խառնուածքով ու էութեամբ արդէն քրիստոնեայ՝ հազորդուեցաւ շատ զիւրութեամբ եւ ջերմեռանդ երկիրաւորութեամբ նոր կրօնքին հետ: Ու իր նուիրումը անոր՝ քրիստոնէական ամենէ անկախ ու ամենէ տիպար եկեղեցին իրականացուց:

Բայց ի՞նչ հետեւանքներ ունեցաւ քրիստոնէութիւնը, հայ ժողովուրդին տնտեսական եւ բարոյական վիճակներուն վրայ:

Սկիզբէն իր տերապետող ուժին մէջ տկարացում առաջ բերաւ այդ կրօնական վերանորոգութիւնը: Դրացի հեթանոս ժողովուրդներ կրօնական խտրութեան մոլեռանդ վրէժխնդրութիւնը դրին իրենց պահանջկոտ ու յանախ դրգուած յարաբերութիւններուն մէջ. ու հայը լքուած ինքն իրեն՝ ի զուր փնտռեց իր համակրօն հեռաւոր եզրայներու փոխադարձ օգնութիւնը, որոնք ո՛չ իր քրիստոնէական անկեղծութիւնը ունէին եւ ո՛չ ալ անձնուիրութիւնը: Չենք ծանրանար այն ներքին պառակտումին վրայ՝ որ քրիստոնէութեան գալուստը պատճառեց հայ դասազան նախարարութիւն կոչուած համայնքներուն մէջ: Ու վերջ ի վերջոյ իրերն ու դէպքերը այնպէս մը բերին որ հայը միայն իր հոգեկան մերկ ու մխիթարիչ անկախութեան հետ միայնակ մնաց:

Այս վերջին շրջանին մէջ հայ եկեղեցին բարոյական ճշմարիտ յենարանը եղաւ ժողովուրդին տեւելուն, ու այդ բարոյական ուժը, հակառակ հանգամանքներու տարապայման աննպատուութեան, իր անկախ ոգիով վերջնական անկումէն ո՛չ միայն զայն պաշտպանեց այլեւ թոյլ տուաւ անոր՝ մասնակցիլ ժամանակին յառաջդիմութեան հետ, իւրաքանչիւր անգամ որ իր տապնապալից գոյութեան մէջ անվրդով չունչ մը կը քաշէր ան:

Այսքան կուռ եւ տոկուն յատկութիւններով օժտուած ցեղի մը մէջ, կրօնական վարիչ ուժը, կղերք, իրապէս

պաշտօն ունէր հսկել անոր վրայ եւ հետու պահել զայն այլասերումէ, վատթարացումէ: Չայն մտաւորապէս բարձրացնելու գործը, — հին ժամանակի մտաւորական ընդունակութիւններու համաձայն, անսարակոյս, — բնական ծագումը պիտի ըլլար յարատեւ վերածնութեան, որուն կարելի արթնութեամբ պահպանութիւն նուիրած է հայ կղերը, միշտ:

Վանքերու եւ մենաստաններու մէջ ապաւինած կղերը, իր սաղմոսերգութիւններուն եւ աստուածանուէր փառաբանութիւններուն քովը, իր տոհմային ձիւքերուն ու ձգտումներուն համաձայն կազմեց դարձեալ, շատ զեղեցիկ ու հոյակապ եկեղեցական գրականութիւն մը, որ այնքան պերճախօսօրէն կ'արտացոլէ, այսօր իսկ, ազգային իմացականութեան գերազանցութիւնը:

Պատմական անցեալին վրայ մեր ըրած այս քանի մը կարճ խորհրդածութիւններէն վերջ, անցնինք մեր ժամանակակից կղերին:

Քաղաքակրթութեան հսկայաքայլ յառաջդիմութիւնը պատուհաս մը եղաւ խիղճերը ու զգացումները վայրագ եղբայրութեամբ մը շահագործող քրիստոնէադաւան ազգերուն կրօնական կարգերուն (caste) մէջ: Եւրոպական ժողովուրդներուն մէջ կեղծիքը նուիրագործող ու զայն կրօնքի սքեմին տակ ծածկող կղերը ամենէ ուժգին վրդովումը ունեցաւ: Սակայն դժուար էր սկիզբէն զայն իր ամբարած նիւթական անհեթեթ ուժին եւ նրբայած խորամանկ մտքին հեռատեսութեանը մէջ նուաճել, խորտակել: Քաղաքակրթութիւնը թէեւ գիտական հիմերու վրայ ամբապնդուած՝ չէր հաշուեր տակաւին զինքը ողջագուրողներու հոծ թիւ մը: Ժամանակ ու հեազհետէ զօրեղ ազգակներու յառաջացում մը հարկաւոր էր այդ բարեշրջութեան գործին: Ժժրդ գարը ամենէ անակնկալ հարուածը իջեցուց Արեւմտեան եկեղեցիին կրօնապատիր ու մարդախոշոչ իշխանութիւններուն գլխին: Իրդ գարը աւելորդ է ըսել թէ միեւնոյն գործը ծայրայեղօրէն իր սպառումին կը մղէ:

Մեր կղերը չունեցաւ նիւթական նկատելի բարելաւ լիճակ մը եւ կը թուի թէ ոչ ալ նկրտեցաւ զայն իրականացնելու մեղապարտ գործին:

Հայ կղերը գրեթէ միշտ շարունակած է իր նախնի

հայրերուն ուղղութեամբ, այնքա՛ն նուիրումով եւ այնքա՛ն խղճմտօրէն: Յեղը անկումէ պահպանելու ամենէ խնամոտ հոգը զինքը կենդանացուց ու իր հոգեւոր մխիթարանքներուն հետ՝ ներշնչեց անոր՝ գոյութեան անհրաժեշտ գիտակցութիւն մը: Հայուն ապրած միջավայրը երբէք յառաջդիմութեան արշալոյս մը չէր խոստանար. սակայն եւ այնպէս ժԹրդ դարուն վերջին կէսին մանաւանդ ամենէ լայն չիտմը ունեցաւ ան եւրոպական քաղաքակրթութեան հետ: Զօրաւոր ապացոյց մը կարելի է նկատել այս՝ իր ընդգրկած կրօնքին անկախ ու թոյլատրող ոգիին:

Ուրիշ ապացոյց մը, աւելի շօշափելի եւ աւելի կարկառուն, մեր կղերը ներկայացնող անձերու գործելու եղանակին մէջ կը գտնենք: Արեւմտեան Եկեղեցիին ներկայացուցիչները իրենց զէմ քաղաքակրթութեան մղած հալածանքին տակ հազիւ այսօր մատչելի կը դառնան, իրենցմէ խուսափող, իրենց խստութիւններէն ահարկող ժողովուրդին. հայ կղերը, մինչդեռ, իր ժողովուրդին փոխադարձ սիրոյն եւ աջակցութեանը մէջ փնտռած է իր հովութեան պաշտօնին կատարումը: Աւելցնենք թէ մեր նախնի սուրբ Հայրերը աւելի քաղաքակրթուած էին եւ քաղաքակրթութեան ոգիով կը վարէին իրենց պաշտօնը, քան այսօր, երկար դարեր յետոյ, Արեւմտեան Եկեղեցիին հոգեւորականները, մասնաւորապէս, որ դեռ նոր նմանօրէնակ ոգի մը ընդգրկելու հարկը կը զգան. ու այն ալ իրենց գոյութիւնը, բռնական շարունակութեամբ մը՝ վտանգուած աեանելու սարսափին մէջ:

Ուրիշ ապացոյց մը ո՛չ նուազ համոզիչ, մեր հոգեւորական հայրերու անձին յարաբերական խոշոր անկախութիւնն է: Գրեթէ ամեն կողմ մեր կրթութեան գործին ղեկավար, ունեցած են սեպհական ձեւներէցութիւն: Կրօնական բարձրագոյն իշխանութեան միջամտութիւնը, այդ պահուն, խրախուսական եւ խրատողական եղած է: Բնականաբար մենք մեր կղերին այն դասակարգը մատնանիշ կ'ընենք հոս, որ հայ տարրին զարգացած մասին կը պատկանի եւ ուր հաշուուած թիւը թէեւ ո՛չ այնքան խոշոր, գոհացուցիչ համեմատութիւն մը կը պահէ միշտ աշխարհական մտաւորականութեան հետ:

Որպէսզի լաւ կերպով համոզուինք թէ մեր կղերականութեան ներկայացուցիչները իրենց անկախութեամբ

ի՞նչեր կրնան ընել, յիշենք հոս անոնց ամենէ Մեծ դէմ-  
քերէն մէկը միայն, մեր այսօրուան Վեհափառ Հայրապետը,  
Տ. Տ. Մկրտիչ Ա. Ս. Կաթողիկոսը: Իր երիտասարդութեան  
մէջ, կղերի վեղարով, ամենէ տաք եւ ամենէ վառվռուն  
զգացումներով տողորուած՝ երգեց Ան իր ազգանուէր ճըզ-  
տումները, որոնց մէջէն տեսաւ իր պարտականութիւննե-  
րուն ճշմարիտ մեծութիւնը: Զինայեց զանոնք լաւապէս  
կատարելու համար ոչ մէկ ճիգ եւ անձնուիրութիւն, ու  
ստացաւ այնպիսի ժողովրդականութիւն մը, որ յաւերժա-  
ցուց իր անունը, Հայրիկ տիտղոսով: Իր գործունէութեան  
իբր իրական փաստ մատնանիշ ընենք Արծիւ Վասպուրականի  
հրատարակութենէն գրողուած՝ տպարանի մը կազմակեր-  
պութեան ձեռնարկութիւնը ու եօթանասունական թու-  
կաններուն Վարագայ Ս. Խաչ վանքին մէջ «Հողագործական  
վարժարան»ին բացումը: Զգացումի ժողովուրդը, հայ  
սարրը, այնքա՛ն գործունեայ եւ գիտնականօրէն սքանչելի  
զաղափարներ իրականացումի տանող կորովի Անձը, երախ-  
տագիտութեան խորին յարգանքով մը, նախ պատրիար-  
քութեան ու յետոյ կրօնական գերագոյն իշխանութեան,  
կաթողիկոսութեան, աթոռներուն կանչեց:

Մեր արգի կղերական կարեւոր դէմքերուն վրայ գուցէ  
առիթը ունենանք օր մը վերստին դառնալու, անցնինք  
ուրիշ կարեւոր կէտի:

Քանի որ մինչեւ այսօր մեր հոգեւոր հայրերու մտա-  
ծումը մեր ցեղին բարոյական ու մտաւոր զարգացումը  
եղած է, ու այդ բանին համար օտար յառաջդիմութիւն-  
ներէ օգտուիլ ամենէ գործնական ուղին դատուած է, աս-  
կից վերջն ալ միեւնոյն ուղին շարունակել ամենէ  
լաւագոյն գործունէութիւնը կը նկատենք: Բայց ինչպէս  
որ ժամանակին հետ կը փոխուին ժողովուրդներու ամեն  
տեսակ պէտքերը, կենցաղավարութեան պայմանները, ու-  
շաղրութիւն դարձնելու է նախ՝ թէ այդ կարգի փոփոխու-  
թիւններ եղած են մեր ազգին մէջ: Կը հաստատենք որ  
մեր ժողովուրդը այսօր միեւնոյն հոգեկան պահանջներուն  
հետ՝ միեւնոյն մտաւորական պէտքերը չունի այլեւս:  
Քաղաքակրթութիւնը անոր մէջ մուտ գտած արդէն, նոր  
ուղղութիւն մը տուած է անոր մտաւորական պէտքերուն:  
Մեր կղերին կը մնայ, ուրեմն, ներկայանալ այսուհետեւ  
իր վարչական պաշտօնին մէջ, բաղձացուած ձեռնհասու-

Թեամբ եւ ազատազրուած սկզբունքներով : Գիտութիւնը անհրաժեշտութիւն մը դարձած է այսօր գոյութեան պայքարին մէջ, — սուրբ Միւսոնով ու գիտութեամբ օծուած եկեղեցականներ հարկաւոր են մեզ՝ դէպի այդ պայքարը խրախուսելու հին սերունդը, իրենց առաքելական ձայնին բոլոր թելադրիչ յամառութեամբը, եւ դիւրացնելու ապագայ սերունդներուն այդ ճամբով ուռճանալու գործը :

Երբեմն գուցէ արդարանալի համարուէր տգէտ կրօնաւորներու օժումը, որովհետեւ կրօնքի նուիրական անունը հաւատարեութեան եւ հաւատատուութեան իրենց ստանձնած պաշտօնին մէջ մագնիսացնող ամենէ զօրաւոր ուժը կը կազմէր : Տգէտ կղերական մը, այսօր ու այսուհետեւ, իրեն ընծայուած երբեմնի յարգանքին վայելումը պէտք չէ բնաւ հաշուէ : Փողովուրդներու բարոյական միտումը, անոր զարգացումին հետ ուղղակի համեմատական արտայայտութիւն մը ունի : Ու այդ բարոյականին ուղղութիւն մը տալու հոգը քանի որ կղերին կը պատկանի, կղերին անկ է ուրեմն ներկայանալ մտքի աւելցուել կարողութիւններով եւ ժամանակայարմար ձիրքերով :

Լաւ ըմբռնուած բարոյական մը — կրօնք ու դաւանանք — միշտ կը հաշտուի գիտութեան հետ : Մեր կրօնքը լաւագոյն վարդապետական սկզբունքներով օժտուած՝ իբր ճշմարտութիւն՝ հաշտուելու է գիտութեան լոյսին հետ : Մեր կրօնքի ներկայացուցիչներուն պարտքն է գիտութեան ու կրօնքի համերաշխութեան հանգոյցը շօշափել ու զայն ամրապնդել : — Չանք մը հարկաւոր, անտարակոյս, նախ իրենց գոյութեան ու երկրորդ զգացումներու անապական պահպանութեան համար :

Մեր Վեհափառ Հայրապետին Հաւնայաւրանի ուղղած կոնդակը, որով զարդարեցինք մեր հանդէսին այս համարին ճակատը, գիտութիւնը տարածելու համար եղած ջանքի մը չոր ու ցամաք գնահատանքը չէ : Նորին Ս. Օծութեան խօսքը, պատմական նոր շրջանի մը, գիտական շրջանի մը, սկզբնաւորութիւնը կը գնէ մեր մէջ : Ու այդ հեղինակաւոր ձայնը աւելցնենք թէ պէտք է արձագանգ գտնէ, անխտիր, մեր կղերին բոլոր դասակարգերուն մէջ :

Դարձեալ, մեր Վեհափառ Հայրիկը, այդ կոնդակով յիշատակը կ'արթնցնէ իր յառաջդիմատէր եւ եղական Անձին ուսումնասէր գործունէութեանը : Ու մերք չենք կասկած իր ըսելու թէ իր լուսամբա անօրինութիւններուն շնորհիւ, որոնք անտարակոյս պիտի չուշանան, մեր կղերին բարոյականն ու մտաւորականը ազնուացնելու համար ամեն ձիգ պիտի չխնայուի, ու այդպէս Նորին Սրբութիւնը մեր ժողովուրդի իրական վերածնութեան հիմնաքարը պիտի գնէ :

ՄԻՍԱՔ ՊԱՆՏԱՍԻՐԵԱՆ

ՓԱՍԿԱԼԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Դասախօսութիւն փրօֆեսօր Էւհի ՊՈՒԹՈՒԻ, Փարիզի Սոսյոնիկն մեջ)

Շատերը պիտի ըսեն թէ մարդն է մանաւանդ կարեւորը, թէ վարդապետութիւնները՝ միայն խառնուածքէն ու ազդեցութիւններէն ծագած եւ շատ թէ քիչ արուեստականօրէն իրարու շղթայուած՝ գաղափարներ են, թէ անոնք արժէք մը կը ստանան միայն իրենց յարաբերութեամբը այն մարդուն հետ որ զանոնք յղացաւ:

Չեմ կրնար ընդունիլ որ այդպէս ըլլայ: Գաղափարներու դէմ անիրաւութիւն մը պիտի ըլլայ զանոնք զուտ արտայայտութիւններու եւ արտացոլումներու վերածել, առանց իրականութեան:

Գաղափարները ունին գոյութիւն մը, անոնք իրենք իրենցմով արժէքաւոր են եւ պատճառներ են: Էականեր են անոնք, ու ասիկա այնքան աւելի՝ որքան աւելի միազրական, կանոնաւոր են: Բանակի մը կը նմանին եւ իրենց միութենէն է որ ուժը կը ծագի: Միւս կողմէ, մարդը ընդհանրապէս եւ մանաւանդ մեծ մարդը հետաքրքրութեան պարզ առարկայ մը չէ մարդուն համար. նոյն իսկ մենք ենք, մեր անձն է այդ խնդրոյ առարկան, կամ այն որ պիտի բաղձայինք ըլլալ: Մեծ մարդ մը ամեն բանէ առաջ, իրականացնող մ'է մեծ գաղափարներու, անոնց նուիրելով, անոնց պատշաճեցնելով իր ամբողջ գոյութիւնը: Գաղափարներ կազմել իր չափովը՝ անոր՝ մարդուն դէմ դաւաճանել է. ինքզինքը գերազանցելու ըմբռնումը ունենալու է. Փակալ մասնաւորապէս իր անձնաւորութեան սահմաններէն անդին անցնիլ աշխատած է: Իր կեանքը հեռզհեռէ խոնարհ հպատականութիւն մը եղած է այն բանին որ ճշմարտութիւնը ըլլալ թուած է իրեն: Իրեն նախատինք մը ըրած պիտի ըլլայինք եթէ զանց առնէինք իր վարդապետութիւնները ուսումնասիրել: Գարձեալ պիտի իյնայինք գեղեցկապաշտութեան մէջ. որովհետեւ այս վարդապետութեան նպատակը մեր կեանքի էական օգուտները կը շօշափէ: Ուսումնասիրենք ուրեմն

եւ քննենք այս վարդապետութիւնը, դիմելով անոր կենսագրական տեղեկութիւններուն այնքան՝ որքան անոնք մեզի պիտի օգնեն զայն լաւ կերպով հասկնալու համար:

Այսօր պիտի փորձենք անոր ընդհանուր պատկերը ներկայացնել, յետոյ լաւ ըմբռնելու համար այն յարաբերութիւնները, զոր ունին իրարու հետ մասնաւոր վարդապետութիւնները այս մաթէմատիքական եւ միադրական հանձարին մէջ:

Փասկալին մէջ չենք գտներ իր վարդապետութեան ամբողջութեանը շարունակական ցուցադրումը: Թոյլ տուէք ինձ ձեզի զայն ներկայացնել այն տպաւորութեան համեմատ զոր յառաջ բերաւ իմ վրայ անոր հեղինակութիւններու ընթերցումը:

Ա

Կը թուի թէ Փասկալի խորհրդածութիւններու կեդրոնը մարդուն ուսումնասիրութիւնը ըլլայ: Երբ այդ նիւթը իրեն երեւցաւ, իր գեղեցկութեան եւ խորհրդաւորութեան մէջ, չկարողացաւ անկէ իր ակնարկը բաժնել: Որքա՛ն մարդը ինքզինքը քննէ այնքան կը գտնէ: Նկատեցէ՛ք անոր բաղձանքները՝ խարուած մ'է ան ինքզինքին: Այն որսորդը, որ կը յոգնի որս մը հալածելէն, զայն պիտի մերժէր եթէ իրեն ընծայուէր: Կը բաղձան աննպատակ, բաղձալու համար: Ձեր գիտութեանը վրա՞յ կը դառնայ խնդիրը. ատիկա ինքն իրմով անհաստատա եւ անհամաձայն է: Փիլիսոփայական գրութիւններէ աւելի այլազան ոչինչ կայ: Անոնք բոլորն զիրար չէզոքացնելու կը ձգտին. եւ սակայն մարդը երբէք չկասիր փնտռելէ: Միեւնոյն բանն է արդարութեան համար եւս: Սկզբունքով արդարութիւնը ուժին հակառակն է, եւ սակայն անկարող զայն իրականացնելու, մենք հրովարտակեցինք թէ ուժը ինքնին արդարութիւնը պէտք է ըլլայ: Ու մենք կը յարգենք սուրին իրաւունքը, ազնուականութեան իրաւունքը եւ իրաւունքը ամեն հաստատուած բաներուն: Վերջապէս գանք մեր «ես»ին: Ի՞նչ այնքան աւելի անբացատրելի: Անձնասիրութիւնը մեր բնաւորութիւնն է, կը տենչանք մեզի համար, կը սիրենք միայն զմեզ եւ մեր անձը կը փնտռենք մեր բոլոր ձեռնարկներուն մէջ: Արդ, մտնենք մեր սենեակին մէջ, եւ մնանք հոն, միայնակ

մենք մեզի հետ : Ձեռք կրնար այս ընկերակցութեանը տու-  
կալ, այդ բանը չարչարանքներու ամենէ զժուարատարը  
պիտի ըլլար : Ջբօսանքը պիտի փնտոենք, այսինքն մեզմէ  
փախուստը, ճշմարիտ նպատակը մեր ամեն խնդրանքնե-  
րուն որոնցմով կը կարծենք կամենալ մեր անձին :

Այս հաստատումէն կը ծնի անխուսափելի հանելուկ  
մը : Ուրկի՞ց կը ծագին այս յաւիտենական հակասութիւն-  
ները : Կարելի՞ է զանոնք բացատրել : Կարելի՞ է զանոնք  
անհետացնել : Մարդկութեան հոգւոյն խորը բանալ՝ հոն  
ներդաշնակութիւնը հաստատել կարենալու եղանակով մը,  
անուատիկ այն նպատակը որ իրեն կ'առաջադրէ Փասկալ :

Իր մտածման աշխատանքին մէջ կարելի է որոշել երկու-  
վայրկեաններ. մէկը՝ ուր կը բարձրանայ վերլուծօրէն  
հանելուկէն պարզաբանումը, միւսը՝ ուր կ'իջնէ համա-  
դրականօրէն պարզումէն հանելուկը, զայս իր բոլոր մասե-  
րովը լուծել կարենալու եղանակով մը :

Ք

Ուսումնասիրենք նախ ինչ որ ես կ'անուանեմ անոր  
մտածումին վերլուծական ընթացքը :

Կարելի չէ՞ արդեօք, կը հարցնէ ինքնիքն Փասկալ,  
մարդկային կեանքի բազմաթիւ հակասութիւնները վերա-  
ծել մէկ եւ բոլոր միւսներուն պատճառ հիմնական հակա-  
սութեան մը : Եթէ անոնց ուշադրութիւն դարձուի, մեր յայտ-  
նած բոլոր հակասութիւններու հիմին մէջ, կան եր-  
կու տարբեր որոնք անփոփոխօրէն զիրար կը գտնեն, մէկ  
կողմէն մեծութեան տարր մը, միւս կողմէն նուաստու-  
թեան տարր մը : Իմ բաղձանքս անհուն է, ասիկա մեծ  
է. բայց բնաւ չեմ կրնար ինքզինքս գոհացնել.  
ասիկա անկարողութիւն է : Փնտռել ճշմարտութիւնը, այս  
վեհ գործ մ'է. բայց անէանալ հակառակ կարծիքներու  
մէջ, այս գժբաղգութիւն մ'է : Ուժին տալ արդարութեան  
գիմակը, նուաստութիւն է. բայց ունենալ արդարու-  
թեան գաղափարը եւ օչ մէկ կերպով անկէ չի հրաժարիլ՝  
մեծութեան ախողոս է : Վերջապէս ինքզինքը սիրել եւ  
չկարենալ ինքզինքին տանիլ՝ ինքզինքին կատարելապէս  
կամենալ եւ ինքզինքը մոլութեամբ լեցուն գտնել է :

Մեծութիւն եւ գժբաղգութիւն գոյութիւն ունին,  
վերջապէս, խոշոր անհամեմատութեամբ մը, կամենալուն  
եւ առնելուն մէջ, — անուատիկ մարդը :

Կրնա՞նք բառնալ այս հակասութիւնը :

Բոլոր փիլիսոփաները այդ բանին նկրտած են : Բազմաթիւ դրութիւններ առաջարկած են , բոլոր այս դրութիւնները կարելի է երկուքի վերածել , ստոյիկոսփիւն եւ երկրայոզուփիւն (stoïcisme et pyrrhonisme) : Ստոյիկեանները մարդուն պարտականութիւնը անոր իշխանութենէն , ուժէն կը զատեն . որովհետեւ մարդը կը զգայ թէ շինուած է զարգանալու համար , անոնք կը կարծեն որ ան իր իրական ուժերով կրնայ այդ բանին հասնիլ : Երկրայոզականները ընդհակառակը , մարդուն տկարութիւնը հաստատելով անոր վրայ պարտք կը դնեն հրաժարիլ ամէն բանէ որ վեր է իր բնական կարողութենէն :

Այսպէս այդ երկու դրութիւնները կը համաձայնին ջնջել խնդրոյն երկու կէտերը : Ստոյիկեանները մարդուն պաշտօնը կ'ուրանան եւ երկրայականները մեծութիւնը :

Բայց ասոնք անընդունելի լուծումներ են : Մեծութիւն եւ նուաստութիւն երկու հաւասարապէս ճշմարիտ իրականութիւններ են , եւ մէկը կամ միւսը ջնջել կարենալէ հետո , անոնցմէ իւրաքանչիւրը գոյութիւն ունի միայն՝ միւսին իրականութեանը շնորհիւ : Հակառակ են անոնք եւ միեւնոյն ժամանակ համերաշխ : Ըշմարտութիւնը փրնտուելու համար է որ գիտութեան սխալումներուն մէջ կ'իյնանք : Արդարութիւնը իրականացնել ուղեցնուս է որ ուժին իրաւունքը կը ստեղծենք : Եւ փոխադարձաբար , մեզի դժբաղդ ճանչնալով է որ մենք մեծ ենք . ծառ մը ինքզինքը դժբաղդ չի գտներ : Մեր դժբաղդութիւնները մեծ մարդու , տիրական դժբաղդութիւններ են :

Հոս կը գտնուինք խնդրոյ մը առջեւ . զոր մարդկային միտքը լուծելու անկարող է : Հակասութիւն մ'է ան սր իր բանականութենէն անդին կ'անցնի : Որովհետեւ երկու կէտերն ալ այնտեղ հաւասարապէս գրական ու իրական են այն պահուն երբ , բանականութեան համեմատ , երկու հակասութիւններէն մէկը հարկաւորապէս ճշմարիտ է եւ միւսը սխալ : Ու եթէ երկու կէտերն ալ պարզապէս իրարու մէջ հակառակ գատուէին երկուքն ալ սխալ պիտի ըլլային եւ ոչ ուղիղ :

Զպիտի կրնա՞նք , զոնէ , հրաժարիլ այդ խնդիրը լուծելէն : Մոնթէնյը իմաստունը ինձ խորհուրդ կուտայ գլուխս անտարբերութեան կակուղ բարձին վրայ հանդչե-

ցընել : Բայց այս ատեն ալ անկարելի լուծում մը կը յառաջանայ . որովհետեւ շահադիտական հետաքրքրութեան մը շուրջը չէ որ կը դառնայ խնդիրը՝ այլ իրապէս մեր կեանքին, մեր ներքին հանգստութեան, մեր մեզի հետ համաձայնութեան շուրջը : Գործնականին մէջ, մեր գործերէն իւրաքանչիւրը ընտրութիւն մը, խնդրոյն ընծայուած լուծում մ'է, կամ մեր բնութեան բարձր մասին եւ կամ նուաստ մասին հետ համաձայն : Ու անտարբերութեան բարձին ընտրանքը նուաստութեան վերջինը պիտի ըլլար, ըլլալով մեր կողմէն լաւագոյնէն հրաժարումը :

Անլուծելի եւ անլուսաբանելի, անաւասիկ հարցը, զոր կը ներկայացնենք մենք մեզի :

Մէկ ճամբայ միայն կայ . Փոխանակ մենք մեզի մէջ փնտռելու խնդրին լուծումը, չպիտի կրնայինք արդեօք մեզմէ դուրս, զերբնական յատնութեան մը մէջ փնտռել զայն : Այսպէս մտածելով՝ տղայ մը, որ—անկարող է դժուարութեան մը ելքը գտնել, իրմէ աւելի զարգացած ի մը կը գիմէ : Արդ՝ կրօնքները մեզի կ'ընծայեն իրապէս գերբնական ճանչցուած յայտնութիւններ : Կրօնքներու չարքին մէջ կը գտնուի քրիստոնէական կրօնքն ալ . ու անաւասիկ ինչ կը սորվեցնէ մեզի :

Մարդը երկու բոլորովին տարբեր վիճակներէ անցած է . նախ կատարելագործութեան վիճակէ մը, յետոյ ուրխալի մը պատճառով՝ որ իր անկումը եղաւ, ապականութեան վիճակէ մը : Այս երկու հակասական վիճակները շատ լաւ կերպով համաձայնած են անըմբռնելի էակի մը մէջ, որ Յիսուս-Քրիստոսն է : Յիսուս-Քրիստոս Մարդ-Աստուծոյն է : Նա բնունաւորուած է մարդուն մեղքերովը եւ է անարատ սրբութիւնը : Իրեն մէջ չարութիւնը բնոյթը փոխած է : Անդամանելի կորուստն էր ան : Յիսուս-Քրիստոս անոր չարչարանքը (peine) կրելով, մեղանչողին արամադրելի կը դարձնէ փրկութիւնը : Չարչարանքը, վիշտը եւ անկումը Յիսուս-Քրիստոսով փրկութեան եւ թողութեան գործիք մը կը դառնան : Եթէ իրեն հետ եւ իրմով չարչարուինք, մեր վիշտը զօրաւոր է եւ մեզի կը փրկէ :

Եթէ մենք այս ուսուցումը կիրարկենք մեզի տրուած հարցին մէջ, կը տեսնենք որ զայն իր բոլոր կէտերուն մէջ կը լուծէ :

Այն շտապողութիւնը, զոր մենք մեր մէջ կը հաստատենք, հետեւանքներն են սկզբնական մեղքին: Մեծութիւնը մեր առաջին կեանքին հետքն է: Վերջապէս մեր հետապնդած լուծումը, այսինքն մարդկային բնութեան մէջ ներդաշնակութեան հաստատումը, Յիսուս մեզի կը ներկայացնէ: Որովհետեւ դժուարութիւնը կը կայանայ մեր բնութեան ամբողջական մաս կազմող չարիքին ջնջումին անկարելիութեան մէջ: Բայց Բրիտոսոսով չարիքը բարիքին գործիքը կը դառնայ եւ չարչարանքը կամ մեղքի քաւումը արժանաւորութեան կը փոխուի:



Այս սկզբունքէն Փասկալ կ'իջնէ աստիճանաբար մարդկային վիճակին տարբեր մասերուն:

Մեր իսկ ճանաչողութեանը համար ի՞նչ լոյս կը ծագի անկէ:

Կան, իրաւամբ, երեք կարգի բաներ, ինչպէս երեք աշխարհներ. հոս վարը՝ նիւթական աշխարհը ու մարմինները, հոն վերը՝ սիրոյ աշխարհը ու աստուածային բաները, երկուքին մէջտեղը՝ հոգիներու աշխարհը՝ որուն կը վերաբերի մարդը իր էականութեամբը՝ միւս երկուքին հետ՝ միեւնոյն ատեն՝ յարաբերութիւն մը պահելով:

Մարդուն հիմնական կարողութիւնը միտքը կամ իմացականութիւնն է, որ միջին սահմաններուն մէջ զետեղուած է: Արդ, այս կարողութիւնը անբաւական է ինքն իրմով, չունի իրեն մէջ սկզբունքներ որ իրեն թշլաւորեն օրինաւորապէս եւ միւս երկու աշխարհներէն անկախօրէն կատարելագործուի: Առանց պատճառատուութեան (données) մարդը կարող չէ մտածելու եւ արամբ բանելու, այդ օրինակ ծանօթութիւններ պարտի քաղել մարմիններէն եւ աստուածային բաներէն: Ճանչնալու համար մարմինները զանոնք կը զրայ. Աստուծոյ նայելու համար սիրտ մը ունի ան:

Ահաւասիկ առողջ մեթոտը: Բայց մեղքը վերսլայր չըջեց այս գեղեցիկ կանոնաւորութիւնը: Բնական մարդը դէպի հակառակը կը քալէ: Կը դիմէ զգայաբանքներու եւ զուտ բանականութեան՝ ճանչնալու համար աստուածային բաները, եւ երբ խնդիր է նիւթական աշխարհին օրէնքները փնտռել, հաճոյքի, զգացումի եւ իշխանութեան

Հոռուրդին կ'ունկնդրէ: Ահաւասիկ ծագումը մեր գիտութեան եւ կեանքի յաւիտենական հակասութիւններուն: Մենք կը նայինք իրերուն այնպէս ինչպէս կը նայէինք Աստուծոյ եւ փոխադարձաբար:

Ի՞նչ է դարմանը: Մէկ հատ մը միայն կայ, այսինքն կապուել Աստուծոյ: Ի՞նչպէս այս միութիւնը կարելի է:

Անընգունելի է որ մարդկային արժանիքը յիշեցնէ աստուածային շնորհը՝ տեսակ մը մարդեղութեամբ, պէտք չէ կարծել նմանապէս որ աստուածային կամքը անօգուտ կը դարձնէ մարդկային կամքը, ասոնք երկու սխալ տեսութիւններ են որ կը ծագին՝ երբ Աստուած եւ մարդը, անջրպետին մէջ, երկու որոշ քանակութիւններ կը նկատուին: Ոմանք կը գումարեն մարդկային գործը եւ աստուածային գործը, ինչ որ անհեթեթ է, քանի որ Աստուած ուզեց որ վախճանաւորը գոյութիւն ունենայ: Մարդը Աստուծոյ միացնող կապը նիւթական չէ, սիրոյ կապ մ'է այն որ կը թողու անձին ապրել՝ այն պահուն երբ դայն կը ձուլէ իր նպատակին հետ: Այս գաղտնիքը Յիսուս-Քրիստոսով կը լուսաւորուի:

Ուրեմն մարդը, որ իր փրկութիւնը Յիսուսի մէջ կը փնտռէ, կը չարչարուի եւ կը զօրանայ: Կը փնտռէ հառաչելով, կը հրաժարի հաճոյքներէն, կը կռուի, կը պարզէ իր բոլոր կարելի ուժը: Այս ցաւագին ճիգը ներման գործողութեան արտայայտութիւնն է ինքնին, բան մը՝ որ միայն կարող է անոր արժէք տալ:

Ի՞նչ միջոցներով մարդս կարող է հասնիլ վերածնութեան: Այս միջոցները թուով երեք են:

1. Բանականութիւնը. — Պէտք է որ այս կարողութիւնը աշխատի, ճշմարտութեան գաղափարին տակ, ոչնչացնելու համար իր սեպական մտածումները: Չվախնանք զայն իր իսկ զէնքերով սարսափեցնելու, զանազան փրկատոյսական գրութիւններու ուժին ենթարկելու, իրենց շարունակական հակասութիւնը պարզելու եւ այսպէս խոնարհեցնելու ամենէ կոկողավիզները անոնցմէ, որոնք իրենցմով միայն կը յաւակնին ճանչնալ ճշմարտութիւնը:

2. Սովորութիւնը. — Զուտ բանականական հերքում մը բաւական չպիտի ըլլար: Պէտք է բարեփոխել նոյն իսկ մեր կարողութիւնները, ու այս բանին համար սովորութիւնը, գործնականը հարկաւոր է: «Օրհնուած ջուր ա-

ուէ՛ք, կ'ըսէ Փասկալ, որ ձեզի պիտի անբանացնէ եւ հաւատալ պիտի տայ: Ասիկա չի նշանակեր որ գաւանանքը պէտք է միայն սովորամոլութեան արդիւնքը ըլլայ: Բայց հաւատարապէս, անհրաժեշտութիւնը ըմբռնել բաւական չէ, իրօք, հաւատալու համար: Ճշմարիտ հաւատքը սրբատին հաւատքն է: Ու իմ սիրտս քարացած է՝ իմ տրամաբանող եւ ապականած բանականութեամբս: Ինձ հարկաւոր է գործնականապէս ջախջախել տրամաբանութեանս յաւակնոտութիւնը, անբանանալ, այսինքն ինքզինքս վարժեցընել պարզ կերպով, միամիտօրէն, հլու համակերպումով մտածելու: Պէտք է որ տղայի մը վերածեմ անձս, եթէ կ'ուզեմ որ հաւատքը մուտք գտնէ սրտիս մէջ:

Աւելի մասնաւորապէս, մեր մէջ երեք հեշտախտութիւն կայ՝ որոնց դէմ հարկ է կուռիլ գործնականով եւ սովորութեամբ:

Ա) Մարմնոյ հեշտախտութիւնը, որուն դարմանը խստակեցութիւնն (ascétisme) է:

Բ) Հոգւոյ հեշտախտութիւնը: Սին հետաքրքրութեան, անվերապահ պատճառաբանութեան հարկ է հակադրել իրողութիւնները հլու կերպով ընդունելու սովորութիւնը, նոյն իսկ այն պահուն երբ միւր բանականութեան հակառակ կը թուին: Գիտութիւնը ինքնին իր գաղտնիքներն ունի, որոնց առջեւ ճշմարիտ գիտնականը կը խոնարհի: Մաթեմատիքական սկզբունքները պիտի լուծուէին եթէ մարդ զանոնք իր բանականութեամբը հասկնալ ուզէր: Պէտք է, անձնութեամբ եւ փիլիսոփայական հրաժարումով, իր միտքը բանալ գործնական փորձառութիւններու առջեւ:

Գ) Կամքի հեշտախտութիւնը: Ասիկա հպարտութիւնն է, բարձրութեան պէտքը, անկախութեան եւ անհնազանդութեան ընազգը: Պէտք է ոչնչացնել այս մոլութիւնը ինքզինքը խոնարհ ընելով, փոքրիկներուն, խեղճերուն եւ զրկուածներուն հետ ապրելով, ու անոնցմէ մէկը ըլլալով: Յիսուս-Քրիստոս աղքատութիւնը սիրած է:

3. Ներշնչումները. — Բանականութիւն եւ սովորութիւն միայն հոգին կը պատրաստեն: Լոյսը եւ ուժը Աստուծոյ կուգան: Խոնարհանքներով մենք մեզի կը նուիրենք ներշնչումներուն, որոնք միայն կը ներգործեն ճշմարիտ եւ փրկարար կերպով: Երբ մարդ կը փնտռէ եւ կը չար-

չարուի, Աստուած այնտեղ է, որ կը գրգռէ եւ կ'օրհնէ այս ցաւագին խնդրանքը: «Մի խիթարուէ՛, կ'ըսէ Յիսուս, — զիս չպիտի փնտռէիր, եթէ ինձ գտած ըլլայիր:»

Մի թէ այս կեանքին մէջ կ'ուզե՞նք ուրախութիւնը, սրբազորութիւնը: Կարելի չէ ասիկա. որովհետեւ, որքան ատեն որ կ'ապրինք մենք երկրի վրայ, մեր ապականած բնութիւնը կը տեւէ մեզի հետ իր հակումովը զէպի չարը եւ որ պէտք է սանձուի մեր ցաւագին ճիգերով: Միայն չարչարանքը ուրեմն: Ո՛չ, որովհետեւ մենք կը սկսինք Աստուծոյ հետ միաւորիլ, որ մեր բարիքն է: Մարդուն ճշմարիտ Աստուածը Յիսուս-Քրիստոսն է: Անով ապրելով, անոր էութեան կը մասնակցինք: Արդ իր էութիւնը կրկին է, մարդկութիւն եւ աստուածութիւն, տկարութիւն եւ մեծութիւն: Ու իրեն շնորհիւ դժբաղդութիւնը վերածընուածեան դործիքի վերածուած է: Խոստակեցութիւն եւ համեմատական ուրախութիւն, երկուքն ալ սերտօրէն իրարու կապուած, ահաւասիկ, այս աշխարհի մէջ, մարդկային կեանքի ընտիր եղանակը:



Ահա իր ընդհանուր գծերուն մէջ Փասկալի վարդապետութիւնը: Ի՞նչ է անոր նկարագիրը:

Շատեր պիտի ըսեն. ասիկա բնաւ փիլիսոփայութիւն չէ, միայն կեանքի մը արտայայտութիւնն է, չարչարուած հոգիի մը զանազան շարժումները: Բայց այդ տեսակ բացատրութիւն մը խիստ անբնական է, որովհետեւ անոր գաղափարները մեզի կը ներկայանան իբր լաւ կերպով կարգաւորուած գաղափարներու դրութիւն մը: Ուրիշներ պիտի ըսեն, պարզապէս ասիկա քրիստոնէական աստուածաբանութեանն եղբայրացուած կեանքի մէկ ըմբռնումն է: Ամբողջ այս դրութիւնը կրօնական է: — Սակայն մէկման կէտը, մարդուն փիլիսոփայական ուսումնասիրութիւնն է: Մայրէ ի ծայր Փասկալ կը դատէ եւ կ'ապացուցանէ տրամաբանական փաստերով:

Այդ վայրկեանէն իսկ ասիկա ճշմարիտ վարդապետութիւն մը չէ՞: — Բայց Փասկալի բնաստպութիւնը իսկապէս փիլիսոփայութիւնը կործանելու, կրօնքի եւ գիտութեան միջեւ այդ տեսութիւնը (speculation) աւերելու ծրագրին մէջ է, փիլիսոփայութիւն՝ որ կը յաւակնի յենուել միայն

բանականութեան վրայ, որպէս թէ բանականութիւնը սկզբունքներ ունենար, մինչ պարզապէս հետեւութեան գործիք մ'է անիկա:

Պիտի պնդեն եւ պիտի ըսեն.

Ի՞նչ բանով միադրական ձեւը կ'արգիլէ որպէսզի Փասկալի վարդապետութիւնը չլինի իրապէս իր խառնուածքին եւ կեանքին արտայայտութիւնը: Մեր գաղափարները երբէք տարբեր բաներ չեն: Մենք կ'ընենք մեր ձգտումներուն եւ գործերուն տեսութիւնը: Ամենէ գեղեցիկ տեսութիւնները միայն վերացականութեան տարուած իրողութիւններն են:

Կամ, եթէ աստուածաբանական մեկնաբանութեան դիմուի, պիտի ըսեն, բանականութիւնը իրաւամբ, հոս մեծ դեր մը կը խաղայ, բայց նա կը գործածուի ինքզինքը վերածելու, ապացուցանելու թէ ոչինչ է եւ թէ պէտք է Յայտնութեան առջեւ տեղի տայ:

Վերջապէս, ապացուցանելու համար որ Փասկալի գրութիւնը խիստ լաւ փիլիսոփայութիւն մ'է, պիտի պատճառաբանեն. ի՞նչ է էապէս աստուածաբանութիւնը, կրօնքը, հաւատքը: Անտարակոյս սքողուած ծանօթութիւն մը, իրերու համադրական եւ անորոշ հայեցողութիւն մը, մթին ըմբռնում մը, ինչպէս կ'ըսէ Լայպնից: Աստուածաբանական, իր եզրակացութիւններուն մէջ, Փասկալի վարդապետութիւնը, նոյն իսկ իր մասերով կը ներկայանայ փիլիսոփայութիւն մը, այսինքն իրերու բացատրութիւն մը որ, աւելի կատարելագործուած, բանական պիտի դառնայ:

Այս երեք կարծիքներէն ո՞րը ընտրել: Վիճակը վարանեցուցիչ է: Բայց միթէ՞ ստոյգ է որ մենք պարտաւորուած ըլլանք ընտրելու: Այս երեք կարծիքներէն իւրաքանչիւրը ինքզինքը միւսներէն բացարձակապէս անկախ կը ներկայացնէ: Գործողութիւնը, մտածումը, սիրարը, այս երեք բաները, իրական կեանքին մէջ, իրարու միթէ՞ չեն աջակցիր: Բայց իրողութիւն մ'է որ անոնք միեւնոյն ատեն գոյութիւն ունին եւ կը միակցին: Ու մասնաւորապէս չէ՞ն, միացած Փասկալի մէջ, որ ըսաւ, երեք միջոց կայ հաւատալու համար, բանականութիւնը, սովորութիւնը, ներշնչումը: Չփնտոենք ուրիմն թէ Փասկալի վարդապետութիւնը իր գործերուն բացարձակ արտայայ-

տութիւնը, փիլիսոփայութիւն մը կամ կրօնական վարդապետութիւն մ'է: Փասկալ մեզի կ'ըսէ, ոճին առթիւ հետեւեալ նշանաւոր խօսքը. «Նրբ բնական ոճը կը տեսնենք, բոլորովին կը հիանանք եւ կը սքանչանանք, որովհետեւ հեղինակ մը տեսնելու կը պատրաստուէինք եւ մարդ մը ահա կը գտնենք: » Այն ապաւորութիւնը որ իր հեղինակութիւնը, գործը կ'արտադրէ միթէ՞ նմանօրինակ չէ: Ոմանք մեզի սուրբ մը կը ծանուցանեն, ուրիշներ աստուածաբան մը. ու յետոյ փիլիսոփայ մը: Բայց մենք ուրիշ աւելի զարմանալի եւ սքանչելի բան մը կը գտնենք, քան այս վերացական կառարելութիւնները. էակ մը որուն մէջ կարողութեան մը ուժը ուրիշներու անբաւականութիւնը չի ներկայացներ, բայց որ կը հաշտեցնէ, հաւասարապէս գերազանց աստիճանի մը մէջ, կեանքը, մտածումը եւ սիրտը, որոնց միութիւնն է մարդուն էականութիւնը:

ՄՈԿ-ՊԵՏ

1901 Նոյեմբեր 4,

## 4

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԵՐ

(Ըստ պրոֆեսոր Պրուսի, Պարիզի Բժշկական  
Համալսարանից)

## II.

## ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԸ

Կերակուր են անուանում այն ամէն սնունդներին, որոնք ներմուծված մարտողական խողովակի մէջ, կարողանում են մարմնոյն կորուստներին զարմանելու, մի որ եւ է կզանակաւ:

Կատարեալ լինելու համար պէտք է որ սննդաուութիւնը աշխարհան լինի: Գործարանաւորութիւնը իր գնդերները կազմող քիմիական սարքերի շնորհիւ կատարում է մի աշխատութիւն, որով մարտողութեամբ լուծված, բարեխառնված եւ խմորված այս սննդական նիւթերին, վերածում է այն վիճակին ուր նոքա կարողանում են օգտակար կերպով ծառայել սննդաուութեան:

Սակայն եւ այնպէս մեր գնդերներին կորուստներին

զարմանելու համար հարկաւոր են թէ ծագումով եւ թէ բաղադրութեամբ զանազան կարգի նիւթեր. բաղմամբիւ սնունդներ պէտք են որ այս նպատակին աջակցեն: Չենք ուզի բնաւ ծանրանալ այն հոշակաւոր եւ այսօր հասարակութեան ծանօթ փորձերի վրայ, որոնք ապացուցել են ո՛չ միայն երրորդակ (ternaire) այլ եւ չորրորդակ բաղադրութիւնների աննշական տկարութիւնը երբ առանձնապէս են առնվում: (Երրորդակ մարմինները կազմված են թըթվածնից, ջրածնից եւ ածխածնից. չորրորդակ մարմինները պարունակում են թթուածին, ջրածին, ածխածին եւ բորակածին:)

Եթէ միտք եւ կաթը կատարեալ կերակուրներ համարված են, որովհետեւ այս երկուքն էլ պարունակում են բաղմամբիւ եւ զանազան տարրեր:

Սննդական սկզբունքներ համարվում են.

1. Չորրորդակ կամ բորակային նիւթեր,
2. Երրորդակ նիւթեր,
3. Հանքային նիւթեր:

ա) Չորրորդակ կամ բորակային նիւթեր. — Բորակային նիւթերը, առնաւորակ, լինում են բարդակազմ, հաստատուն, ոչ-բերեղանալի եւ չափազանց ենթակա, հակազդեցիկների, ոմանք անլուծելի, այլք լուծելի: Այս վերջինները անլուծելի են դառնում թանձրանալով ջրին մէջ ջերմութեան կամ թթուների ազդեցութեամբ. թէեւ չափազանց տարբեր յատկութիւններով նրանք ունեն սակայն գրեթէ նմանօրինակ բաղադրութիւն մը.

Ածխածին	(Carbone) .....	52 à 54
Ջրածին	(hydrogène).....	6 à 7
Թթուածին	(oxygène) .....	24 à 33
Բորակածին	(azote) .....	15 à 16

Մծումբ (souffre) եւ լուսածին (Phosphore) փոփոխուն, քիչ

[կարեւոր քանակութեամբ

— Բորակային նիւթերի գլխաւորներն են.

Թուլունների կամ ձկների ձուերու անլուծացայինը. կաթին կամ բուսական պակասայինը (caséine). Դնդերների, ոսկորների եւ բուսական նիւթերի մածվածները (myosine, gélatine, glutine).

բ) Երրորդակ նիւթեր. — Կենդանական մարմիններ՝ որ կազմված են ածխածնից, թթուածնից եւ ջրածնից: Սրանց են պատկանում ճարպային եւ ջրածխային մարմինները (corps gras et hydrocarbonés).

1. Ճարպային մարմիններ. — Այս անունը տրվում է մի կարգ բնական սկզբունքների որոնք համանման յատկանիշներ են ներկայացնում: Սոքա կամ լոյծ են կամ դիւրահալ, եւ ջրից աւելի թեթեւ, որի մէջ անլուծելի են: Չուին, արեան, ուղեղին եւ ձկնասերմին մէջ գո-

յու թիւն ունեն նոքա փոսփորային ճարպ, որ կոչվում է յէսիթին (lécithine)։

2. Զրածխային մարմիններ. — Գլխաւորներն են նա-  
շինը (amidon), շաքարները, խէժերը, եւ այլն, որոնք  
թվում է թէ կազմված են ածխածնի միութիւնից մի մաս-  
նիկ ջրի հետ, որը ինքնին բաղադրուած է ջրածնից եւ  
թթուածնից։

գ) Հանքային մարմիններ. — Սրանք են առհասարակ  
հետեւեալներ՝ այլ կամ կյօրիւր թր սօրիօւլ, կարպօսիւս թր շօ,  
ֆօսփօս թր պօթաս, թր սոս եւ թր շօ (chlorure de sodium,  
carbonate de chaux, phosphate de potasse, de soude et de  
chaux.)

Ընդհանուր կանոն, կերակուրները բաւական են տա-  
լու մեզի այն հանքային մարմինները, որոնք քիչ քա-  
նակութեամբ հարկաւոր են։ Գալով անոնց՝ որոնց շատ  
պէտք ունենք, հարկ է աւելացնել մեր կերակուրների  
վրայ, իբր օճիկնակ յիշենք կլօրիւր թը սօթիօմը կամ աղը։

ՀԱՆԿԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆ ԵՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԿՈՒՄՈՎ  
ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ

ա) Հանքային ծագումով կերակուրներ. — Խաղում են մի  
կարեւոր գեր, մարբեր, անտարակոյս, միւտ կերակուրների  
դերից, բայց միեւնոյն փամփայլ գիւրաւ հաստատելի։  
Մսքը՝ ք, իրաւամբ, աղանիներ կամ շունկը լուացմամբ  
իւր լուծելի աղերից բոլորովին զրկված մտով՝ մահը գալիս  
է քսան եւ երեսուն օրվայ ընթացքում։

բ) Բուռնակն ծագումով կերակուրներ. — Բոյսերը պա-  
րունակում են բորակածին, բայց գրեթէ միշտ փոքր քա-  
նակութեամբ. սակայն գտնվում են ոմանք, որ բաւական  
հարուստ են այդ նիւթով։ Կը յիշենք, իբր օճիկնակ, ցորենը  
եւ արմուխքը։ Մամանիչ անենք, աչնցնիլիս, որ ծագու-  
մով բուսական նիւթերը ներմուծում են մարմնոյն մէջ  
կրկին անգամ նուազ բորակածին քան նրանք որ կենդա-  
նիներից են յստաջ գտլիս, միեւնոյն քանակութեամբ  
առնվելով հանդերձ, ինչ որ ապացուցում է թէ մի կե-  
րակրի սննդական արժէքը չէ կարելի որոշել միայն իւր  
տարրական քիմիական բաղադրութեամբ։ Բայց ինչ որ  
մանաւանդ փնտալում է, ծագումով բուսական կերակրների  
մէջ, գրանք երրորդակ նիւթերն են, նաշինը, ճարպային  
մարմինները (իւղ, եւլն.) շաքարը եւ իր ածանցները, վեր-  
ջապէս ուրիշ մի քանի սկզբունքներ, որոնք երկրորդական  
նշանակութիւն ունեն։

Նաշինը հանդիպվում է մանաւանդ հատիկների մէջ.  
արմուխքներն են, ինչպէս գիտենք, որ նրանից ամենէ  
մեծ քանակութեամբ պարունակում են։ Դարձեալ, կարելի

է նրանից գտնել մեծ քանակութեամբ բազմաթիւ ընդա-  
բերների (légumineux) հատիկներին (բակլայ, լուբիա,  
սիսեռ, ոսպ, եւ այլն) եւ ուրիշ մի քանի տունկերի մէջ :  
Բուսալիւրը (fécule) կարող է գոյութիւն ունենալ արմատ-  
ների մէջ էլ (գետնախնձոր) :

Ճարպային մարմինները տարածվել են գրեթէ ամբողջ  
կենդանական աշխարհում, բայց փոփոխուն քանակութեամբ :  
Մանաւանդ կոսիլեթոնների (cotylédon-բլթակ) մէջ առատ կեր-  
պով են ամբարվել՝ ինչ ինչ պտուղներ նրանցից պարու-  
նակում են իրանց սկզբունքի մէջ (ձիթապտուղ) :

Շախարը հանդիպվում է մանաւանդ պտուղների մէջ եւ  
աւելի մասնաւորապէս այն պտուղներում, որոնք տկար  
կերպով թթու են : Վերջապէս բիւրեղացած շաքարը գտնու-  
վում է առատութեամբ ինչ ինչ բոյսերի (ստեպլին, չոդ-  
գամ, շաքարեղեգ, ճակնդեղ, եւ այլն) արմատների եւ  
ընձիւղների մէջ :

Բոյսերի բոլոր մասերը կարող են, պարագաների հա-  
մաձայն, սննդատուութեան ծառայել. գործածում են մա-  
նաւանդ հատիկները եւ պտուղները, բայց եւ այնպէս կե-  
րակրվում են նրանց արմատներով, տերեւներով, ընձիւղ-  
ներով, ծաղիկներով, եւ այլն :

Մի քիչ կարգաւորելու համար, ի դիւրութիւն կերա-  
կուրների նկարագրութեան, սնունդները բաժանում են  
արմախքների, ընդեղէնների եւ պտուղների : Այս բաժա-  
նումը, սակայն եւ այնպէս, որ եւ է գիտական նկարագիր  
չէ ներկայացնում :

Արևիք. — Գլխաւորներն են. ցորեն, հաճար, գարի,  
վարսակ, բրինձ եւ եգիպտացորեն, որից մեծ քանակու-  
թեամբ գործածում են Միացեալ-Նահանգներում : Կարելի է  
սրանց վրայ աւելացնել նաև սարագինը :

Այս սնունդները պարունակում են կէսից աւելի բու-  
սալիւր (matière amylicée) եւ մեծ քանակութեամբ բորա-  
կային նիւթ :

Մոխիրները պարունակում են պօքաւական աղեր եւ  
մեծ քանակութեամբ փոսփորական թթու :

Ընդեղէնք. — Ընդեղէն բառը, գործածական լեզուի մէջ,  
ցոյց է տալիս այն բոյսերին կամ բոյսերի զանազան մա-  
սերին որ կարողանում են սննդատուութեան ծառայել : Եր-  
բեմն բոյսը (սունկ) ամբողջովին են գործածում, բայց  
աւելի յաճախ բոյսի մի մասն է որ ծառայում է, արմատ-  
ները, տերեւները, ծաղիկները, պտուղները, ուռոյցները,  
(գետնախնձոր) եւ այլն :

Ընդեղէնների արմատները կամ կախեալ մասերը  
(appendices) յաճախ խիստ հարուստ են բուսալիւրով եւ  
անսահման դեր են կատարում բազմաթիւ ժողովուրդների  
սննդատուութեան մէջ : Եւրոպայում ընդհանրական գործա-

ծուխիւն ունեն, գետնախնձորը, չողգամը, կարմիր բողկը, ճակնդեղը, սալսիֆին, ստեպղինը, սեւ դետնախընձորը (topinambour), գոգին (սեւարմատ, scorsonaire) :

Խիստ կարեւոր է ճանաչել այն ընդեղէններին որ նաչի՛ն չեն պարունակում բնաւ եւ որ կարող են օգտակար կերպով կերարկլել մի կարգ հիւանդութիւնների (շաքարախտ, սոնքախտութիւն) ժամանակ : Սոքա կն հնգարը (մառուլ-laitue), եղերդը (րատիքիա), օգեյը, սպանախը, կանխալը (էնկիւնար), պրասը (բուսա) : Սպիտակ սոխը, կաշախը եւ ծաղիկակաղամբը քիչ քանակութեամբ կամ հազիւ նաչի՛ի հետքեր պարունակում են :

Մի լաւ սնդառութիւն հարկաւորապէս պէտք է ընդեղէնների չափաւոր գործածութեամբ լինի : Ընկերացած մսին եւ հացին, այս վերջինների մարսողութիւնը դիւրացնում են՝ իրանց թթուային հիւթերով. գործում են իբր գրգռիչ իրանց պարունակած ծծմբային բաղադրութիւններով եւ ուրիշ համեղ նիւթերով : Վերջապէս, իրանց ջրային հարստութեամբ, իրանց մնացորդների կոյտով, կազմում են նոքա մի սննդական մեծածաւալ զանգուած (bol), որ երկու տեսակէտից օգտակար մի պայման է լրացնում. նախ որովհետեւ նա կռում է պնդութեան դէմ՝ աղիքներին ընդլայնելով, որ կծկվում է այնքան լաւ որքան լաւ է լեցուել, եւ յետոյ հանդարտեցնելով, իւր ծաւալին իսկ շնորհիւ, քաղցի զգացողութիւնը ուժեղ անձրի մէջ որ վարէլել են աշխատանքի, բայց օդի եւ փղջկական կեանքի :

Մի ուրիշ կողմից, բայարձակապէս բոյսերի վրայ հիմնուած սննդառութիւն մը տկարացուցիչ է, որոշ չափով, ընդդիմանալով մարսողութեան. դա միայն կարող է յարմար լինել այնպիսի անհատների որ օժտուած են զօրեղ առողջութեամբ եւ որ վարժված են երկար թվականներից մի կոչտ սննդառութեան :

Պսուղներ. — Այս բառը, ինչպէս ընդեղէն բառը, վերաբերվում է գործածական լեզուին : Արմատիքների եւ ընդեղէնների պատգմները այս բառով չեն բացատրվում :

Պատուղները տակաւին նուազ ընդունակ են, քան ընդեղէնները, մի լաւ սննդառութեան հիմունքը կազմելու. բայց, իրանց թթու կամ շաքարային սկզբունքներով, իրանց համեմների համովը, յաճախ խիստ ախորժելի, նոքա մարսողական գրգռիչներ են. հանդարտեցնում են ծարաւը եւ կարողանում են լուծողական արդիւնքների հասնել :

զ) Կենդանական ծագումով կերակուրներ. — Կենդանական աշխարհից ձեռք բերված կերակուրները բորակով շատ հարուստ են : Այնպէս որ նոքա համարուած են գլխաւոր հիմքը մի հիւթեղ սննդառութեան : Պարունակում են գարձեալ մի քանակութիւն ճարպ խիստ փոփոխական :

տեսակների համաձայն, եւ յաճախ չափազանց շատ: Այդ կարգի կերակուրների մէջ գտնվում են, վերջապէս, արտահանելի նիւթեր եւ համեմատական արտադրութիւններ որոնք տալիս են իւրաքանչիւր տեսակ կենդանու մօխն մի բոլորովին մասնաւոր համ:

Ստնաւորները եւ թռչունները մեզ մատակարարում են այն ինչ որ անուանում ենք միս:

Մսերը կը լինեն կարմիր (եղ ոչխար), սպիտակ (հաւ, հնդկահաւ, ազաւնի), սև (նապաստակ, կինձ, այծհամ):

**ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ**

Այլաւ. — Ալիւրը կրնայ պատրաստվիլ այն ամեն արմաթքների հատիկներով, որոնց վրայ խօսեցինք, բայց մենք կը զբաղվենք միայն ցորենի ալիւրով:

Ս.մէն ալիւր, առհասարակ, նաչիճի, գլխօրնի, թեկսռիկի շաքարի, ճարպի եւ հանքային հաստատուն մարմինների մի խառնուրդ է:

Գիտենք որ, առաջին կարգի ալիւրի պատրաստութեան մէջ, ցորենի թեփը բոլորովին զտված է: Ինչ ինչ հեղինակներ նկատել են թէ միթէ՞ սննդական տեսակէտով այդ դէպքում մի կորուստ չէ պատահում: Ստոյգ է, միեւնոյն ատեն թէ զուտ ալիւրից պատրաստված հացը խիստ դիւրամարս է:

Հաց. — Արմաթքների ալիւրին եփման արտադրութիւնը, ջրի հետ խառնելուց եւ աղի ու թթիւների յաւելումից վերջ, կազմում է հացը:

Եփման պահուն առիտ կառայօնիկը (բնածխային թթու, կազ) դուրս է գալիս. եթէ գործածված ալիւրը բաւականաչափ գլխօրն (ձուլ) պարունակում է, կազը արտադրում է խմորին վեր բարձրացնելով եւ տալիս է լաւ պատրաստված եւ սննդարար հաց:

Ուրեմն բոլոր ալիւրները կարող չեն լաւ տեսակի հաց տալ: Բրինձի ալիւրը. օրինակի համար, խիստ քիչ գլխատրն պարունակում է, ենթարկվելու հարկաւոր խմորումների (fermentation) հացագործութեան համար:

Խմորումը անհրաժեշտ է հացի պատրաստութեան համար. եւ աւելացնում են թթիւների (մայէ) կոյսին ալիւր եւ ջուր եւ որ պահում են 20° ից 25°, բարեխառնութեան մէջ:

Թթիւնը (մակարդ-մայէ-levain), թրված ալիւրին միանում է, ներգործում է նաչիճին եւ շաքարին վրայ եւ զանոնք վերածում է ալկիօլի եւ առիտ կառայօնիկի, որ ձգտում է դուրս գնալ. գլխօրնը նրան արգելում է եւ կազային բաղադրութիւնները՝ խմորակոյտը վեր բարձրացնելով, այնտեղ կազմում են փոքր ուռոյցներ:

Պատրաստված հացերին փուռ են փոխադրում անմիջապէս, գրեթէ 260 աստիճան բարեխառնութեան մէջ: Կեղեւը կազմվում է 210° բարեխառնութեան մէջ, մինչ հացի-միջուկը հազիւ ստանում է 100° ջերմութիւն:

Հացի զանազան տեսակներ կան որոնք զանց կ'անհնք այստեղ յիշատակել:

Միւր. — Միւր կազմված է մանաւանդ որոճացողների գնդերային մասերից եւ մտախառնանոցի մի ասեղով հասկացվում է ընդհանրապէս եզն եւ ոչխարը:

Այն գնդերային միւր որ մենք ուտում ենք մի բարդ սնունդ է որ գլխաւորապէս պարունակում է թանձրացեալ գնդերահիւթ (musculine): Այս հիւթը լուծվում է աւիս կորնիսրիֆի մէջ, ինչ որ ապացուցում է թէ ինչո՞ւ նա մարսվում է դիւրութեամբ (ստամոքսից արաւթորուած յոյզը պարունակում է այդ թթուէն):

Մի մեծ սխալ է կարծել թէ մահիւթը մսին ամենէ սննդարար մասն է կազմում: Գնդերական մսին հաստատուն մասն է, անլուծելի ջրում՝ բայց լուծելի ստամոքսային աղերի մէջ, որ հարկ է ուտել եւ մարսել մի ամբողջական օրուտ քաղելու համար մսից:

Նկատուած իբր կերակուր, միւր ներկայացնում է այնպիսի մեծամեծ օգուտներ որ պէտք է նրան նայել ամեն տեսակ սննդառութիւնների ամենից հիւթեղը:

Կարելի է խորովել միւր կրակի վերայ (խորտիկ), եփել ջրի մէջ (մսաջուր) եւ կամ ջրաչոգիի մէջ:

Մսաջուրը խիստ ստոր է խորովածից իբր սննդական հիւթ. միւր, իրաւամբ, խորապէս բարեփոխուած է եռացեալ ջրի հետ շփվելով որ լուծում է հաստատուն մասեր: Այս այլազան հիւթերի միացումն է որ կազմում է մսաջուրը: Այն միւր որ մնում է փոքր ի շատ անհամ է եւ անախորժ, բայց նա է որ գրեթէ ամբողջովին պարունակում է դեղերահիւթը, այսինքն իրապէս սննդարար մասը: Մսաջուրը ուրեմն ուժեղ ստամոքսների համար բաւական սննդարար մի կերակուր է, լինելով սակայն միշտ առաւել դիւրամարս քան խորովածը:

Այն հիւթերը որ լուծված են մսաջուրի մէջ չեն պատկանում պլաստիկ (plastique) հիւթերին: Մսաջուրը սնունդ մը չէ, այլ մարտողական գործարանների գրգռիչ մը. ընձեռում է ստամոքսի գեղձերին որ արաւթորեն եւ կազմում է մի նախաբան, խիստ յարմար, մի լուրջ ճաշի: Միայն ուրեմն այն պահուն օգտակար է, երբ ախորժելի է:

Մսային մուգ (Extraits de viande). — Մսից մզուած Լիէրիգի դոյացութիւնների արժէքը չափազանցրած են: Ո՛չ միայն սրանք կերակուրներ չեն, այլ երբ ծծվում են մի քիչ շատ քանակութեամբ, կազմում մի ճշմարիտ թոյն:

Այս հանգամանքը հետեւանք է, խիստ հաւանականօ

րէն, պօտասական զանազան աղերի որ պարունակում է մային մուգը:

Թէյ եւ սուրճ. — Մեծ նմանութիւններ են ներկայացնում: Թէյի համեմը մի տարրական իւղ է, որ կոչվում է րեյին: Սուրճը պարունակում է մի գոյացութիւն դարձեալ, կափեին, որ փոքրիկ քանակութեամբ արտադրում է կենդանական եւ մանաւանդ մտաւորական գործառնութեանց համար շնչատանական (արեան)մի օգտակար գրգռում: Երբ մեծ քանակութեամբ առնուին արտադրում են տրովփումներ, տեսութեան եւ լողութեան անկանոնութիւններ եւ նոյն իսկ գոռանցանք: Սուրճը եւ թէյը մեծ քանակութեամբ երբեմն նոյն իսկ առաջացնում են ջղային խանգարում: Յաճախ թէյը խարդախում են զանազան տերեւներ աւելացնելով նրա մէջ: Առնում են սուրճին ընդհանրապէս խարդախեալ հատիկներ որ ներկել են: Թրջում են բոհրած (torréfié) սուրճը. զայն ծանրացնելու համար վերջապէս շինում են կաւով սուրճի հատիկներ, յետոյ նրանք ներկում են, աւելացնելով սուրճի մի համեմ:

Շօխոյա. — Ստացվում է կակաօից (ամերիկեան նուշ), նրա հատիկը մանրելով եւ չաքարի հետ խառնելով: Կակաօն գրեթէ մի կատարեալ սնունդ է, չաքարային նիւթը պակասվում է իրան, ինչ որ աւելացնելով ամբողջացնում են: Շօխոյան դժուարամարս է, թէեւ ախորժիկի, մանաւանդ այն ատեն երբ խարդախվում է:

Կարկանդակներ. — Յաճախ խարդախվում են, կարպի տեղ վազրիւն դործածելով. որ կարող է նրա տեղը բռնել առանց կծվճնալու, լինելով միեւնոյն ատեն էփան. այդ ատեն կարկանդակները դժուարատար են:

Շաֆարեղեկ. — Այն գոյներով, որոնցմով գունաւորում են չաքարներին, յաճախ ձեռք են բերվում վասնգաւոր եւ նոյն իսկ թունաւոր արտադրութիւններից: Արդելված են հետեւեալ գունաւորիչների դործածութիւնը,

Հանքային գունաւորիչներ. պղնձի, կապարի, զառիկի, սնդիկի եւ այլն աղերից ստացված:

Կենդանական գունաւորիչներ. հնդկախէփից, ալիօնիից (aconit գափլան օթու.) եւ քարածուխի անոնցներից հանված:

Հաւեւներ. — Գլխաւորներն են պղպեղը, հոտաւէտ խոտերէն ոմանք, քացալը, եւ այլն: Կրգոում են ախորժակը եւ հետեւաբար օգտակար են: Մեծաքանակ եւ շարունակական դործածութիւնը սակայն իւր անպատեհութիւնները ունենալուց չը դադրի:

(Յաջորդ անգամ կը խօսենք կաթի յասկութիւնների վրայ եւ կ'անցնինք սննդառական ընդհանուր կանոններին):

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

Պարիզ 11 դեկտեմբեր 1901

## ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տե՛ս Հաւնաշարան, էջ 24 թիւ 1)

5. Ջերմի դեմ պայքար. — Այս պայքարին կարեւորութիւնը ամեն կողմ ըմբռնուած է. բայց գործածուելիք միջոցները սակաւին յստակ կերպով որոշուած չեն: Շատեր մեխաներուն (moustique) ոչնչացումը կ'առաջարկեն, ուրիշներ ջերմի վարակիչը սպաննել կը մտածեն մարդուն մէջ. գարձիակ, առաջարկուած է հիւանդներու առանձնացումը:

Միջատներու խայթիւն դէմ պաշտպանումը սքանչելի եղանակ մ'է անտարակոյս. բայց ջերմի ամենէ շատ ենթակայ մարդիկ բոլորովին անտարբեր են այդ մասին, ըլլալով առհասարակ քիչ քաղաքակրթուած: Միւս կողմէ՝ մեխաներու դէմ պաշտպանութեան եղանակը կարեւոր միջոց մը նկատուած չէ նոյն իսկ զարգացած անձերու մէջ:

Քօխ առաջինը եղաւ որ առաջարկեց ջերմը ոչնչացնել ֆիլիքի գործածութեամբ: Այս միջոցն ալ լաւ համակրութիւն չի գտաւ՝ ինչպէս միջատներու դէմ պայքարը, նկատի առնելով դեղին գինը եւ զայն գործածելու սովորութիւնները: Ուրիշ պատճառաբանութիւն մ'ալ կ'ըլլուի ֆիլիքի դէմ: Իրօք եթէ քիւնինը արագօրէն կ'անհետացնէ ջերմը, հաստատուած է նաեւ որ զայն երկար ատեն գործածող ջերմաւորները ունին իրենց արեան մէջ այդ ախտին վարակիչ ձեւերէն (formes sexuées): Քօխ մտածած է նաեւ թէ այդ ձեւերը կարելի է ոչնչացնել առաքնիֆով: Թերեւս ֆօսֆօրն ալ կարելի ըլլայ գործածել:

Ջերմի դարմանին մէջ բռնուելիք ուղին կրնայ ըլլալ ուրեմն հետեւեալը. ջերմ ստացողը պէտք է միշտ քիւնին առնէ իրեն համար եւ առաքնիֆ՝ իբր նախզուչական, անոնք որ կ'ապրին անոր հետ: Գ.

6. Վայրենիներու վիրաբուժութիւնը. — Բժշկական թերթի մը թղթակիցը կը գրէ թէ՝ ինչպէս Քաֆոաստանի մէջ կը դարմանեն վէրքերը: Քաֆո մը գիշերապահ զինուորէ մը կը վիրաւորուի՝ սխալմամբ կռուարար մը կարծուելով: Գնդակը կը թափանցէ աջակողմեան ութերորդ միջակողէն եւ ձախակողմեան վերջին կիսակողէն (fausse côte) դուրս կ'ելլէ, հինգ սանթիմետր հեռաւորութեամբ ողնայարային փուշերէն, լեարդը եւ հաւանականաբար առաջին շունկոտ ողնը ծակելէ յետոյ: Քաֆոը բաւական ատեն քալելէ վերջ կը հիւրասիրուի իր բարեկամներէն, որ զայն կը փո-

խապրին ձեռքի կառքով մը հինգ քիլոմետր հեռու վայր մը տեղական բժշկի մը ցոյց տալու համար: Այս վերջինը անմիջապէս կիրարկեց իր մասնաւոր ծանօթութիւնները, կ'առնէ կովու եղջիւր մը, որ խողովակի վերածուած էր անոր գոց ծայրին կտրուած ըլլալովը: Պզտիկ կողմը կը դնէ վերքին մէկ ծակին մէջ ու լայն կողմէն բժիշկը կը սկսի փչել իր բոլոր ուժովը, վանելու համար վերքին մէջէն հոն գտնուող անոթաթիւնները: Ասիկա գոհացուցիչ կերպով մը ընելէ վերջ, կը հաւաքէ կովու թրիք (bouse) եւ անով կը շինէ երկու քարափրակ (լափա-cataplasme), զոր կը փակցնէ վերքին երկու ծակերուն վրայ: Գործողութիւնը աւարտած էր: Հիւանդը չորս օր վերջը քննուեցաւ անզլիքացի բժշկէ մը որ վերքին երկու ծակերը կաւով կամ նմանօրինակ նիւթով մը ճշգրտօրէն խցուած գտաւ: Հիւանդին վիճակը լաւ էր: Լեարդին շուրջը տակաւին քիչ մը ցաւոտ էր, բայց բարեխառնութիւնը անփոփոխ էր: Անզլիքացի բժիշկը իր քաֆո պաշտօնակցին վերապատանքը հանեց եւ հակաանխուած մը դրաւ անոր տեղ: Երկու օր յետոյ վերքը թարախ կը բռնէր, — ու այս բանը սպիտակներու բժշկական տգիտութեանը վերագրուեցաւ, — այդ դէպքէն տասը օր յետոյ վիրաւորը արդէն կը քակէր իր վերքը բուժուած էր: Այս պարագային դժուար էր կովու թրիքին եւ հակաանխուածին խաղացած գերբըր առանձնապէս բնորոշել: Բայց ինչ որ ստոյգ է Գաֆոնիւրու վերքերը սքանչելի կերպով կը բուժուին: Միւս կողմէ կովու թրիքը խիստ զնահատուած է Գաֆոնիւրէն. զայն կը դործածեն իրենց հիւղակներու գետինը ծածկելու համար, իրենց ծխախոտին կը խառնեն համբաւելցնելու համար եւ վերջապէս վերքերնին պատատելու համար:

7. Օդին եւ ծովային ջուրին միջոցաբանակալ վերբուժուելը. — Օդը յարաբերապէս աւելի քիչ բուսականիկ (bactérie) կը պարունակէ, եւ յաճախ բնաւ, քան ջուրը, հողը, անձրեւէ վերջ օդին մէջ գտնուող սերմերու քանակը չափազանց կը նւազի: Ախաւաւոր սերմերը մանաւանդ, բազմաթիւ հողին վրայ, գրեթէ հազուադիւրս են օդին մէջ: Մոլորն ջուրը աւելի բուսականիկ կը պարունակէ իր եզերքներուն մօտ քան թէ բացերը, ու սերմնային այս նուազութիւնը կը յայտնուի եզերքէն քանի մը քիլոմետր հեռաւորութեան մէջ, առանց շեշտուելու աւելի հեռունները:

R. S.

8. Արեակն խանգարուով բարձրութիւններու (altitude) մեջ. — Մինչեւ հիմա որ եւ է գունացուցիչ բացատրութիւն չէ տրուած արեան այն փոփոխութիւններու վրայ որոնք առջ կուզան բարձր վայրերու մէջ ապրելու ժամանակ: Կ'ենթադրեն թէ երբ բազկերակին զարկերը կ'արագանան, ատիկա արդիւնք է մթնոլորտական ճնշման ակար ըլլալուն, կամ, աւելի լաւ, երբ արեան կարմիր բջիջները կը բազմանան, որովհետեւ դնդերներուն անհրաժեշտ թթուածինը անկարելի պիտի ըլլար մատակարարել. այս վերջինին նուազման պահուն:

Պ. Ժօնն Ուայնգէլ մատնանիչ կ'ընէ թէ այս ենթադրութիւնները առարկու թիւններու առիթ կ'ուսանու Առաջին, կարմիր բջիջներու եւեկոյպինին (hemoglobine) թթուածինի ծծելը անկախ երեւոյթ մ'է, ամեն մասնակի ճնշումէ: Երկրորդ երբէք յայտնի բան մը չէ որ արեան կարմիր բջիջներու աճում մը հարկաւոր ըլլայ, որոշուած չափով թթուածին մատակարարել կարենալու համար. որովհետեւ, ինչպէս Փօլ Պէրթ զայդ ապացուցած է (\*), կենդանի մը ս զառած թթուածինին (օքսիժէն) քանակը նոյնը կը մնայ եթէ անոր մենդառութիւնը կիսով չափ ակարանայ եւ եթէ նոյնիսկ անոր զուտ թթուածին արուի:

Սպիտակ ձաղարներու վրայ կատարուած փորձի մը ժամանակ զիպուածաբար նկատուած է այն իրողութիւնը թէ բարեխառնութեան ծայրայեղ փոփոխութիւնները կ'արտադրեն միեւնոյն երեւոյթները, ինչպէս բարձրութիւնները: Յուրաքանչեւ կը թուի նկատուել իբր կարեւոր ազդակ մը՝ բացատրելու համար բարձր վայրերու մէջ արեան կրած փոփոխութիւնները, ու ասիկա միակ պատճառը չէ եւ չի կրնար ըլլալ անտարակոյս:

ԳԻՏԱԿԱՆ ՅՈՒՅԵԼԵԱՆ

Մ. ՊԵՌԹՐԼՈՒ ՅԻՄԵԱՄԵԱԿԸ ՓԱՐԻՋԻ ՍՈՒՊՕՆԻՆ ՄԷՋ

Փարիզի Սօսյօնին մեծ ամփիթատրոնին մէջ, 1901 նոյեմբեր 24ին տօնուեցաւ պ. Մառսըլէն Պէնթըլօի յիսնամեակը, որ բացի իր քիմիագէտի հռչակէն, կը միացնէր իր անձին մէջ Գօլէժ տը Ֆրանսի փրօֆէսօրի, Գիտութեանց Ակադեմիայի քարտուղարութեան եւ Ֆրանսական Ակադեմիայի միայուն անդամի տիտղոսները: Հանրապետութեան նախագահը ընծայեց պ. Պէնթըլօի, մեծ քիմիագէտին, պատկերով քանդակուած ոսկեայ պատուանշանը ի պատիւ անոր գիտական յիսնամեակին:

Գիտութեանց Համալսարանի վարչապետին (Doyen), պ. Տառպուի նախագահութեամբ եւ միեւնոյն համալսարանի փրօֆէսօր պ. Հանրի Մուսսոնի քարտուղարութեամբ՝ տարիէ մը ի վեր կազմուած էր յանձնախումբ մը որ Ֆրանսացի եւ օտար գիտնականներու համակրական ստորագրութիւնները կը հաւաքէր պատուելու համար այն անձը, որուն գիտութիւնը կը պարտի ա'յնքան հոյակապ գիւտեր: Այս պատկառարկու հանդէսին կը նախագահէր Ֆրանսայի Նախագահը, եւ հոն ներկայ կը գտնուէին նախարարներէն շատերը, Ֆուստատկան Փառլըմանի երկու նախագահները, Ֆրանսական գիտական հաստատութիւններու ներկայացուցիչները, բազմաթիւ օտար գիտնականներ, եւ այլն:

(\* Այս նիւթին վրայ կարգալ Փօլ-Պէրթի կարծիքները, Հաւաքատանի Ա. շրջանին, 1 թիւին Անճանարուքիւն յօդուածին (էջ 42) վերջինմասին մէջ: Խ. Մ.

Արտասանուեցան բազմաթիւ ճառեր, կարգացուեցան շատ մը օտար երկիրներէ հասած, ուղերձներ, ու կենդանաբանական Ընկերութիւնը, պ. Պուշարի միջոցով, յանձնեց երկու տարի առաջ կատարած իր յիսնամեակին առիթով պատրաստել տուած շքանշանին առաջին օրինակը պ. Պէնթըլօի: Մասնաւոր ատենախօսներն եղան Ֆրանս. Կրթական գործոց նախարարը, պ. Տաուպու, պ. Փուքէ (Գիտութեանց Ա. կադեմիայի նախագահ), պ. Մուստոն, պ. Կասթոն Փառի (Ա. կադեմիական եւ վարչապետ Գըլէժ տը Ֆրանսի), պ. Կիլօն (նախագահ բժշկ. Ա. կադեմիայի), պ. Շօլօ (Ֆրանսայի Երկրագործական Ընկերութեան նախագահ), եւ այլն:

Պ. Պէնթըլօ այն գիտնականներէն է որոնք դարերու հազուագիւտ ծնունդներու շարքին մէջ կը դասուին: Իր գիտական մեծութիւնը քիմիական խնդիրներու, դժուարին խնդիրներու, լուծման մէջ կը կայանայ. ոչ միայն յամառ աշխատող մ'էր, այլ եւ ինքնավստահ եւ յարատեւ կորով մը կը գնէր իր բոլոր խուզարկութիւններուն մէջ, կարգաւորելով իր քննութիւնները այնպիսի այլազանութեամբ մը՝ որոնք արդէն իսկ բաւական էին բացատրելու իր մէջ գիտնականին տաղանդաւոր միտքը, առանց իր ձեռք բերած արդէնքներու սքանչացումէն գնահատանքի մը թելագրութեան:

Գիմիան, որ իր կատարելագործութեամբ այնքան հիմնական կարեւոր դեր մը խաղցաւ վերջին քաղաքակրթութեան մէջ, Պէնթըլօյով անստգիւտ ներկայացուցիչ մը ունեցաւ, որ գիտութիւններու այդ մոզական ճիւղին անարեկիչ անդունդներուն վրայ գիտակցութեան լոյսը սփռեց, իր հազարաւոր անդեկագիրներով եւ քառասունի մօտ հատորներով: Գիմիական համագրութեան, ջերմութեան, ինչպէս նաեւ պայթուցիկ նիւթերու վրայ ամենէ սքանչելի եւ կատարեալ տեսութիւնները բրտած եւ օրէնքները հաստատած է:

Վերջացնելէ առաջ գեաեղենք հոս պ. Տաուպուի Պէնթըլօի ուղղած հետեւեալ խօսքերը.

«... Ձեր ամբողջ կեանքը մեթոտով գործածուած է իրականացնելու համար ձեր մէջ մարդկային կարողութիւններու ամբողջական կատարելագործում մը, որ նպատակն ու իտէալը եղած է ժԹՊդ դարու փիլիսոփաներուն, որոնց դուք զձեզ յայտարարեցիք աշակերտ եւ հիացող: Ձեր գործերով ու գրութիւններով մեծ ծառայութիւն մատուցիք դաստիարակութեան, որուն արժէքը, այսպէս խօսելով, ամեն օր կ'աւելնայ: Գիտնականի հեղինակութեամբ եւ իմաստասէրի արժանանալով իր քաղաքակրթութեամբ զուրկ լինելու վտանգներէ զայն անհրաժեշտ եւ սեղմ յարաբերութիւնները, — գոր ոչ մէկ ազգ առանց մասնագետելու կրնայ ուրանալ, — որոնք կը միաձուլեն իր բոլոր ձեւերուն մէջ բարձր դարգացման, ճարտարագործութեան, հասարակաց բարքերուն եւ ազգային դաստիարակութեան յառաջգիմութիւնները:

«Իցիւ թէ կարենայիք միշտ աշխատել եւ երկար ատեն բարգաւաճել, շարունակելով մեր նշանաւոր քիմիագէտներու շղթան, Լավուզիէի, Կէյ-էլիսաքի, Տիւմայի, Վիւրձի, Տըվիլի, Փասթէօի: Իցիւ թէ կարենայիք, դարձեալ, երկար ատեն մեր արգասաւոր տոճին մէջ՝ նոր մրցակիցներ ստեղծելու առիթը տալու այն մեծ մարդոյ, որոնց շարքին մէջ զձեզ գասելու հպարտութիւնը ունինք այսօր:»

Յառաջիկային կը խոստանանք նոյնութեամբ Հաւախարանի քննիչ-ցողներուն ալ պ. Մ. Պէնթըլօի գեղեցիկ պատասխան-ատենաբանութիւնը, իրեն ուղղուած գնահատական խօսքերուն:

### Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ

Մխիթարեաններու կարեւորագոյն եւ ամբողջ ազգէն սիրուած այս Դէմքին անհետացումը կը տխրերգէ «Բագմավէպ»ի ղեկտեմբեր 1ի թիւը, իր առաջին սիւնակներուն մէջ: Մնած 1820ին՝ տարւոյս նոյնմբեր 22ին՝ բանասէր-պատմաբան եւ անդուգական բանաստեղծ, Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, իր մահուամբ կամայացնէ ղեղեցիկ ուսումնասիրութիւններու ասպարէզ մը, ուր փայլեցաւ եղական կարողութիւններով եւ ուր չունեցաւ իր կենդանութեանը որ եւ է կարեւոր մրցակից: Յարգա՛նք Մեծ-Նահապետին Յիշատակին ու իր անկանգնելի կորուստին առթիւ խորին ցաւակցութիւններ Մխիթարեան Հայրերու:

### ՎԵՐՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԳՐԻՔԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Ընդհանուր տեսութիւն. — Նախորդ ամսուան մէջ եւս գիտական որ եւ է լուրջ հրատարակութիւն չունեցանք: Թէեւ ասիկա մեզի զարմացնող նորութիւն մը չէ: Ու գիտական այս աղքատութիւնը միթէ՞ ապացոյց մը չէ որ մեր մտաւորական ընդհանուր զարգացումը աւելի գրական եղած է, ու մեր մատենագիրները սակայդաբար իրենց մտքի թեղադրանքին համակերպած են:

Գրիքեր. — Գիտական հոս ունեցող միակ հրատարակութիւնը, զոր ստացանք, Հ. Ս. Երեմեանի (խմբագիր Բաղնալիկայի) Մանուկ Պոնտացոց «Մարդակազմութիւն» գրքին մէկ քննական ուսումնասիրութիւնն է: Այդ գրքոյիին մէջ աչքի կը զարնէ սա ճշմարտութիւնը թէ հայ լեզուով գիտական նախափորձերը հարիւրաւոր տարիներ առաջ եւս այնքան զգուշացուցիկներու բաղնած են եղեր որքան այսօր ասիական կը բաղնին, գիտական բառերու գործածութեան մէջ: Մանուկ Պոնտացոց Մարդակազմութիւնը, որ հաւանորէն գրուած է 1757ին, կը թուի, քիչ յաւելումով, հետեւողութիւն մը ըլլալ Ամիրգոյլաթայ բժշկաբանին, որ թարգմանուած է իր կարգին 1469ին: Այդ գրքեր առաջ լոյս տեսած հատորին մէջ գործածուած կը գտնենք, բացի արար, լատին, յոյն բառերէ,

այսօր իսկ գիտութեան մէջ գործածուող ֆրանսերէն բառեր, ինչպէս քրիստալ, մինէրալ, էսպրի, էլիքսիր (cristal, minéral, esprit, élixir): Օտար բառեր, գիտականները մանաւանդ, նոյնութեամբ գործածելն ու ընդհանրացնելը պէտք է ուրեմն, անցած դարերու իսկ փորձովը, սկզբունքով ընդունին. ի՞նչ որ հարկաւոր է հիմայտակ ուղի») մը զծելն է այդ, որուն պէտք է հետեւիլ գիտական հրատարակութիւններու մէջ եւ զոր պէտք է ներմուծել մեր գիտական սաղմային դաստիարակութեանը մէջ:

— Ուրիշ կարեւոր հրատարակութիւն մը, զոր ունինք մեր առջեւ, պ. Աստմ Եարճանեանի 48 էջերէ բաղկացած հատորն է: Մեր գրական հորիզոնին վրայ իր ամբողջութեամբ (թէ պարունակութեամբ եւ թէ ձևով) նորութիւն մ'է ատ՝ ո՛չ թէ որովհետեւ վայրենի ու առնական պատկերներով մարդկային ամենէ վեհանձն զգացումները իրենց երեւակայական բարձրութենէն ալ անդին շօշափելով՝ բանաստեղծական

\*) Այս մասին կարգալ հանգէսիս հմբագրապետին «Օտար բառերու գործածութիւնը հայ լեզուին մէջ» իմաստալից յօդուածը (տե՛ս Հանրայարան, Ա. Շրջան՝ էջ 457): Ծ. Ա.

տարբեր ձեւ մը կը բերէ մեզի, — ձեւ մը որ բոլորովին ազատագրուած է սէքն ու սիրունիքն, արշալոյսն ու վերջալոյսը, ծաղիկն ու փուշը, խոխոջն ու դայլայլը . . . երգող մեր հինով խարսխուած բանաստեղծներու հեշտախտութենէն, — այլ որովհետեւ ձգտումի գրականութիւնն մը կ'իրականացնէ, որ ինքնին յառաջդիմական շարժում մ'է եւ դէպի այդ լաւագոյն միտում մը :

Մտնուլ . — Ամերիկայի մէջ սկսած է հրատարակուել Լոյս անունով գիտական կիսամեայ փոքրածաւալ հանդէս մը, որ իր կարգին, ապացոյց մըն է՝ թէ քանի որ գիտութեամբ պիտի կրնան ապրիլ այսուհետեւ ժողովուրդները, պէտք է որ Հայն ալ գիտութիւն սորվի ապրիլ կարենալու համար : Մեզի հասած երեք առաջին համարները օգտակար ըլլալու խղճամիտ ճիգ մը կ'արտացոլեն . ճիգ մը, որ պիտի կողապարտի ժամանակին ու փորձառութեան հետ, պէտք է ուժ տալ այդ հանդէսին՝ զոր ուրախ ենք մատնանիշ ընելու, յարատեւելու եւ արդիւնաւորելու համար :

— Զ. Թ. Թոռն Հակոբեւ Անտուէայի մէջ «Գրութեանց վրայ Դիտողութիւն» յօդուածով մը քննաբեր խրատներէ յետո՛ւ լեզի մաղձ մը կը թափէ հայ հրապարակագրութեան վրայ առ հասարակ, եւ յետոյ այն «լրագրաց» որոնց մէջ կարգացած է եղեր «առթիւ երկդարեան հիմնարկութեան Մխիթարեանց [?]» սախօսքը . «Ըսա պիտոյից ժամանակին կրնային [Մխիթարեանք] քանի մը գիտութեանց պակասը լեցնել . սակայն ասոր արգելք եղաւ իրենց եկեղեցական լիճակը . Անշուշտ կ'ակնարկեն թէ գրքեր չեն քննարարական բժշկութեան եւ լիբրարութեան պէսպէս մասանց վրայ, եւն. եւն. »

Զ. Թ. Թոռն չ'ըսեր թէ ո՞վ է այս սխալ ըմբռնուած բայց ճիշդ գիտողութիւնը ընողը . որուն դէմ ցաւազին ցասումով մը կը գոչէ . «Հանդէպ այդպիսի անկշիռ իրաց լուսութիւնն ունի սեղի : » Այո՛, համամիտ ենք ձեզի

հետ յարգապատիւ Հայր, ու միթէ՞ հարկ է հրատարակել, կը հարցնենք, ատանկ մասնագիտական գիրքեր, խեղճ, տգէտ հայ ժողովուրդին համար, քանի որ նոյն իսկ Եւրոպայի ծոցը, Աւստրիոյ մայրաքաղաքը, մեր ազգի կրթական ամենէ բարձր հաստատութիւններու մէկուն՝ Վիէնայի Մխիթարեանց կեդրոնին մէջ, ուսում առնող Հայր մը, Զ. Թ. Թոռն, գիտութիւն ըսելով կ'ըմբռնէ Բժշկութիւն եւ Վիրաբուժութիւն միայն :

Պիտի խնդրէինք Զ. Թ. Թոռնէն որ՝ իրեն պատկանած հաստատութեան գրական համբաւին սիրոյն համար գոնէ, կրօնական ներողամտութիւնը սպառող իր այդ օրինակ հրապարակագրութիւններու չմիացնէր այդքան գայթակղալից ազդեցութիւն : Արաւ

— Նիւթերու շատութիւնն չկրցանք «Համալսարան»ի այս համարին մէջ օտար հրատարակութիւններու չափազանց հետաքրքիր բաժինը զետեղել : «Համալսարան» որպէսզի կարողանայ իւրաքանչիւր թիւի մէջ իր ընդգրկած ծրարքին բոլոր կէտերը շօշափել, պէտք է այժմու ծաւալին կրկին անդամը տրամագրելի տեղ ունենայ, ինչ որ երբէք շատ չէ գիտական հանդէսի մը համար : Մեր ընթերցողներու, ուրախ ենք ծանուցանել այս Բ. շրջանի սկզբնաւորութեան իսկ ցոյց տուած տաք համակրանքը, յառաջիկայ շրջանին համար աւելի ճոխսայման մը յոյսը կուտայ, առանց բաժնեդէնի յաւելման :

Աւստի մեր կողմէն ամեն պատրաստակամ գոհողութիւն խոստանալէ յետոյ, կը խնդրենք մեր բոլոր գաղափարակից գործակալներէն ու ընթերցողներէն որ մեզի անձնուիրօրէն աջակցին, տարածելով «Համալսարանը» իրենց բոլոր շրջաններու մէջ, որով միայն «Համալսարան»ը իր դեղեցիկ նպատակին պիտի հասնի, անոր ընթերցումը դառնալով ամեն մարդու համար անհրաժեշտ պահանջ մը : ԽՄԲ.



## ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ

Թէ՛ հրատարակել քաղաքակիրք աշխարհին նշանաւոր փրօ-  
փեստօրներու համալսարանական դասախօսութիւններն եւ հրա-  
պարակախօսութիւնները, դժուարին եւ ծանրանուր պաշտօն  
մըն է, զոր ինք ստանձնած է:

Նախ, հայ լեզուն իր աղքատ բառարանովը ատոր  
յենարան մը ըլլալ երբեք չի խոստանար, որքան բար-  
ձրագոյն գիտական եւ գրական կըթուեթեան մը սահմանները  
թեւակոխենք: Այս կէտին վրայ յաճախ ծանրացած ենք,  
այս էջերուն մէջ, եւ ծանրանալու ալ առիթը պիտի  
ունենանք. ու մեր հայեցողութիւնները ինչքան ալ պարզ  
ու հասկնալի ըլլան միշտ կրկնութիւններու պիտի կա-  
րօտին որքան ատեն որ հաւաքական ուժի մը զալուստը  
յամենայ եւ խնդիրը միշտ խնդիր մնայ:

Նրկորդ, եթէ պահ մը տարօրինակ մասնաւորացումով  
մը, մեր արտայայտչի լեզուն ու զմեզ (Հաւալարանի  
կմարգրութիւնը ա՛յնարկել կ'ուզենք) բարձրագոյն կըր-  
թութեան մը հպումներուն ատակ ընդունէինք ու մանաւանդ  
զայն ազգայնացնելու ապերախա կամեցողութիւնը ունենա-  
լինք, պիտի ներուէր մեզ անտարակոյս, — այդ պահուն, —  
սա ըմբոստ յայտարարութիւնը թէ՛ Հաւալարան ամենէ  
զմայլելի հոգեկան գոհացումը պիտի ունենար, — փոքրիկ  
ճիգի մը, համեստ ու անփառասէր ձգտումի մը, — եթէ  
համոզուած ըլլար թէ՛ ամբողջական եւ ոչ-ընդմիջուած  
հրատարակումը այդ դասախօսութիւններու, եթէ ոչ իրենց  
մանրամասնութիւններուն գոնէ՛ ընդհանուր գծերուն մէջ,  
մատչելի պիտի ըլլար մեր ժողովրդեան շատ մը խաւերու  
մտաւոր լոյսին:

Ո՛վ կրնայ երաշխիքը տալ մեզ, երբ սկսինք կանոնա-  
ւոր հրատարակութիւնը համալսարանական փրօֆէսէօրի մը  
բուսաբանական, քիմիարանական, բնախօսական, փիլիսո-  
փայական, եւ այլն, մէկ դասընթացքին, թէ՛ մեր թերթը  
խրտուելակ մը չպիտի դառնայ եւ զայն կարդալ կամեցող-  
ներու շատերուն յօրանջելու անուշ ու անխմաստ մարմաջը  
պիտի չգրգռէ, երեւոյթ մը՝ որ բնաւ չ'ենթադրեր

ձեռնարկի մը ո՛չ ներկայ օգտակարութիւնը եւ ոչ ապագայ յաջողութիւնը :

Բայց քանի որ լաւատես ըլլալու փայփայիչ տրամադրութիւնը ունինք այսօր, սիրենք հաւտալ թէ այդ տեսակ բարձրագոյն կրթութեան նկարագիր ունեցող հրապարակագրութիւն մը՝ համահաւասար կերպով զարգացած հասարակութեան մը ուղղէր իր խօսքը, — հասարակութիւն մը սակայն որ ձեռնարկուած գործին պահանջած խոշոր գոհողութեան բոլորովին անվերահաս ըլլար եւ անոր տարուելիք քաջալերութեան քրէական անտարբերութիւն մը ցոյց տար, — այն ատեն ո՞ւր եւ ի՞նչպէս պիտի իրականացնէինք ընդարձակ ծաւալ եւ հարիւրաւոր էջեր պարունակող հանգէս մը, որ կարենար լիուրի պարփակել իր մէջ՝ միեւնոյն ատեն քանի մը նիւթերու վրայ դասընթացքներ եւ դասախօսութիւններ :

Ուրեմն, — միշտ միեւնոյն ոգիով, — որպէսզի Հաւնալսարան կարենայ առանց ընկրկելու լեզուական դժուարութիւններու առջեւ (գոնէ ներեցէք մեզի այսքան փոքրիկ յաւակնոտութիւն), առանց հաշուելու իր օգտակար ըլլալու բաղձանքին լայն սահման մը, միշտ զրկող դափարին սիրոյն համար, քանի մը ուսումնասէրներ եւ մրտաւորական գոհացուցիչ զարգացումներ ազատագրելու հեռապատկերով, որպէսզի, ըսինք, Հաւնալսարան կարենայ ամբողջական դասախօսութիւններ հրատարակել, — եւ միեւնոյն ատեն այլազան ճիւղերու վրայ, — պէտք է աւնուազն ունենայ այժմեան ծաւալին կրկինը եւ հրատարակութիւնը երկու անգամ, առանց բաժանորդագրութեան յաւելումի, այսինքն ամիսը 128 էջ չնչին գումարով մը :

Այս ալ իրականացնելու համար մենք չենք սպասեր, — ու համեստութիւնն ( ) ալ այդ կը պահանջէ . . . — ոչ խոշոր գումարներու նուիրատուութեան, ո՛չ քմահաճոյքի մեծատան այլանդակ եւ խրոխտացող առատաձեռնութեան եւ ոչ ալ նախախնամութեան դիպումածական շնորհքներուն . Ո՛Չ, մենք կը սպասենք ունենալ միայն քանի մը հարիւր բաժանորդ, ուրք հարիւր, առանց իսկ հազարի մը շլացուցիչ մտածումին :

Ու այսքան անմեղապարտ եւ չափաւոր բաղձանքի մը առջեւ, անշուշտ ոչ ոք պիտի համարձակի երեւակայել զմեզ ամառը մետաքսի ու ձմեռը մուշտակի մէջ :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՌՍԸԼԷՆ ՊԷՌԹԸԼՕԻ ՃԱՌԸ

ԻՐ ՅՈՒԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻՒ

(Տես Համալսարան՝ թիւ 2, էջ 61)

Պ. Նախագահ, պ. Նախարար, սիրելի պաշտօնակիցներ, ընկերներ եւ բարեկամներ եւ դուք, երիտասարդներ, իմ աշակերտներս ու բարեկամներս,

Խորապէս յուզուած եմ եւ իրապէս շուարած այն յարգանքներէն զոր դուք ինձ կ'ընծայէք այս վայրկեանիս։ Այս պատիւը, գիտեմ, չեն ծագիր միայն Ձեր սէրէն գէպի իմ անձս, զանոնք վերագրել կը պարտիմ նաեւ իմ տարիքիս, երկար աշխատութիւններուս եւ այն քանի մը ծառայութիւններուն զոր կարողացայ մատուցանել մեր Հայրենիքին եւ իմ նմաններուս։

Իմ տարիքիս նախ, ձեր համակրանքը կը հրահրէ վերջին փայլով մը այն լապտերը որ յաւիտենական գիշերին մէջ մարելու կէտին վրայ կը գտնուի։ Յարգանքը զոր մարդկութիւնը կը բերէ տարեցներուն համերաշխութեան արտայայտութիւնն է, որ կը միացնէ ներկայ սերունդները անոնց հետ որ մեզ նախորդած են եւ անոնց՝ որ մեզի կը հետեւին։

Ինչ որ ենք մենք, իրաւամբ, մասամբ միայն կարելի է զայդ վերագրել մեր աշխատութեան եւ մեր անձնական անհատականութեան, որովհետեւ մենք զայն գրեթէ ամբողջովին կը պարտինք մեր նախնիքներուն, արեամբ նախնիքներուն, մտքով նախնիքներուն։ Եթէ մեզմէ իւրաքանչիւրը բան մը կ'աւելցնէ հասարակաց կալուածքին, գիտութիւններու, արուեստի կամ բարոյականութեան տեսակէտներով, որովհետեւ երկար շարք մը սերունդներ ապրած, վաստակած, խորհած եւ շարժարուած են մեզմէ առաջ։ Մեր նախահայրերու քրանաթոր աշխատութիւններն են որ ստեղծած են այն գիտութիւնը զոր դուք կը պատուէք այսօր։

Մեզմէ իւրաքանչիւրը, — ինչ որ ալ եղած ըլլայ իր անհատական ձեռներէցութիւնը, — իր յաջողութիւններէն պէտք է դարձեալ խոշոր մաս մը յատկացնէ ժամանակակից գիտնականներուն, որոնք իրեն հետ աջակցած են ընդհանուր մեծ գործին :

Իրօք, հեռացող դարուն այնքան փայլուն գիւտերը, յայտարարենք զայդ բարձրաձայն, ոչ ոք կրնայ իր բացարձակ արժանիքին վերագրել: Գիտութիւնը իրապէս հաւաքական գործ մըն է, հետապնդուած երկար ժամանակներու ընթացքին մէջ՝ ամէն դարու եւ ամէն ազգի պատկանող բազմաթիւ աշխատողներու հետագօտութիւններէն (effort), որ իրարու յաջորդած եւ ընկերացած են խորիմաց համաձայնութեամբ մը, անարատ ճշմարտութեան խուզարկութեան եւ այս ճշմարտութեան բոլոր մարդոց կենցաղավարութեան յարատեւ բարեշրջութեան կիրարկութեան համար :

Պարոններ,

Երբեմն գիտնականները կը նկատուէին իբր անարեօտներու եւ անգործ մարդոց փոքրիկ խումբ մը, որ կ'ապրէր աշխատաւոր դասակարգին ծախքերովը եւ որ կը կատարէր շտաշտութեան եւ հետաքրքրութեան գործ մը՝ բողոքին առանձնաշնորհալները զուարճացնելու եւ զրօսցնելու համար: Այս սահմանափակ եւ անարգար տեսութիւնը, որ այնքան քիչ նկատողութեան կ'առնէր ճշմարտութեան նուիրումը եւ մեր ծառայութիւնները, այս նախապաշարումը վերջապէս անյայտացաւ, երբ գիտութեան կատարելագործումը ապացուց թէ բնութեան օրէնքները կիրարկելի էին գործնական ճարտարագործութեան մէջ եւ թէ անոնք ուժը ունէին աւանդական եւ փորձական հին եղանակները փոխել եւ հաստատել գիտելութեան եւ համոզիչ փորձի օգտակար տեսութիւններու վրայ:

Այսօր ո՞վ կրնայ տակաւին գիտութիւնը նկատել իբր ամուռ զրօսանք մը ի ներկայութեան ազգային եւ մասնաւոր հարստութեան ընդհանուր ամման, որ անկից կը ծագի: Բաւական է զոհանալ՝ յիշատակելով գիտութեան թերեւս ամէնէ օգտակար ծառայութիւնը, երբ բաղդատենք անցած դարերու ժողովրդական զանգուածներու ստրկական եւ դժբաղդ վիճակը, այնպէս ինչպէս պատմական վաւերագրեր մեզ կը ճանչցնեն, այսօրուանին հետ, արդէն այնքան

բարձր արժանապատուութեամբ եւ բարեկեցութեամբ, առանց նկատելու այն իրաւացի յոյսերը՝ որոնց իրականացումին կը հետապնդեն անոնք: Միթէ կա՞յ կառավարական մարդ մը որ սարակուսի գիտութեան տակաւին աւելի մեծ ծառայութիւններուն վրայ, զոր պարտինք յուսալ այս անդադրուն յատաջգիմութիւններէն: Գիտութիւնը մարդկութեան բարեբարն է:

Ահաւաստիկ ինչպէս գիտական արդիւնքներու շօշափելի օգտակարութիւնը հասկցուցած է հասարակաց իշխանութիւններն թէ աշխատանոցներու (laboratoires) գործը պէտք է քաջալերուի, որովհետեւ անիկա կ'օգնէ ամէն բանի ինչպէս սնտեսական այնքան առողջապահական տեսակէտներով, Բայց այդ տեղ մեր իշխանութեան միայն մէկ մասը կը գտնուի. գիտութիւնը աւելի հետազոտութիւնները կը մղէ իր օրինաւոր յաւակնութիւնները: Կը պահանջէ այսօր միեւնոյն ատեն նիւթական վարչութեան զեկը, մտաւորական անօրինութիւնը եւ ընկերութիւններու բարոյական կառավարութիւնը: Իր ծաւալման տակ, ժամանակակից քաղաքակրթութիւնը հետզհետէ աւելի արագ քայլով մը յստաջ կ'ընթանայ:

Պարոններ,

Լինցող դարու կէսէն սկսած, առանց աւելի հեռուները երթալու, աշխարհը տարօրինապէս իր երեւոյթը փոխած է, իմ սերունդիս մարդիկը տեսան սասպարէզ գալը, ի հնուց ծանօթ բնութեան քովը եւ վրան, մէկ հակա-բնութեան մը, ինչպէս կ'ըսէին երբեմն, առնուազն բարձրագոյն կամ այսպէս խօսելով վերանցական բնութեան մը, ուր անհատին իշխանութիւնը հարիւրապատկուած է մինչեւ այն ատեն անծանօթ կամ անհասկնալի ուժերու կերպարանափոխութեամբ, ուժեր՝ որոնք առնուեցան լոյսէն, մագնիսականութենէն, ելիքտրականութենէն:

Այս չէ ամէնքը. շօշափենք աւելի բարձր եւ աւելի արգասաւոր ուրիշ չարք մը գաղափարներ: Տիեզերքի ամենէ խորին ծանօթութենէն եւ մարդուն ֆիզիքական ու բարոյական կազմութենէն, կը ծագի մարդկային ճակատագրին նոր ըմբռնում մը, որ կը կառավարուի տիեզերական համերաշխութեան հիմնական սկզբունքներով, մարդկային բոլոր կարգերու եւ ազգերու միջեւ: Որչափ որ ժողովուրդները իրարու միացնող կապերը բազմանան եւ սեղմուին

գիտութեան յառաջգիմութեամբ եւ վարդապետութիւններու եւ պատուէրներու միակցութեամբ, զոր գիտութիւնը ինքը կ'եզրակացնէ հաստատուած իրողութիւններով եւ զոր պարտաւորիչ կը զարձնէ բոլոր համոզումներու, առանց բրտութեան եւ սակայն անողորելի եղանակով մը, այդ սկզբունքները պիտի ստանան յարածուն կարեւորութիւն մը, հետզհետէ անդիմադրելի անոնք կը ձգտին բարոյական եւ ապագայ քաղաքակրթութեան իրապէս մարդկային հիմները դառնալ:

Այդ տեղ է որ գիտնականներու դերը, իբր անհատներ եւ ընկերակաւն դասակարգ, խոշորցած է անգագա՞ր՝ ժամանակակից կառավարութիւններու մէջ: Բայց մեր պարտականութիւնները հանդէպ ուրիշ մարդոց կը խոշորնան միեւնոյն ատեն, չմոռնանք զայդ երբեք: Յայտարարենք զայդ այս հաւաքովայրին, Փրանսական գիտութեան այս Պալատին մէջ: Մեր անձնական սնապարծութեան անձնասէր գոհունակութեան համար չէ որ աշխարհը, այսօր, յարգանքներ կը մատուցանէ գիտնականներուն: Ո՛չ, որովհետեւ անիկա գիտէ թէ իր անուան իրօք արժանի գիտնական մը, կը նուիրէ անշահախնդիր կեանք մը մեր ժամանակակից մեծագոյն գործին, կ'ուզեմ ըսել բոլորի բաղդին բարեշաւութեան, — խիստ յամրաքայլ, աւա՛ղ, ամէնէ հարուստէն եւ երջանիկէն մինչեւ թշուառները եւ չարչարուողը: Ահաւասիկ ինչ կը յայտարարէին ինք տարի առաջ հասարակաց իշխանութիւնները արեւմեանոյն սրաչ հին մէջ, երբ Փասթէօնը կը պատուէին: Ահաւասիկ ինչ որ իմ բարեկամս, Շափլէն, ջանացած է յայտնել այս գեւղեցիկ չքանչանին (médaille) վրայ, զոր Հանրապետութեան նախագահը պահ մը առաջ ինձ ընծայեց: Չեմ գիտեր թէ կարողացա՞յ արդեօք իրագործել այն վեհ խաչալը, զոր արուեստագէտը գծած է. բայց ջանացած եմ զայն իմ գոյութեանս նպատակը եւ առարկան ընել գոնէ՛:

ՆՇԱՆ

## ՖՐԱՆՍԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ 18<sup>րդ</sup> ԴԱՐՈՒ ՄԷՉ

(Դասախօսութիւն շիտոֆեուօր ԿԻՒՍԹԱՎ ԼԱՌՈՒՄԷՅԻ,  
Փարիզի գրականութեան Համալսարանին մէջ)

Վերջին երեք տարիներու մէջ, ձեզի հետ ուսումնաւորեցի Փրանսական ողբերգութեան (tragédie) ծագումի աղբիւրները եւ կատարելագործումը 17րդ դարու մէջ: Տեսանք թէ ինչպէս անոր ձեւը հետզհետէ իր օրէնքները հաստատեց եւ հասաւ այնպիսի բարձրութեան մը ուր այնուհետեւ իր անկումը անխուսափելի էր: Դիպուածներ, ինչպէս Քոռնէյլի մը եւ Ռասինի մը երեւումը, չեն պատահիր իրաւամբ, երկրի մը պատմութեան մէջ բազմաթիւ անգամներ: Ամէն պարագայի մէջ Փրանսական տաւալը պարտէր հեռանալ այն ուղիէն զոր այս մեծ հանձարները իրեն գծած էին:

Քոռնէյլ (\*) մեզի ցոյց կուտայ կամքի պայքարը ամէն տեսակ խոչընդոտներու դէմ, որ կը յաւակնին իր ճամբան պատուարել, իր թատրոնը անսպառելի շտեմարան մըն է կորովի եւ հաստատակամութեան, ու իր մէջ կը դտնուին նոյն իսկ անհրկու գիւցազուններ: Ընդհակառակը Ռասին մեզ մատնանիչ կ'ընէ կիրքը (passion), մինչեւ իր ծայրացեղութիւններուն տարւող կիրքը, մղելով մարդը դէպի իր կորուստը: Իւրաքանչիւր անգամ որ մարդը գծազգութիւնը կ'ունենայ լքանելու ինքզինքը իր կիրքերուն, նոյն իսկ վեհանձն, իր զգացողութեան, նոյն իսկ ազնիւ, իր աչքին առջեւ ան կորսուած մըն է: Հոն է, իրաւամբ, ամբողջ ուժը չարիքին որ մարդկային բնութիւնը կ'արտաթորէ, եւ թէ քրիստոնէական վարդապետութիւնը միայն, այս յանտեսեանին (jansénite) հայեացքով, կարող

\*) Քոռնէյլ գիւցազներգած է մարդկային ամէնէ վեհանձն կարողութիւնները (la générosité), ինչպէս Ռասին կիրքը, ու իր գործը հիացում ու զարմանք միայն կ'արթնցնէ, հոն ասպարէզ եկող հերոսներու հանդէպ:

Բացատրութիւն «Համալսարան»ի

է կողմից եւ յաղթել: Ռասինի թատրոնը անարկու աղէտքներու շարք մըն է, որոնց մէջ մարդկութիւնը կը նսեմանայ իր մեղքերով: Քոռնէյլ մեր եռանդը կը գրգռէ, Ռասին զմեզ կը մեղմէ. երկուքն ալ իրաւունք ունին. մէկը կամ միւսը նախամեծար համարել վտանգաւոր է. դոհանանք անոնց վրայ չափազանց հիանալ եւ զանոնք հասկնալ: Նկատի առնենք թէ ինչպէս անոնց մէջ կ'արտայայտուին կերքն ու կամեցողութիւնը: Քաջագործութիւնները հոն ոչինչի տեղ կը հաշուին: Փրանսական թատրոնին երկու դարու պատմութեանը պէտք եղաւ որպէսզի այս կտորներուն մէջ, եղերեքական զգացումներէ ծագող անհրաժեշտ գործողութիւնները երեւին հանրութեան աչքին: Երբեմն թատրոնին մէջ ներկայացման վայրին (scène) ետին էր որ Ուլրաաիոս (Horace) կը սպաննէր իր քոյրը եւ թէ Միքդատ կը հեռանար մեռնելու համար, իր հոյակապ մնաստեանները հանրութեան առջեւ արտասանելէ յետոյ: Այս առումները խօսակցութիւններ էին միայն եւ այդ խօսակցութիւնները բարոյական վերլուծումներ: Սակայն պատահած է, ու ասիկա անկասկած, այնքան անգթութիւն եւ ամբարշտութիւն Լուգոլիոս ԺԴի օրով, որքան մեր ժամանակները: Ուրեմն միայն զգացումներուն արտայայտութիւնն է որ փոխուած է: Մարդ կրնայ ըլլալ անդութ եւ մարդասպան մէկ բառով մը, ինչպէս «Ռօքսան»ի «գուրս կորսուեցէ՛ք»ը: Մէկ կողմէ, ժամանակին յատուկ պառնաճութիւնները, միւս կողմէ հին թատրոնին նիւթական պահանջները լաւ կերպով կը բացատրեն այս վեհապանծութեան եւ ծայրայեղ արժանապատուութեան երեւոյթը, որ մեր վրայ այն տպաւորութիւնը կը թողուն թէ կը զանուրից երկու մարդոց միջեւ որ կը խօսակցին աջօնի մը մէջ խիստ չափուած լեզուով մը:

Նաեւ անձնաւորութիւնները ամբողջովին կը պատկանին բարձր պայմանի մը: Ասկից կը հետեւի որ կեանքի ստորուկ պէտքերը եւ ֆիզիքական նեղութիւնները, անօթութիւնը, ցուրտը, անոնց համար անհաշուելի բաներ են: Բանաստեղծը իր բոլոր ճիգը կը թափէ զանոնք անցեալին մէջ ետ մղել, հեռու մեղմէ, որպէսզի տակաւին աւելի վերացական դառնան: Մեզ կը ներկայացնեն այսպէս մարդկութեան գտուած էականութենէն: Կը զանուրից այս բացատրութեամբ իսկ եւ այս երկու մարդոց հետ,

երկու խիստ բարձր գագաթներու վրայ, բայց խեստ նեղ, ուր ողբերգութիւնը չպիտի կարենար երկար ատեն բնակիլ: Մայրայեղ ուժգնութիւն մը ենթարկել կասարեալ չափաւորութեան մը երեւոյթներուն՝ այս երկու հանճարներուն ամբողջ արուեստին համար չափ չէր: Իրենց յաջորդները կը ստիպուին ուրիշ բան փնտռել: Կը սկսին նախ առամին մէջ վերահաստատել ինչ որ անկից դուրս թողած էր 17րդ դարը: Իրենց անձնաւորութիւնները, փոխանակ վերացականի, կը լինին իրական. պիտի փնտռեն մանաւանդ բիբա զործողութիւնները, ժամանակին մէջ մեզի աւելի դրացի պիտի գտնուին: Յրանսական ողբերգութեան ամբողջ ճիգը 18րդ դարուն, պիտի մտենայ իր մեկման կէտին: Ինչ որ անոր սովորական դարձաւ Շէյքսփիրի եւ ար Լօփ ար Վէկաի աւամներով, ու, վերջը, պիտի երեւին վիպական մատենագիրները (romantiques), որ իրենց նախնիք պիտի ճանչնան անգղիացի մեծ բանաստեղծը եւ պիտի դիմեն այն սպանիացիներուն զոր Քոռնէյլ իր ժամանակի պահանջին յարմարցուցած էր, առամը եւ մեթոսաւմը ծնունդ պիտի առնեն այս բարեշրջութեանէն: Յրանսական ողբերգութիւնը պիտի տկարանայ ամբողջ դար մը, բայց իր բեկորներէն կենդանի եւ առողջ բան մը պիտի ծնի, արտագրիչ բուսանող մը՝ որ պիտի գոյանայ մեռած տեսակի մը կազմալուծումէն: Ու այս յաջորդող հեղինակներուն մէջ, ամէնքն ալ չահագրգիռ, պիտի գտնենք երկու գրագէտներ մանաւանդ որոնցմէ մին պիտի ունենայ սակաւին տաղանդի մը երեւոյթը, ասիկա «Քոնէպիյլօն»ն է, միւսը հանճարի մը՝ ասիկա Վոլթէռն է:

Ռասինի դարուն, ու հրաժարելով ողբերգութեանէն այն վայրկեանին իսկ ուր Ռասին ասպարէզ կ'ուզար, ահաւասիկ նախ մարդ մը որ բաւական գէշ համբաւ մը ունի, Պուալօի երկու բանաստեղծութիւններով, Քինօ (Quinault), Ասքրաթի հեղինակը: Չզուչանանք զայն արհամարհելէ: Քինօ տեսակի մը ստեղծիչն է, օիկոնաի, ու, դարձեալ, ողբերգութեան մէջ նոյն իսկ նա մացուց նոր տարր մը որ պիտի ընթանայ հետզհետէ զարգանալով, կ'ուզեմ խօսիլ ողբերգական կյանքը (galanterie tragique) վրայ: Այս կալանթընի խօսքը անյարմար պիտի ըլլար Շիմէնի կամ Ռասինի գործերուն մէջ հանդէս եկող կիներու եւ հերոսներու հանդէպ: Այդ տեսակ անձնաւորութիւններ կը գործածեն իրենց

ժամանակի սիրային ծեծեքուած լեզուն, բայց խորապէս անկեղծ են: Սէրը, յաւիտենական զգացում մը, ունի արտաքին բոլորովին անցողական ձեւեր՝ որոնք ժամանակէ մը ուրիշ ժամանակ կը փոխուին. այս ձեւերն են, փըրցուած այն հիմէն զոր թարգմանելու սահմանուած էին, որ կը կազմեն կաշանքոյն: Կրքի յարեբգութեան (parodie) իբր տեսակ, կալանթըռին կը ծաղկի աղնուական դասակարգի յարաբերութիւններուն մէջ, իբր հաճոյք կամ ժամանց, ու կը խաղցուի այն կերպիւններուն մէջ, զոր նոյն ինքը կազմած է: Այդպէսով է որ, «Սքոբպ»ի մէկ կտորին մէջ. ուր երիտասարդ մը եւ օրիորդ մը կը թուին զիրար սիրել, մենք չենք վայրկեան մը իսկ մասձեր զանոնք լուրջ կարծելու, թէեւ վերջ ի վերջոյ կ'ամուսնանան (եւ թերեւս այդ պատճառաւ իսկ): Ահաւասիկ ինչ որ Քիւօ առաջինը թատրոնի բեմը հանեց: Թատրոնական տեսակէտով նա է ստեղծողը այն պայմանական եւ անորոշ լեզուին, անանցուած թանկագին ոճէ մը, ուր կիները աստղերու բարձրութեանը հանուած են եւ ուր անոնք կը ստանան, իբր աստուածութիւններ, պաշտամունք մը:

Իր կողմէն Թոմաս Բոունէյլ, եղբայր մը, փոքրիկ եղբայր մը մեծն Բոունէյլի, լուրջ թատրոնը կ'օտաէ այժմէութեամբ մը: Ոչինչ այնքան նոր չպիտի կրնար բլլալ այդ թուականին: Գիտենք արդէն թէ որքան խղճատութիւն ունեցաւ Ռասին երբ միայն փոխ առաւ իր «Պատազէ»ի նիւթը ժամանակակից պատմութենէն ուր աւելցուց հասարակ եղերերգական առակներու հեռաւոր պատմութիւնը, տեսակ մը հեռաւոր աշխարհագրութեամբ: Թոմաս Բոունէյլ առանց վարանելու օգտուեցաւ 1601 տարուան մէկ միջադէպէն, որ դրացի երկրի մը մէջ կը պատահէր. Փրանսայի հետ շարունակական յարաբերութիւն մը ունենալով, այսինքն Անգլիոյ: Բեմ կը հանէ այն կրքոտ տուամբ որ ծագած էր Քոնթ Ինֆանթիսի եւ Եղիսարէթ թագուհիին արիւնոտ սիրաբանութիւններէն: Դեռ աւելին կայ, փոխ կ'առնէ Փրանսայի ժամանակակից պատմութենէն նոյն իսկ, «Լա Վուազէն» եւ «Պոէնլիլիէ» սոսկալի եւ խորհրդաւոր դէպքէն իր «Տըվինըռէս»ի նիւթը: Կը խառնէ գարձաւողըրերգութեան՝ եզանակ մը որ մեղի այսօր Վուազլիլէն անբաժանելի կը թուի, ֆիքոֆոն (quiproquo): Իր «Թիւֆոթ» կտորը բոլորովին հիմնուած է այն նախաստինք-

հերուն վրայ գոր կ'առթէ անձնաւորութիւն մը, երբեմն մէկ յաւիւթեամբ, երբեմն ուրիշ: Կը գործածէ դարձեալ տարր մը որ 17րդ դարու ողբերգութեան կը պակսէր, բայց որ կ'ողողէ, այսպէս խօսելով, 18րդ դարու ողբերգութիւնը, ու լայնօրէն կը տարածուի ապառնի տռամին մէջ, զգայ-նութիւնը: Զգայնութիւնը կը տարբերի այնքան կիրքէն որքան կալանի թրոխէն: Այս բաւական մեղկ, գլխութեան անընդունակ մէկ ձեւն է որ պատճառ կը դառնայ, առանց մեր հանգստութիւնէն մեր նմաններուն ոչինչ զոհելու, որպէսզի մենք բաւական անցողակի կերպով մարդկային հեղութեամբ շահագրգռուինք: Վերջապէս կը տեսնուի թէ որքան այդ ձեւը կը տարբերի այն խորին երկիւղէն եւ պթութենէն որոնք կը հոսին Ռասինի գործերէն: 17րդ դարը մարդկային կեանքի նկատմամբ բաւական յարգանք չունէր՝ հոն մարդասիրութիւնը ծաղկեցնելու որ 18րդ դարու պատիւը գործաւ, գութը աւելի զօրաւոր էր այն ատեն եւ աւելի անձնասիրական: Թոմաս Գոտնէյլ կը ծանուցանէ իր «Առիան» կտորովը նոր թուական մը, ուր առաջին անգամ զգայնութիւնը երեւան կուգայ անորոշ եւ ընդհա-նուր ձեւի մը մէջ:

Քիչ յետոյ, 17րդ եւ 18րդ դարու միջեւ երեւան կուգայ այն արհամարուած արուեստագէտը, բայց ինքն իր մէջ համոզուած, որ Քոէպիյլօն կը կոչուի, որ պիտի ըլլայ մասենագիր-հեղինակներու ամենէ ազատագրուածին հայրը: Սէթ-Փօսթ փողոցին իր խեղճուկրակ բնակարանին մէջ, շրջապատուած շուներով եւ կատուներով եւ իր ծխամուր-ձին ծուխովը, արտասովոր պատկերներներ կը յօրինէ, որոնց նպատակն է արհաւիրքը արթնցնել: Արդ այս զգա-ցումն է նաեւ մէկը անոնցմէ զոր կ'անգիտար 17րդ դարը, եւ որոնք պիտի պատկերանան ուսման թիք տռամի տար-րերուն մէջ: Քոէպիյլօն կը փնտռէ վիճակներ, որոնց առջեւ հանգիստտեսը կը զգայ նախ զարմացումի տպաւորութիւն մը, ու լուծումը զոր ան՝ ատոր կուտայ՝ ո՛չ միայն արիւ-նարբու է, այլեւ ոճրագործ: Միթէ՞ կայ աւելի սոսկալի բան մը քան տեսնել մարդ մը որ իրեն եղբօր անոր որդւոյն արիւնը խմցնել կուտայ: Այս է նիւթը «Աթուէի եւ Թիէսթ»ի, որ այնքան հանրածանօթ է այդ բանով:

Ուրիշ տեղ, Քոէպիյլօն կը գործածէ միջոց մը որ պիտի գործածուի վերջ ի վերջոյ տռամին եւ Վօտըվիլին մէջ,

ծպտուժը (travertissement)։ Յիշեցէք Հէոնանին մուրացկանի մը պատառոտուն զգեստներով եւ տօն Սէզար ար Պազան՝ Զաֆառի վերարկուին տակ։ «Ռատամիսթ եւ Զէնուպի» այս կերպով կազմուած է ամբողջովին։

Յետոյ պիտի գայ Վոլթէո։ Վոլթէո վերին աստիճանի սէր ունեցաւ դէպի թատրոնը եւ նմանապէս ամենէ անյարմար յատկութիւնները տոամաթիք արուեստին համար։ Քոռնէյլի մը կամ Ռասինի մը գործը, երբ միանդամ յըզացուած է, կը բաժնուի անոնցմէ այսպէս խօսելով, անոնք ունին հանճարեղ գրագէտի այն կրկին ձիւրքը որ իրենց թոյլ կուտայ իր գրութենէն վերանալ կամ հոն անգրագառնալ բոլորովին։ Այս բանը Փիլիմալիոնի յաւիտենական բաղդախնդրութեան կը նմանի որ ամէն ճիգ կը թափէ իր արկածներու կենդանի ձեւ մը տալ, որուն վերջի վերջոյ իր հոգին կուտայ։ Վոլթէո ողբերգութեան մէջ չէ յաջողած, որովհետեւ աշխարհի ամէնէ անձնասէր մարդը եղած է։ ամէն բանէ առաջ, իր իւրաքանչիւր գործին մէջ նկատի կ'առնէ այն փոքր գոր պիտի կարենայ անկից ձեռք բերել։ շրջմուլիկ հուր մըն է որ կը կենայ ամէն առարկայի վրայ, առանց մէկին մէջ ծծուելու։ Ձեռք պիտի առնէ ողբերգութեան արտաքին ձեւերը, Ռասինի հոյակապութիւնը, Քոռնէյլի թատերական լուծումները, առանց անոնց մէջ ճշմարիտ կենդանութիւն մը գնելու, այնպէս որ «Ջաիբ»ի եւ «Մէրոփ»ի մէջ, օրինակ, յաճախ շահագրգիռ վիճակներ կարելի պիտի ըլլար գտնել, բայց երբեք խորին յուզում։

Սակայն նա, ինքն եւս, կը բերէ թատրոնին օգտակար նորութիւններ։ Նախ կը ջանայ ողբերգական արուեստին սահմանները ընդլայնել ժամանակին եւ միջոցին, պատմութեան եւ աշխարհագրութեան մէջ։ Կ'ընտրէ իբր նիւթ «Թանքրէթ»ը, այսինքն աւատական ասպետութիւնը, կամ ինչպէս «Ատէլաիտ աիւ կէսքլէնը», այսինքն օտաւրին գէմ հայրենասիրական կռիւր։ Ողբերգութիւնը զրկեթէ բացարձակապէս յոյն եւ հռովմէական Ռասինի եւ Քոռնէյլի մէջ, կը դառնայ ազգային եւ ֆրանսական այս երկու գործերուն մէջ։ կը թուի զարձեալ բոլորովին օտարացած «Չինաստանի Որբ»ը (Orphelin de la Chine) եւ նմանօրինակ կտորներու մէջ։ Միւս կողմէ, ու այս բանը աւելի եւս մեծ կարեւորութիւն ունի, Վոլթէո կը մտցնէ մեր

Թատրոնին մէջ զգացումի ուսումնասիրութիւնը, որ անոր օտարոտի կը թուէր: Որքան ալ մեծ ըլլայ այն տեղը զոր սէրը կը բռնէ իրական կեանքի մէջ, մինչեւ այն ատեն անոր տրուած մեծութիւնը մեր ողբերգական գրականութեան մէջ, կրնայ թուիլ, իրաւամբ անհամեմատական: Քոռնէյլէն ու Ռասինէն ի վեր, անկարելի կ'երեւէր յղանալ թատերական գործ մը առանց սիրային կնճիռներու: Վոլթէն կը փորձէ գրել ողբերգութիւններ որոնք հիմնուած են միմիայն մայրական անձնուիրութեան ուսումնասիրութեան վրայ. օրինակի համար, այդպէս է «Մէտոփ»ը:

Աւելցնենք որ Անգլիոյ մէջ իրեն պատահած է միջագէտ մը, որուն հետեւանքը խիստ մեծ եղաւ. ան գտաւ հոն Շէյքսպիրը: Իրաւ է որ այս վերջինը բոլորովին անծանօթ չէր Ֆրանսայի, քանի որ պ. Ժիւստըան անոր գործերէն օրինակ մը գտած է Լուի ԺԴի գրադարանին մէջ. ու երկու արքունիքներու յաճախակի յարաբերութիւնները կըրցած էին յանկոյտ Մանչի թատրոնական ներկայացումներու արձագանգը բերել մեր մէջ: Բայց գրադէաներու մեծամասնութիւնը կ'անգիտանար մինչեւ մեծ բանաստեղծին անունը: Վոլթէն առաջինը կը հիանայ, Շէյքսպիրի գործերուն մէջ, կը քրտ միջադէպերու ամէնէ ամբողջական միաձուլման վրայ, զոր երբեք մէկը ըրած ըլլայ: Միեւնոյն ատեն իր Ֆրանսացի գրագէտի ճաշակը կը զարմանայ եւ կը բարկանայ անգլիացի բանաստեղծին հրաշալի գէշ-ճաշակին հանդէպ: Շէյքսպիր իրօք, — ու այդտեղ է իր բարձրութիւնը, — ճաշակ չունի, եւ ոչ ալ ինքնին բնութիւն. երբեք չի վախնար իր տռամը աւրել: Իր մէջ կայ գիւտի այնպիսի զօրուոր կարողութիւն մը, որ կը վերանորոգուի իր իւրաքանչիւր գործին մէջ, այնպիսի շոայլութեամբ մը, զոր հիները ասիական պիտի անուանէին: Ոչինչ այնքան հակասակ էր Վոլթէնի ժամանակակիցներու արհամարոտ եւ սահմանափակ ճաշակին: 1807 զարու գեղեցիկ եւ արուեստական քաղաքակրթութեան զարգացման հանդէպ, Շէյքսպիր կը ներկայացնէ այն 1607 զարը, ուր կը աեսնուի խմորուիլը բնութեան յոյզին՝ Միջին-Դարու ձմեռէն յետոյ: Համադրեցէք միասին 1607 զարու Ֆրանսացի եւ օտար հանճարները, Մոնթէյնը եւ Ռապլէ մէկ կողմէ՝ քիչ մը Ակրիփա ա'Օպինյէիով, յետոյ Իտալացիներն ու Սպանիացիները, պիտի ունենանք եթէ ո'չ Շէյքսպիրը,

որովհետեւ տակաւին զանոնք բոլորն ալ կը գերազանցէ , գոնէ անոր մէկ պատկերը : Հասկնալի է որ Վոլթէն ահա- բեկած ու չփոթած ըլլայ : Անկէ երկու ու երեք փոխառու- թիւն միայն պիտի բնէ , ինչպէս Օթէլլօյի նախանձոտու- թիւնը , որ իր գործերուն մէջ Որոսման պիտի անուանուի , ու Համլէթի ստուերը , որ իր թատրոնին մէջ Նիուսի ստուերը պիտի դառնայ :

Ինչ որ ալ ըլլայ , Վոլթէնէն յետոյ , Շէյքսփիր ալ եւս կեղծուելու վտանգէն ազատագրուեցաւ : Վերջէն կեղո- ները կը ջանան զայն ճանչնալ իրենք իրենց համար , ու դարուն կիսուն կը պատահի սա խիստ կարեւոր դէպքը ' Շէյքսփիրի գործին թարգմանութիւնը Լաթուուէօրի ձեռամբ : Այն ատեն , Անգլիացի բանաստեղծին շնորհիւ ողբերգական ձեւին ծաղկումին ճամբան կը դիւրացուի , այսպիսի ոյժգնութեամբ մը , որ վերջ ի վերջոյ ձեւը պիտի ճարձատի , կործանի ու ապրելէ դադրի : Տիւսի այդ բանին մեծապէս կը նպաստէ , հակառակ իր երկչոտութեան բեմ հանելով Օթէլլօյի , Արքայն Լիրի , Ռօմէօ եւ Ժիւլիէթի կտորները :

Նմանօրինակ շարժում մը կը պատահի կատակերգու- թեան (comédie) մէջ : Մինչեւ այն ատեն , այս վերջինը խնամօրէն բաժնուած ողբերգութենէն , դեր ունէր ծիծա- ղելի երեւոյթներու տակ քննել այն զգացումները որոնց արգահատելի եւ ահարկու երեւոյթները կը քննէր սգեր- գութիւնը : Բայց տեսակ մը պայմանաւորութեան շնորհիւ էր որ այս երկու ձեւերը իրարմէ անջատուած էին : Գիտենք ամէնքս ալ թէ ուրախը եւ կատակողը գրեթէ միշտ միա- ցած են : Առնենք մարդ մը որ սոսկալի վշտի ենթարկուած է , ան կը հեկեկայ կատարեալ անկեղծութեամբ մը , բայց իր պրկումները , ծուռումուռ շարժումները կրնան ծիծա- ղելի ըլլալ , ու այն պահուն երբ մեր գութը կը շարժէ , կրնայ ըլլար որ մեր ծիծաղելուն պատճառ դառնայ : Ուրիմն բնական է Նրդ դարու մէջ տեսնել կատակերգութեան դէպի լրջութիւնը դիմելը , ինչպէս որ ողբերգութիւնն ալ կը մօտենայ կատակերգական տեսակէտին : Երեւակայե- ց՛ք կատակերգութեան հեղինակ մը որ ուսումնասիրէ սէրը փնքն իր մէջ , հոն կը գտնէ ո՛չ միայն ուրախութեան պատճառ մը , այլեւ շարձարանքի աղբիւր մը : «Մտախօ»ն առէք պիտի գտնէք որ անոր անձնաւորութիւնները խիստ

լրջութեամբ կը նկատեն իրենց սրտերը «Փէօ տը լ'Ամուռ  
է տիւ Հագառ» (ժիրոյ եւ դիպուածի խաղը) գործին մէջ,  
անաւարակ Տօնանթ որ պիտի կանգ առնէ վիճարանութեան  
մը մէջ ըսելու համար՝ «Կը չարչարուի՛մ» եւ Սիլվիա որ  
հետեւեալ յաղթական աղաղակը կը բարձրացնէ. «Պայծառ  
կը տեսնեմ սրտիս մէջ»: Այդ տեսակ խօսքեր մինչ մեզի  
պիտի խնդացնէին Մուլթեոի գործերուն մէջ, ընդհակա-  
ռակը այս սեղ արգահատանքի կը մղեն:

Աւրիշ հեղինակ մը, Լա Շօսէ, իր ժամանակի ընկե-  
րական կեանքի քանի մը պայմանները՝ իր թատերական  
գրութիւններու ուսումնասիրութիւն ընտրելու բնատիպ  
գաղափարը կ'ունենայ: Այդ ժամանակի օրուան կարծիքն  
էր թէ սէրը պէտք չէ գոյութիւն ունենայ ամուսնութեան  
մէջ, թէ մէկ կամ երկու տարի յետոյ, երբ զաւակները  
ծնած են, ծնողքները կրնան իւրաքանչիւրը իր քմահա-  
ճոյքին հետեւիլ, այս բարքերը ցուցադրուելով Լա Շօսէի  
գործերուն մէջ, անոնց կուտան քանի մը նմանութիւն-  
ներ Աղէքսանդր Տիւմայի գործերուն հետ:

Վերջապէս, հեղինակ մը պիտի ջանայ ողբերգութիւ-  
նը եւ կատակերգութիւնը միացնել, այն ատեն երբ ա-  
նոնք ելած են իրենց զուգահեռական ուղիէն այլեւս չպիտի  
ուշտնան իրարու հանդիպելու եւ կը հանդիպին իրօք  
Տիւմայի «տոսմ Պուսթուա»ին մէջ: Այս նոր ըմբռնումը  
կը յաւակնի մեզի շահագրգռել ամբոխին վշտերով, եւ  
իրօք, ինչպէս ըսած են, այնքան արցունք կայ հա-  
մետ դասակարգի պատկանող կնոջ մը աչքերուն մէջ՝ որ-  
քան կայսրուհւոյ մը: «Մտի-ժոն»ի կամ «Լա Ֆիյ տիւ  
Փէօիլը»ի (Մարիամ-Յովհաննուհի կամ ժողովուրդին Աղ-  
ջիկը) նման գործերու առջեւ ուղին բացուած է, որոնք  
այսօր այնքան արցունք թափել կուտան արուարձանի  
բնակիչներուն: Ծանօթ է ձեզ այն երկու գեղեցիկ կտոր-  
ները որոնց մէջ Ալֆոնս տը Վինետի եւ Ալֆոնս տը Միւ-  
սէ, այնքան տարբեր ծագումով եւ ճաշակով, իրարու  
հանդիպած են հաստատելու համար այն խորին վրդովումը  
զոր թողած էին մտքերու մէջ Յեղափոխութեան եւ կայս-  
րութեան արտաոց փորձութիւնները: Այսպիսի տպաւո-  
րութիւններու տակ ծնած սերունդը անկէ ժառանգած էր  
անհատականութեան պաշտպանման մոլեգին միտումը,  
այսինքն այն արամագրութիւնը որ գոյութիւն ունի ա-

մէն անձի համար, իրապէս կամ շինծու, ինքզինքը կե-  
 դրոն մը դարձնել, ինքզինքը նկատել ընկերութենէ գուրս  
 եւ բարձր նպատակ մը: Դասական արուեստը կը յարգէր  
 ընկերական օրէնքները, Ռասինի եւ Գոռնէյլի անձնաւու-  
 բուծութիւնները, իրենց ամենէ ուժգին իղձերուն մէջ, հաշուի  
 կ'առնէին վայելչութիւնը, դասակարգը, կրօնքը: Բայց  
 Յեղափոխութեամբ կարգերու այնպիսի իրարանցում մը  
 առաջ կուգայ որ հին կազմակերպութիւնը աւերակ կը  
 դառնայ: Փրանսայի մէջ գոյութիւն կ'ունենայ տակաւին  
 1815էն յետոյ, բայց երեւոյթով միայն, արքունիք մը,  
 հիմին մէջ, հին ընկերութիւնը բոլորովին ոչնչացած է:  
 Հանրապետութիւնը ամէն բան գերազանցեց ու ամէն մի-  
 ջոց հրաշալի կորովով մը ի գործ դնելով հիմնեց նոր ըն-  
 կերութիւնը: Ոյսպէս էր որ տեսնուեցաւ անհաւատալի  
 բաղդը փոքրիկ Գորտիքացի սպայի մը որ խոնարհեցուց  
 մինչեւ իր ոտքերը բոլոր Եւրոպայի Միապետները եւ ա-  
 մէնէ հին ու յարգուած աւանդութիւններէն վեր դասեց  
 Պոմառչէի խօսքը. «Տեղի տուէ՛ք արժանիքին, հաստա-  
 տակամութեան»: Բոլոր վիպագիր-մատենագիրները պիտի  
 լինին կերպով մը, անոր պէս, որդիները այն բախտա-  
 խնդիր Ֆրկանոյի որ իր ակորժակներէն զատ ուրիշ կա-  
 նոն չունեցաւ. ու, միւս կողմէ շփոթած Յեղափոխութեան  
 ստակալի ցնցումէն, պիտի լսէք որ անոնք պատերազմ  
 պիտի յայտարարեն օրէնքի, բարքերու, ամուսնութեան  
 դէմ եւ յատկացնեն անսահման իրաւունքներ իրենց կիր-  
 քերուն: Այս վայրկեանիս այս կէտը չեմ քննադատեր:  
 Մատնանիշ ընենք միայն թէ Յեղափոխութեան հետ մենք  
 հեռու ենք մեր մեկման կէտէն:

Նոր թատրոնին այս բոլոր երկրորդական հեղինակնե-  
 րու գործերուն մէջ ցրուած ստեղծագործութիւնը ուսում-  
 նասիրել անտարակոյս շահադրգին պիտի ըլլայ ընդհա-  
 նուր առմամբ, որովհետեւ անոնց մէջ պիտի գտնուին  
 հետաքրքիր կտորներ առատօրէն:

ՄՈԳ - ՊԵՏ

## ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԵՐ

(Ըստ պրոֆեսոր ՊՐՈԻՍՏԻ, Պարիզի Բժշկական Հասնադասանից)

Ա

### ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԸ

(Շար. եւ վերջ, տե՛ս «Համալսարան» թիւ 2, էջ 51)

«Համալսարան»ի նախորդ համարում գործածական կերակրների շարքում գտնուց արեցինք կարը տեղի թանկութեան պատճառաւ. նախ, ուրեմն, կը ներկայացնենք նրա մասին պրոֆէսորին ասածները եւ յետոյ կ'անցնենք կոնֆէոանսի երկրորդ մասին, այսինքն սննդական ընդհանուր կանոններին:

Կարը. — Կարելի է նկատել կաթին՝ մի ճարպային մարմնոյ կախիչիսի փոքր ինչ ալիպէն (կալաքարային) պայմանի մէջ:

Պարունակում է շաքարային նիւթ, կարնաշաքար (lactose), եւ ճերմկուցային կամ սպիտային մարմիններ, ինչպէս՝ սպիտը եւ պսևրայինը (albumine et caséine): Նախապէս ալկալէն, լինում է թթու: Այս պարագայում կազմվում նախ ասիք զակիկ եւ ապա ասիք ասէիկ:

Կաթը մի կատարեալ եւ դիւրամարսելի կերակուր է: Ինչպէս ամէն կախիչիսում ճարպային մարմինը ձգտում է բաժանվել, կարագը ուրեմն, մի քանի ժամանակակից յետոյ քուրս է գալիս կազմելու համար մի խաւ, որը անուանում են սեր: Ներքին մասը, շիճուկ, մի խտանուրդ է շաքարի, սպիտի, պանրայինի եւ աղերի:

Կաթը չափազանց անկայնուն հեղուկ է: Աւրվում է առաւել դիւրութեամբ ամառը քան ձմեռը, փոթորկալից ժողանակներում քան պայծառ ժամանակներում:

Կաթի պահպանումը մի հանելուկ է որ լուծվել է չազմաթիւ եղանակներով: Գիտենք որ այն առաջին երեւոյթներից մէկը որը յատկանշում է այս հեղուկին տարբաշաղկուկութիւնը, կաթնաշաքարին առիթ լակտիկի վերա-

ծուծն է: Փոքր քանակութեամբ թթուի ներկայութիւնը չափազանց արագացնում է այս երեւոյթին. ուրիշ խօսքով, ասիտ լակտիկի առաջին մասերը առաւել դանդաղօրէն կազմվում են քան վերջինները: Ուրեմն անկարելի է չէզոքացնել թթուին երբ կազմվել է:

Եռացած կաթը չէ ենթարկվում այն փոփոխութիւններին որոնց վրա խօսեցինք: Դարձեալ, չէ պարունակում այն կենդանական սերմերին, որոնք դիպուածաբար այն տեղ են դտնվել: Կաթի եռացումը ուրեմն ո՛չ միայն մի գեղեցիկ միջոց է այդ հեղուկի պահպանման այլեւ նախազգուշութեան հանդէպ այնպիսի հիւանդութիւնների որոնք այնքան շատ կը փոխանցվեն:

Կարելի է, դարձեալ, պահել կաթին բոլորովին հակառակ եղանակաւ, այսինքն գայն 7ից 8՝ բարեխառնութեան ենթարկելով: Բայց այդ պարագայում պէտք չէ հաշուել մի երկար պահպանման վրա: Բեւեռային երկիրների մէջ, Սիբերայում, կաթը յաճախ սառչում է ձմեռ ժամանակ այն ատեն նա պահվում է երկար եւ կրնայ սեղափոխվել մի տեղից ուրիշ տեղ:

Գոյութիւն ունէ մի տարբերութիւն, ուր սակայն չափազանցված է, այն տարբեր ցեղերի մէջ որ կազմում են միեւնոյն տեսակ կենդանիին: Միայն կովի վրա խօսելով, յայտնի է որ Բրիտանիայի կովերը ունեն սերով եւ հետեւաբար կարագով մի խիստ հարուստ կաթ: Յիշատակում են Մանչի ծովի մի կզգեակի կովերի կաթը, ճարպային նիւթերով իբր տիպար կաթ, մինչ ուրիշ ցեղեր, մանաւանդ նրանք որ ունեն խոշոր եղջիւրներ, ունեն կաթ մը, ուր պանրայինը առատ է:

Գալով սննդի սրա ազդեցութիւնը՝ կաթի վրա, անվիճելի է: Ստեպլինով կամ ճահնդեղով սնցրած կենդանիները արտադրում են աւելի կաթնաչաքար, քան նրանք որ խոտ են ուտում:

Յաջողված է աւելացնել կենդանիների սննդառութեան վրա զեղեր՝ որպիսիք են սնդիկ, իօթ, արսւնիկ, որ մեծ քանակութեամբ գտնված են կաթին մէջ:

Ազատ վայրերում արածված կովերի կաթը շատ դնահատելի յատկութիւններ ունէ քան նրանցը, որոնք անցկացնում են իրանց բոլոր կեանքը փարախներում: Վերջապէս կլիմայի ազդեցութիւնը տարակուսելի չէ. կարողա-

նում է բացատրել, անկախ ցեղային յատկութիւններից, այն մեծ տարբերութիւնը, որ գոյութիւն ունէ զանազան երկիրների կաթնատու կովերի միջեւ. Այդ մասին կը յիշենք այքի զարնող մի օրինակ:

Ալճէրիայում, մի չվեցերիական ընկերութիւն երկարատեհն ջանացել էր իւր վայրերում, Սէտիֆ քաղաքում, մոցնել եւրոպական կուլտուրայի (culture) եղանակները: Ջանազան փորձերի ընթացքում այնտեղ են փոխադրում կաթնատու պատուական կովեր, հէնց այդ տեսակէտից անհամեմատ կերպով բարձր արար կովերից. բայց քիչ ժամանակի ընթացքում Շվեցերիայի կովերը ընկնում են միեւնոյն աստիճանին, ինչպէս տեղական կովերին:

Կենդանիների առողջական վիճակը կաթին վրա անում է մի ազդեցութիւն, որ չէ կարելի գնահատել քիմիաբանական միջոցներով, բայց որ կը յայտնվէ սպառողների վրա իր արած ներգործութիւններով:

Կաթը կրնա՞յ ծառայել ժանտատենդի, սկարլատինի եւ ուրիշ փոխանցվող հիւանդութիւնների իբր միջնորդ: Մի անկասկած իրողութիւն է դա, եթէ հաւատ ընծայենք քաղուած տեղեկութիւններին, մանաւանդ Անկլիայում. ոտիայն ցայտօր, բոլոր պարագաներում, կարողացել են հաստատել թէ՛ այդ հեղուկին խառնել ին ջուր, որ վարակվել էր ժանտատենդաւորներից, ուրեմն ջուրն էր եւ ոչ կաթը, որ միջնորդ հանդիսացել էր ախտի թոյնին վաքակման: Դալով սկարլատինի, ազացուցվել է, գոնէ՛ ինչ ինչ պարագաներում, թէ կաթը կեղտոտվել էր այդ հիւանդութիւնից ապաքինող անձերից եւ որոնք ծառայել էին կաթնատուների մէջ իրանց մարմնամորթի վրայ կազմելով թեփի թափելու ժամանակ (desquamation): Կաթը ուրեմն վարակվեց կամ լորձունքից կամ տակաւին հիւանդ այդ մարդկանց մորթային թեփերից:

Կաթի գլխաւոր խարգախումները կայանում են սերահասութեան (écrémer) եւ ջրախառնութեան մէջ: Այսպէս նա կորցնում է իր սննդարար սկզբունքներին եւ լինում է նւազ օգտակար: Դարձեալ, ջրախառնութիւնը կարող է ունենալ իբր հետեւանք կաթի մէջ ինչ ինչ փոխանցվող հիւանդութիւնների սերմերին ներմուծման, ինչպէս ժանտատենդի եւ հիւծախտի սերմերին, եթէ խարգախումթեան գործածված ջուրը այդ սերմերից պարունակում է:

Այն խարգախումթիւնները որոնց ենթարկվում է կա-

րագը, կայանում է նրա վրա զանազան ճարպերի աւելացնելու մէջ, որոնք էփանագին արտադրութիւններ են, այդտեղ գոյութիւն ունէ առաւել խաբեբայութիւն ծախված առարկայի վրա, քան վտանգաւոր խարդախութիւն :

Ջրախառն կաթը անմիջապէս թանձրանում երբ եփվում է. որպէսզի այդ անպատեհութեան տեղիք չտրուի, սերից զրկված եւ ջրով մկրտված կաթի վրա աւելացնում են բիկարպոնիւս-թը-սուր :

Պանիր. — Պանիրները մի խառնուրդ են թանձրացեալ պանրայինի եւ կարագի, որ ենթարկված են խախաղի (կաթի քաղցուն) ազդեցութեան :

Պանիրը խիստ սննդարար կերակուր է : Պարունակում է ազոտային նիւթեր, որոնց քանակը տարբերվում է 15ից 35 առ 100 եւ ճարպային նիւթեր 21 ից 28 առ 100 :

Թարմ պանիրները սննդարար են միայն, մինչ խմամորված կամ հնացած պանիրները դրզութիւն են եւ ախորժաբեր :

Ձու. — Ձուին ճերմկուցայինի կամ սպիտի կշիռն է 24 գում, փոքր ինչ եփված ձուն դիւրամարս է. մի լաւ սնունդ է, որովհետեւ պարունակում է մեծ քանակութեամբ սպիտ եւ ճարպ, բայց նրան պակասում է ջրածխային մարմին : Աւելացնելով նրան հաց, ձեռք կը բերվի մի կատարեալ սնունդ :

Մ Ն Ն Դ Ա Ռ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Համառոտ՝ մի առողջ եւ բաւարար սնունդ պարտի պարունակել .

1. Բորակային մարմիններ, 2. Երրորդակ մարմիններ,
3. Հանքային աղեր եւ 4. Ձուր :

Տեսնենք այժմս թէ ի՞նչքան պէտք է լինի սննդառութեան քանակութիւնը որ անհրաժեշտ է սովորական պայմանների տակ ապրող անհատների առողջութեան պահպանման :

Չանազանում են արդէն աշխատութեան եւ առողջութեան հարկաւոր սննդառութեան քանակութիւններին :

Աշխատութեան հարկաւոր սննդառութիւն ասելով հասկացվում է այն աւելորդ առնված կերակուրներին որ անհրաժեշտ են դնգերային ուժերի գործածութիւնից եւ նրան ընկերացած գործարանաւորական աշխատութիւնից առաջացած ծայրայեղ սպառման հոգացողութեան . մինչդեռ

առողջութեան հարկաւոր սննդառութիւնը յատկացվում է պահպանել մարմնոյն սովորական ծանրութիւնը եւ ազատ կացուցանել կենդանիին՝ հիւանդութիւններէն :

Անվիճելի է որ ցեղային, կլիմաների եւ սովորութիւնների ազդեցութիւնները պէտք է նկատողութեան առնվին : Յուրտ երկիրների բնակիչները սպառում են շատ աւելի սնունդ քան նրանք որ տաք երկիրներում ապրում են, եւ ընդհանուր առմամբ եւրոպացիները աւելի լայնօրէն ապրում են քան ասիացիները : Միւս կողմից այն անձինք որ բարեկեցիկ են սովորում են դիւրաւ առատ եւ հիւթեղ կերակրո՞ր եւ աւելի նւազ տոկում են զրկանքների քան այն անհատները որոնք վարժվել են աւելի խիստ մի կեանքի :

Այն մանուկները որոնց անուճը արագ է, ուտում են խիստ շատ քան նրանք որ կը կատարելագործվեն դանդաղ կերպով, եւ հաստատվել է, գրեթէ բոլոր առողջ անհատների մէջ, թէ կայ կեանքի մի շրջան, 15 եւ 25 տարիների միջև, ուր օրտո՞րակը աւելի գործում է, որքան չէ գործելու ապագայում :

Այն թիւերը որ մենք կտանք ունեն հետեւարար մի հաւանական արժէք :

Կարելի է համառօտել մի աշխատող մարդու հարկաւոր կերակրի քանակը հետեւեալ կերպով .

	հաց	միս	ճարպ	ածխային բորակն.	ւնարմիև	ւնարմիև
Սովորական քանակութիւն .	829գր.	239գր.	60գր.	280գր.	20գր.	
Աշխատութեան համար աւելորդ	361 »	175 »	33 »	170 »		8.74
ձու գործաւորին անհրաժեշտ է	1190 »	414 »	93 »	450 »		28.74

Անբաւարար սնունդ է անւանվում այն քանակութիւնը որ մատակարարում է 63 քիլոգրամ կշտող մի չափահասի՝ օրական 11 գրամ ազօտից եւ 220 գրամ կարպօնից նւազ սնունդ :

Այն անհատները, որ անբաւարար սնունդ են ստանում, ուժերնին կորցնում են, իրանց բարեխառնութեան առաիճանը նւազում է, կամքի կորուր թուլանում է. վերջապէս առաջին պատահած հիւանդութիւնից անհատը ընկճվում է խիստ դիւրութեամբ :

Գալով ճշմարիտ քաղցահիւժութեան, յայտնի է որ նա

իբր հետեւանք ունէ մարմնի ծանրութեան տկարացումը մինչեւ իրական ծանրութեան 4/10ը, որից վերջ ապրել անկարելի է: Նիւթի կորուստը գլխաւորապէս կայանում է ճարպի (9/10) եւ դնդերային կազմութեան մէջ (50—60 աւ 100): Ձերմութիւնը տկարանում է եւ մահը վրայ է դալիս երբ այս վերջինի աստիճանը հասնում է 24—26°:

Երկու պարագաներ կան, որոնք նշանակել շահագրգիռ է. նախ, երբ կենդանին կորցրել է իր ծանրութեան երրորդ մասը, եթէ տակաւին ապրի էլ, անհնար է առողջացնել: Սնունդը այլեւս նրան չի օգնի: Ահաւասիկ թէ ի՛նչու անաարակոյս տեսնում են յաճախ ապաքինողներին, երկար հիւանդութեան մը վախճանին հասնելիս մեռնելը, որ սպառած էր նրանց կատարեալ առողջութեան հարկաւոր ոյժը: Այս բանը անսնվում է յաճախ ֆիէլըր տիֆօիթից՝ բժշկվածների վրա:

Երկրորդ ուշագրաւ պարագան սա է, այսինքն մահու եւ կենաց միջեւ մի վիճակում բաւ է որ եւ է զրկուում յանկարծական մահ առաջանելու համար: Կատարեալ քաղցահիւծութեան վիճակում գտնվող տատրակ մը անմիջապէս մեռնում է երբ նրա թաթը կծում են: Ահաւասիկ ինչու համար յաճախ տեսնում են մեռնելը տկարացած հիւանդներին՝ պատահական թեթեւ պատճառների ազդեցութեան տակ, յաճախ մահը յառաջանում է նրանց դիւրքը փոխելիս:

**ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԿԵՐԱԿՐՆԵՐԻ**

Ընդհանրապէս ընդունված է, Պաստէօսի աշխատութիւններից յետոյ, թէ նեխումը կատարվում է միայն ի ներկայութեան մասնաւոր սերմերի, որոնք խմորչի (ferment) դեր են խաղում: Այս սկզբունքից կարելի է հետեւացնել երկու եղանակ, կերակրների պահպանութեան համար. առաջինը կայանում է պահելի նիւթին պարունակող սերմերի ոչնչացման մէջ, երկրորդը՝ այն պայմանների մէջ, որտեղ գետեղվել է նիւթը եւ որտեղ սերմերը չեն կարողանում բարեչրվել, զարգանալ:

Սերմերին սպանելու համար, գործածում են Ապիւր մեթոտը, ծխուռը կամ հալիանեխիչներ: Նրանց բարդաւաճումը արգելելու համար գիմում են մանաւանդ չորացնան կամ աառուցնան: Մի տկնարկ նեւտենք այս տարբեր մեթոտների վրա:

Ապէր մեթալը կայանում է սննդական նիւթերին խցուած ամանների մէջ զետեղելուց յետոյ 100° ջրի սաքութեան ենթարկելուով: Այս եղանակը սերմերին սպանելու առաւելութիւնն ունէ թէեւ, սակայն միեւնոյն ժամանակ հաստատել են թէ գտնվում են սերմեր որ 100° ջերմութեան մէջ չեն մեռնի, հետեւաբար լաւ է համարված 110°ի բարձրացնել ջրի սաքութիւնը: Այդ ջերմութիւնը ձեռք է բերվում աւելցնելով ջրի վրա կիօրիւր թր կաշիօւ կամ թր աօրիօւ, եւ որովհետեւ եռացման ենթարկված պահեստի տուփերում գտնված ջուրն էլ եռում է, չոփին գուրս են թողնում մի փոքրիկ ծակ բանալով, որը գոցում են անմիջապէս կաթիլ մը մածոյցով: Այս եղանակը կիրարկելի է ոչ միայն մսերի այլեւ բաջարեղէնների, ձուերի եւ կաթի վրա:

Սննդական նիւթին ծածկում են՝ տաքացնելուց յետոյ, պահպանիչ մի խաւով, որ արգելում է օդին թափանցումը. կարելի է պատատել մսերին մածուածով (gelatine) կամ թանձրացեալ սպիտով (ալպիւմին), բայց լաւ արդիւնքներ ձեռք բերվում են երբ նրանց պատատեն իրենց սեպչական ճարպի մէջ:

Ուրիշ մի եղանակ եւս կայանում է թաթախել մսին հալած հասարակ շաքարի մէջ եւ թողնել օդի տակ որ չորանայ: Չուերը կրնան պահպանվել ճարպի կամ մոմի խաւով մը: Կարելի է պահել նրանց կրաջուրի մէջ եւս:

Ծխուելը մերձեցնում է պահպանման այն եղանակներին որ կայանում են հականեխիչների գործածութեան մէջ: Սակայն այդ բանը մսին արդէն պարունակած սերմերին անմիջապէս սպանելու առաւելութիւնն ունէ:

Հաւքուրկի եղանակը կայանում է մի սենեկի մէջ, ուր մսերին զետեղած են, կաղնիի, ցարասի կամ եղեւնի տաշուքների սառը ծուխ հասցնելով: Կործողութիւնը դիւրանում է աղի բաւարար գործածութեամբ:

Չորացումը անվիճելիօրէն ամէնից գործնական եւ ամէնից էփան միջոցն է, այդ նպատակին հասնելու համար:

Իխտենք լաւ կերպով որ մանրածծիները (infusoires) երբ չորանան կարող են կեանքի սկզբունքը պահել եւ վերածննիլ անմիջապէս երբ ջրի մէջ ածուին: Բայց ջրից զրկումը, նրանց, գոնէ առօրեայէս, վերածում է անկենդան փոշիի, այս սկզբան վրա կայացած է մսերի եւ բանջարեղէնների չորացմամբ պահպանումը:

Տաք երկիրներում, բաւական է կտրել մսին այնպէս որ կարելի լինի արեգակին ենթարկել. մեթոս մը որ գործադրվում է լայն սասիճանների մէջ Պարսկաստանում, կովկասում եւ Սահարայում, որտեղ նրան անւանում են ֆեշա : Աֆրիկայի Գաֆրները արեգակին տակ դնում են մսի խոշոր կտորներ, որ չորանալուց վերջ պահվում են երկար ատեն նեխումից : Այս կերակուրը տեղացիք անւանում են բեշոնդ :

Եգիպտոսում չորացնում են մսին՝ արեգակին եւ հիւսիսային հովին ենթարկելով : Հարաւային Ամերիկայում երկու տեսակ չորացած միս են պատրաստում, այն որ անւանում են սաւաժօ բաղկանում է բարակ շերտերով կտրված մսից, որ թաթախված է աղաջուրի մէջ եւ չորացած արեգակի տակ, շարկի ասւածը կազմված է մսի փոքր կտորներից, որ զրկված իրանց ճարպից, չորացած են անմիջապէս արեգակի մէջ ապա եգիպտացորենի ալիւրով պատտոված :

Չորացնում են արեգակի մէջ մեծ քանակութեամբ անուշահամ պտուղներ երբ ուզում են նրանց պահպանել (թուզ, խաղող, եւն.) :

Եւրոպայում միայն չորացնում են Յօից 55 աստիճան չոր օդի հոսանքի ենթարկված ջերմամանների (étuve) մէջ :

Մի ուրիշ եղանակ կայանում է մսի ջրակայական մամուլի տակ ուժեղ սեղմումի մէջ : Զրկում են այսպէս իւր շաքարի մեծ մասից, ինչ որ երեւում է թէ նրան թոյլ է տալիս պահվել երկար ժամանակ : Հիւթը որ հոսում է մսից չորացվում է դատարկութեան մէջ եւ կազմում է խիստ օգտակար սնունդ :

Չորացումը միայն մսերի վրա չեն կիրարկի, այլ եւ ընդեղէնների եւ հատիկների : Գործածում են զանազան եղանակներ չորացնելու համար հացը, որ անհունապէս կր պահպանվէ (ֆրանսիական բանակի բիւլիլիսի հացը) :

Չորացնում են հաւասարապէս գետնախնձորը, ծաղկակաղամբը, ստեպլինը եւ վերջապէս ձուն եւ կաթը :

Պահում են մեծ քանակութեամբ արմաթքներին, օդի եւ խոնաւութեան դէմ նրանց պատսպարելով : Կարելի է ցորեանը թոզնել երկար ժամանակ մի շտեմարանի մէջ, երբ այս վերջինս կատարելապէս չոր է : Թօքրի սխտէմուլ կարելի է պահպանել հատիկները ամէն վնասումից : Այս մեթոտը կայանում է նախ ցորեանի չորացնելում եւ յետոյ օդի եւ խոնաւութեան անհասանելի ընդերկրեայ վայրերի մէջ զետեղելում : Հիները բնաւ չէին ագիտանայ այս ե-

ղանակի մասին, պարփակում էին իրանց ցորեաններին սալալատակված եւ խնամօք դոցված մեծ ամբարների մէջ: Այս սխտեմի շնորհիւ էր որ եգիպտացիք, առանց կամենալու մեզ պահած են ցորեանի նմոյշներ որ իրանք մշակում էին: Յայտնի է շատերին, իրաւամբ, որ գտնված են խիստ հին մոմիաների մէջ ալերային հատիկներ, որոնք ցանկելու եւ կատարելապէս արտագրել են:

Կան նաև պահպանիչ հեղուկներ որ, առանց միշտ սպանելու սերմերին, ընդդիմանում են գոնէ խմորման, սրոնք են ալկոհոլը, քացախը. աղաջուրը. բայց սրանք միայն գործածվում են պտուղներ պահպանելիս:

Վերջապէս ստուումը թերեւս ամէնից կատարեալ միջոցն է կենդանական նիւթերին պահպանելու համար. այդ եղանակը լայնօրէն կիրարկվում է բուսաբան երկիրներում: Յայտնի է որ Պալլասի մի առաքման մէջ գտնուեց սառչած մի մամուլի գիակը որի միսը ուս նաւազները կերան եփելուց յետոյ: Այս պահպանումը անդրջրհեղեղեան թուականներից յայտնի էր աշխարհին:

Մի քանի ժամանակներից ի վեր փնտուում են մի միջոց սառման եղանակը կիրարկելու եւս գործնականում, Անկերիկայի եւ Աւստրալիայի մեերը Եւրոպա փոխադրելու համար: Ի սրտէ մտղթում ենք որ այս նախնական փորձերը պսակվին յաջողութեամբ:

Վերջացնելուց առաջ աւելացնենք որ պահված կերակուրները ինչ ինչ պարագաների մէջ կարող են թունաւորման պատճառ դառնալ: Գործարանատէրք, յիրաւի, յաճախ իրանց տուփերի համար գործածում են էփան տեսակի սպիտակ երկաթ, որը ձեռք է բերվում անագից եւ կապարից կազմված եւ հալված մի խառնուրդի մէջ թաթախված սեւ երկաթից (idole): Դարձեալ կպցնում են իրանց տուփերը ներքնապէս մի խառնուրդով, որը պարունակում է մի մաս անագ եւ երկու մաս կապար: Այս կերպը երբեք բաւական խստութեամբ արգելված չպէտք է լինէ:

Վերջապէս պահված ընդեղէնների ինն սասնեորդը կանաչացրված են սիւլֆուս քը կիւլֆուրով (sulfate de cuivre), որ այն ժամանակ անյարմարութիւններ ունէ երբ մեծ քանակութեամբ է ծծվում եւ մանաւանդ վատ մարտողութիւն ունեցող մարդերից:

Կ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

## ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տե՛ս Հանդիսարան, էջ 58, թիւ 2)

9. Յարգանքի պարուն ՄԱՐԷՅԻ. — Յունուար ամսոյ 19ին, 1902, Քօլէժ տը Ֆռանսի մէջ (Փարիզ) յուզիչ հանդէս մը տեղի ունեցաւ ի պատիւ փրօֆէսէօր Մարէյի որ նշանաւոր եղած է իր բնախօսական աշխատութիւններով, գերազանցելով իր ժամանակի ո՛չ միայն ֆրանսացի այլև օտար բնախօս գիտնականները: Ինքն է, իրաւամբ, ստեղծողը գծական մեթոտիկն (methode graphique) բնախօսութեան մէջ, որ իրմով անսպասելի եւ ապշեցուցիչ կատարելագործում մը ստացած է: Ապացուցած է որ այդ մեթոտը կրնայ կիրարկուիլ բնախօսութեան բոլոր մասերուն, նոյն խկամէնէ վերացականներուն մէջ, ու այդ ճամբով իրմէ առաջ եղած փորձերը կրնան անորոշ ուրուագծեր համարուիլ միայն:

10. Մագերու սպիտակնայուն պսակաւոր. — Էնթիթիզի Փսթիէօնի վերջին տարեգրութեան մէջ կը գտնենք ուսումնասիրութիւն մը որ ցոյց կուտայ թէ մագերու գունաւորիչ նիւթին (սեւութեան օրինակի համար) տկարանալը հետեւանք է անոնց ֆակոսիթ (phagocyte) բջիջներու մէկ մասնաւոր գործօնութեան: Այս վերջինները պարզապէս միջին մեծութիւն մը ունին, ու իրենց երեւոյթը կը փոխուի կենսահիւթին յեղակակերպ (améboide) երկարաձգումներու ներկայութեամբ: Ատոնք կ'ածանցուին մագերու միջին մասէն եւ իրենց ճամբայ կը բանան կեղեւային խաւերու մէջտեղէն, ծծելով իրենց հանդիպած գունաւոր գնդիկները որոնք միանգամ ընդմիջտ կը խլուին մագերէն: Երբ կիսով չափ սպիտակ մազ մը քննենք՝ պիտի գտնենք անոր մէջ մեծաքանակ ֆակոսիթ բջիջներ՝ որոնց բոլորն ալ ճիւղ քանակութեամբ երկարաձգումներ ունին: Բոլորովին սպիտակ մագերու մէջ գունաւոր գնդիկներով լեցուած բջիջները հեռոջհեռէ աւելի հազուագիւտ կը գտնան եւ յաճախ բոլորովին կը կորսուին: Ֆակոսիթներու խացած դիրը, մագերու գունաթափութեան մէջ, կը բացատրէ երկար ատենէ ի վեր նկատուած բայց բոլորովին չլուսաբանուած բազմաթիւ երեւոյթներ: Մէկ գիշերուան կամ քանի մը օրուան մէջ սպիտակցած մագերու երեւոյթը

կրնայ բացատրուել Ֆակոսիթներու գեր-աշխատութեամբ մը, որով միայն անոնք կարող պիտի ըլլան, այնքան կարճ ժամանակի մէջ, ծծել մազերու ամբողջ գունաւոր նիւթը :

11. ժանսաստեղի շիճկաբուժութիւնը. — Փարիզի բժշկական համալսարանի փրօֆէսէօր Տօք. Շանթմէս տասը տարիներէ ի վեր փորձեր կը կատարէր ժանտատենդը (fièvre typhoïde) շիճկաբուժութեամբ դարմանելու համար: Վերջերս կը յաջողի պատրաստել շիճուկ մը (sérum) զոր կը քաղէ իր մշակումներու (cultures) մէջ ժանտատենդի միքրոպներուն արագրած թոյնը գործածելով: Ու այս բանը հասկնալի է երբ նկատի առնենք թէ այդ հիւանդութեան մէջ գլխաւոր եւ յուրջ ախտանշանները թունաւորման երեւոյթ ունեցողներն են, որոնք կ'ազդեն կեդրոնական ջղային գրութեան՝ մասնաւորապէս ուղեղին վրայ, այն թոյնովը, որ կ'արտադրուի պատիւներու վառարաններէն, որոնք կը զարգանան մանաւանդ աղիքներու միջնորմներու մէջ: Խիստ հազուապէս է որ պատիւները այդ կեդրոններէն դուրս ելլեն եւ թափանցեն արեան շրջանառութեան մէջ, նրթով հաստատուելու համար ուրիշ գործարաններու մէջ:

Բազմաթիւ փորձեր, որ կատարուած են Փարիզի հիւանդանոցներու մէջ, հաստատած են Տօք. Շանթմէսի այս նոր գրութեան շատ բարեբար ազդեցութիւնը: Մինչ նախապէս ժանտատենդէն մեռնողներու թիւը 31.8 առ 100 էր, այդ բուժիչ մեթոտով համեմատութիւնը հարիւրին 6 ինկած է: Դարձեալ դիտուած է որ հիւանդները խիստ արագ կերպով կ'օգտուին այդ շիճուկին ներարկումէն: Հիւանդութիւնը այնքան աւելի շուտ կը բուժի որքան ներարկումները անոր սկզբնաւորութեան պահուն, կանուխ կատարուին: Այն հիւանդները որ վարակիչ ախտը ութ օրէ ի վեր ստացած են, երբ շիճուկը իրենց մորթին տակ ներարկուի, մարմնոյն ջերմութիւնը՝ թէեւ քիչ մը դանդաղօրէն սակայն կը սկարանայ, ու երբ երկիւղ կայ որ այս վերջինը նորէն բարձրանայ երկրորդ ներարկումով մը ամէն կնճռոտութիւն կը հարթուի:

Շիճուկը երբեք արգելք մը չի հանդիսանար սովորական դարմաններու կիրարկութեան: Կարելի է շարունակել ցուրտ լոպանքը, սակայն հրաժարելու է ֆիւնիլի, ֆաֆեիլի եւ աղային ջրերու ներարկումէն, մանաւանդ որ քիչինի

եւ քաֆէինի բարերար ազգեցութիւն մը ունենալը տակաւին այնքան ալ լուսաբանուած չէ :

Շիճուկը չ'արգիլեր դարձեալ որ հիւանդութիւնը նորէն չ'երեւի . ուրեմն հարկ է հսկել հիւանդին վրայ, ու երկրորդ կնճռոտութիւններու ժամանակ, երկրորդ շիճուկային ներարկումներ կատարել :

Ներարկման համար Տօք. Շանթմէս 15 խորանարդ սանթիմէթը շիճուկ կ'որոշէ, որուն քանակը կարելի է կէս առ կէս տկարացնել տղոց մէջ :

Նախզգուշական տեսակէտով հակաժանտախտական այս շիճուկը անստգիտ դեղ մըն է : Երբ այդ վարակիչ հիւանդութիւնը ստանալու կասկած կայ, կամ երբ անոր առաջին նշանները կը յայտնուին, առանց ակառնաշուկեան քննութեան եւ հաստատութեան սպասելու՝ ներարկումը կատարելու է, որովհետեւ այդ բանը եթէ անպէտք տեղն ալ ըլլայ, հետո է որ եւ է խանգարում պատճառելէ գործարանաւորութեան մէջ :

Այս գեղեցիկ գիւտը Տօք. Շանթմէսի սքանչելի աշխատութիւններուն առաջին պսակը չէ . ասիկա շարունակութիւն մըն է միայն իր երբեմնի շիճկարուժական գիւտերուն եւ նախարաններէն մէկը իր ապագայ մեծամեծ գիւտերուն :

12. Այծի կաթը. — Վասնդաւոր պայքար մը կը մղեն եռացած կաթին դէմ, այն պատրուակով թէ եռացումը կորսնցնել կուտայ կաթին ինչ ինչ յատկութիւնները որ կրնան մարսողութեան օգտակար ըլլալ : Եթէ ակար մանուկները չեն կրնար լաւ մարսել այդ պատճառ մը չէ անտարակոյս անտեսել ամլացած կաթին մատուցած անութիւ ծառայութիւնները, առանց որոնց հազարաւոր մանուկներու կեանքը սպառնացուած պիտի լինէր : Կարելի է գործածել հում կաթ երբ եփուածը չի կրնալ տալու բացառիկ պարագան կայ . բայց ընդհատել այս վերջին ձեռք գործածութիւնը կը նշանակէ խօսիլ իբր բնախօս եւ քիմիաբան, բայց ո՛չ առողջաբան :

Սակայն եւ այնպէս մատնանիչ ընելու պարագ մը ունինք, առանց կողմակցութեան, այն միջոցները, արհեստական կամ ո՛չ, որոնց նպատակն է սղոց մատակարարել այծի կաթ, որ իր անախորժ համով եւ հոտով, պակրանիքի (caseine) առատութեամբ, փոքր ի շատէ

գժուարամարտութեամբ, բազմաթիւ մանկաբարձներէ չի գործածուիր: Այդ բժիշկներէն պ. Քոէփէն կը պնդէ թէ լաւ խնամքով ընտրութիւն մը այծի ցեղերուն մէջ՝ թոյլ պիտի տայ դիւրատար, դիւրամարս առանց անախորժ համի ու հոտի այծի կաթ ձեռք բերել: Այծը թոքախտ ստանալու քիչ ընդունակութեան համբաւ մը ունենալով, անոր կաթը հում գործածելով կարելի պիտի ըլլար այդ տհարիւր հիւանդութենէն մասամբ խուսափել: Ուրիշ բը-  
ժիշկ մը սօք. Պառպէյօն, Փարիզի մէջ, 163, rue Blumet, բացած է այծի կաթնատուն մը, ուր ընտրանքով եւ թոքախտի տեսակէտով քննուած զանազան ցեղի տոռղջ այծեր լաւագոյն պայմաններու մէջ կը պահուին: Այծին ձծերը, կթողին ձեռքերը, կաթի ամանները խնամքով կը հակահետուին: Որպէսզի արաքին շփումներու բոլոր վը-  
տանգներէն խուսափուի՝ մտադրութիւն կայ դատարկու-  
թեան մեթոտով այծերը կթել: Այսպէս կը յուսացուի էգ իշու կաթին տեղը բռնել տալ այծի կաթով, մանաւանդ որ առաջինը իր չափազանց սղութեամբ խիստ շատերու ալ անուատչելի է:


13. Երաժշտութիւնը եւ մեխաները. — Այս միջատները որոնք ջերմը տարածելու վայրագ յատկութիւնը ունին, կը թուի թէ, ինչպէս կը հաւաստեն, ունին սիրա մը որ շատ կը յուզուի եղեր երաժշտութենէն: Բժշկական թերթի մը թղթակիցը կը գրէ. «Տասներեք տարուան մէջ, քանի մը անգամներ պարտաւորեցայ ջութակի ածու մը դադրեցնել, անոր շուրջը հաւաքուած մեխներու բազմութեան պատճառաւ: Ծշմարիտ խումբ մը կը կազմէին ջութակին եւ դիսուս բոլորաթիւ ինչ որ ամբողջական անկարողութեան մը կը մատնէր շարունակումը: Այս բանը ինձ պատահած է մեխներու եղանակին, այսինքն այն ժամանակ երբ այս միջատները բազմաթիւ են. բայց իմ կարծիքս այն է որ անոնք միշտ կը հրապուրուին երաժշտութենէն, ու այդ բանին կը նպաստեն մանաւանդ լարաւոր նուագարանները, քան թէ օրինակի համար փիսկոն:»

14. Այֆոյրաւորութիւնը եւ քոֆախը. — Տօք. Լըթիւլ միջազգային համաժողովի մը իր ըրած տեղեկագրութեան մէջ, Փարիզի գործաւորներուն սննդառութեան վրայ խօսելով, կը ծանրանայ ալքոլին եւ գինիին վրայ, որոնց համար անոնք կը ծախսեն իրենց սննդեան կէս գինը:

Ալքոլամոլութիւնը, կ'ըսէ, թոքային ծիւրխատին անկողինը կը պատրաստէ, ոչ-ալքոլամոլ թոքախտաւորը դրեթէ միշտ կը բուժի այդ հիւանդութենէն, մինչ ալքոլամոլ թոքախտաւորը ախտին երեւման պահուն իսկ դրեթէ անընդունակ է դարմանման եղանակներուն. որովհետեւ անոր ախորժակը եւ գործարանները վերակազմելու ուժը բոլորովին տկարացած են: Հասարակութիւնը այսօր կ'անգիտանայ այն անագին վտանգը եւ կնճռոտութիւնները որոնց տեղի կուտայ ալքոլամոլութիւնը. սակայն չ'անգիտանար թոքախտի աղետալի հետեւանքները, ու այս ախտը օրինակ ընտրելով՝ հակալքոլական քայրղութիւն մը կրնայ միտքերը լաւապէս ուղղել, հիւանդութեան սարսափելի խոչորութեան վրայ յիշելով: Պէտք է ըսել գործաւորին ինչ որ է ճշմարտութիւնը. թոքային ծիւրխատէն խուսափելու համար լաւ անունդ տուէ՛ք ու ալքոլ մի խմէ՛ք:

15. Թոչուեներու քոխիջիւն քարձուրիւնը. — Սթրազպուրկի մէջ օգային ճամբորդութիւն ընող մը հանդիպած է 3000 մեթր բարձրութեան մէջ արծիւի մը՝ ուրիշ անգամ մը՝ երկու արագիւյի եւ պիղառի մը 900 մեթր բարձրութեան մէջ: 1880 մարտ 10ին ուրիշներ տեսած են 1000 մեթր բարձրութեան մէջ արտոյտ մը, եւ 1890 յուլիս 17ին երկու ագուաներ՝ 1400 մեթր բարձրութեան մէջ:

Քայց ասոնք բացառութիւններ են. 1000 մեթրէ անդին հազուադէպ կերպով թոչուններու կը հանդիպուի, արդէն 400 մեթրէ աւելի բարձրութիւններու մէջ անոնց թիւը խիստ աննշան է: Գերմանական թռչնաբանական ընկերութիւնը փորձեր ըրած է թոչուններու գնացքը ուսումնասիրելու համար. օդապարիկին մէջ առնուած թոչունները արձակուեցան զանազան բարձրութիւններու մէջ, 900էն 3000 մեթր: Մանաւանդ կը գործածէին աղաւնիներ: Երբ մթնոլորտը պայծառ էր, թռչունները ուղղակի կերպով ստորին խաւերը կը ձախրէին. եթէ ընդհակառակը, ամպեր կը ծածկէին այդ վարի խաւերը անոնք բաւական երկար ատեն կը թռչէին օդապարիկին շուրջը, մեկնելու համար նետի մը պէս զէպի ստորին խաւերը՝ անմիջապէս երբ քիչ մը օդը պարզուէր: Ամպերու ներկայութեան թոչուններու բռնած ուղղութեան վրայ ըրած ազդեցութիւնը սպացուցուած է հետեւեայ փորձով: Ճամբորդ աղաւնիներ՝ իրենց բնականաւ՝ վայրէն 50 քիլոմեթր հեռաւորութեան մէջ արձակուեցան, ամպոտ օր մը: Աւաջիւնը երեք ժամ յետոյ իր տեղը հասաւ, երկրորդը մէկ ժամ աւելի ուշ, իսկ միւսները հասան երեք կոյտան գէմ միայն: Միեւնոյն փորձը կրկնուելով պայծառ ժամանակի մը մէջ, աղաւնիները իրենց միեւնոյն ճամբորդութիւնը կատարեցին միմիայն 45 վայրկեանի տարբերութեամբ մը:



## ՎԵՐՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆՆԵՐ

### ՅՐԱՆՍԵՐԷՆ ԿՐԳԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Լա Ռոյալ (Քանսէրի գարմանումը — Տօք. Կազ). — Յաճախ այդ մասին ազմկարար յայտարարութիւններ եղած են՝ որոնք յուսադրած են այդ անբուժելի հիւանդութեամբ տառապողները եւ յուսահասեցուցած՝ երբ վերջի վերջոյ ատոնց անկարողութիւնը ապացուցուած է: Շիքակօի նշանաւոր բժիշկ մը, պ. Փիլման, կուգայ իր կարգին նոր յայտնութիւններ ընել քանսէրի գարմանման մասին՝ բուժած ըլլալով 50է աւելի հիւանդներ՝ իրեն փորձերով, որոնք կատարած է Ռէօնթիկենեան ճառագայթներով: Տօք. Կազ սակայն կը յարէ. «Այդ մեթոտը խիստ նոր է իր ներգործութեան վրայ համոզուելու համար: Քանսէրը ծայրայեղութեան հասած հիւանդադին կատարելութիւն մըն է: Գործարանաւորութեան մէջ իր ամէնէ լուրջ ապականութիւն բերող կարողութեամբ ծանօթ է մեզ այդ ախար: Ի՞նչ կազմուած հիւսկէնը (tissu) կը աւարանայ, կը ծծուի եւ կ'ապականէ ամբողջ գործարանաւորութիւնը: Անոր արտադրութիւնները ո՛չ միայն զայն շրջապատող հիւսկէնները կ'ոչնչացնեն այլեւ առաջ կը բերեն անոր գրացի գեղձերու եւ փորոտիքներու (viscère) մէջ նեխում մը: Ախտատու մասը ինչ որ ալ ըլլայ իր բնութիւնը, սաղմակազմային կամ մաշկային, միշտ անվրիպելի վերանորոգում մը կ'ունենայ եթէ հանուի եւ ոչնչացուի ալ: Եթէ նոյն իսկ Տօք. Փիլմանի X ճառագայթները քանսէրային հիւսկէններու մէջէն անցնելով զանոնք ոչնչացնէին բոլորովին, խնդիրը տակաւին հեռու պիտի մնար լուծուած համարուելէ: X ճառագայթներու ներգործութիւնը պիտի վերածուէր, այդ պարագային, վերաբուժական պարզ գործողութեան մը, որ բարեպատե՛հ ժամանակի մը մէջ գործադրուելով՝ պիտի գադրեցնէր յաճախ հիւանդութեան աճումը. ինչ որ բնաւ վերջնական բուժման մը հաստատութիւնը չի նշանակեր:»

Ուրեմն Ռէօնթիկենեան կամ X ճառագայթները կրնան հիւանդութեան աճումը աւժամապէս գադրեցնել, բայց բնաւ զայն բուժել, կամ ապահովել թէ վերտոին ախտը պիտի չբերուի: Այդ մեթոտին առաւելութիւնը հոն է որ կրնայ անվասնի կերպով գործադրուիլ. թէեւ այդքան աշարհիւ ախտի մը կէմ ամէն միջոց, ամէն զէնք գործածել ներուած է:

«Անգլիացի բժիշկներու կարծիքով, կ'աւելցնէ Տօք. Կազ, քանսէրի առաջ գալուն զլիսաւոր պատճառներէն մէկն ալ գործարանաւորութեան մէջ աղի շատութիւնն է:» Բայց այդ տեսութիւնը աւելի փորձառական է քան թէ գիտական: Ինչպէս կ'երեւի եթէ խողը այդ հիւանդութիւնը ստանալու անբնորոշակ է պատճառը իր աղ չուտելն է: Դարձեալ վայրենիներու մէջ այդ ախտը հազուադէպ է

որովհետև մեծ մասամբ աղէ զրկուած են անոնք: Վերջապէս աղուած եւ համեմուած մտերը, ինչպէս նաեւ չափազանցուած սնունդ մը կը թուի թէ մեծապէս կ'օգնեն քանսէրի առաջ գալուն: Ու աօք. կազ կ'եղբակացնէ. «Սակայն առանց համարձակելու աղէն խոյս տալու խորհուրդը ալ, գոհանանք սա հետեւութեամբ թէ սնունդի չափազանցութիւնը կը կազմէ ամէն առնի՝ ամէնէ մեծ վտանգը՝ գործարանաւորութեան առողջութեան դէմ:»

Ընկերային առողջապահութիւն (L'hygiène sociale, par E. Duclaux. Paris, Alcan). — Էմիլ Տիւքլօի այս հիանալի հատորը այն օգտակար գրքերէն է որ դեր ունին ընկերութեան մէջ մարդկային մտաւոր եւ արտադրիչ ուժին սպառնացող հիւանդութեանց դէմ կռուելու:

Հոն կը գտնուին շատ զեղեցիկ ծրագիրներ եւ ընտրուած օրինակներ, որոնցմէ կրնան օգտուիլ ընկերային առողջապահութեամբ գործնականապէս զբաղողները: Գաղղիական ախտին (Փոնէնկի, սիֆիլիս), ալքոլամոլութեան եւ թոքախտին աղէտալի հետեւանքները մեզի ծանօթ են: Ու եթէ անոնք կը վարակին ընկերութեան մէջ, անոնց մասին մեր ազիտութիւնը չէ ուրեմն պատճառը, այլ մեր այդ մասին ունեցած անտարբերութիւնը: Էնսթիթիւ Փասթէտի Տնօրէնին՝ պ. Տիւքլօի, այս հրատարակութիւնը Բարձր. Ուսմանց Վարժարանի մէջ իրեն ըրած դասախօսութիւններու ամփոփումն է. անկէ կրնայ շահագրգիռ ծանօթութիւններ ստանայ ամէն գոտակարգի պատկանող անհատ անխտիչ Պ. Տիւքլօ, գիտնական մը, խիստ ներհուն, եւ ընկերաբան մը, խիստ անձնուէր, առաջինը եղած է որ ազատօրէն խօսած է սիֆիլիսի վրայ ոչ-բժշկական հասարակութեան մը առջեւ, որ մինչեւ այն առնն եւ զուցէ հիմա ալ կորսուած մը կ'ընդունի այդ ախտով տառապողը եւ զայն կ'արհամարէ: Չափազանց յուզիչ ոճ մը կը գործածէ պ. Տիւքլօ երբ կը պատուիրէ մարգասէրօրէն դարմանելու այդ ախտը ստացողը, նախ որովհետև կը տառապի ան եւ, երկրորդ, որովհետև անոր անխնամ թողութիւնը կը վնասէ ընկերութեան առողջապահութեան:

Միութիւնը Կենդանի Էակին մէջ (L'unité dans l'Être vivant, F. Le Dantec. Paris, Alcan). — Ինքնատիպ կերպով եւ կատարեալ ձեռնհասութեամբ՝ նոր երեւոյթի մը սակ ներկայացուած են, պ. Լը Տանթէքի այս հատորին մէջ, այն ամէն խնդիրները որ կը վերաբերին կենդանի էակին կենսախօսութեան, կենսախօսութիւն մը սակայն խիստ կնճռոտ, հիմնուած վերջին գիտական գարուն ձեռք բերած կենսաքիմիաբանական ծանօթութիւններու վրայ: Կը խօսուի, հոն, տեսլիւն, ժառանգականութեան, սեռերու, մեքենական սկզբունքներու եւ գոտակարգութիւններու վրայ: Հեղինակը մեծ ճիւղ մը թափած է, ուր կը կայանայ մանաւանդ իր յաջողութիւնը, կործանելու այն ամէն նախապաշարումները, որոնք տակաւին գոյութիւն ունին եւ որոնք նախատինքներ են գրական գիտութեամբ օժտուած ազգերու մէջ:

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

La Russi en Palestine (Alphonse d'Alonzo), — Paris, L. Royer. 15, Racine. Կամ Librairie J. André. 27, rue Bonaparte — Prix 2 fr. 50.

2. Հնքերգարան Պատկերագրող Բ. Տարի, [Մխիթար Պոստացի] 4. Պոլիս, գրատուն Պ. Պալեց 20, Չարմաք-ճըլար Եօզուչու. գին 5 զրշ.

3. Դիւցա՛գեօրհե [Ատոմ. Եարձանեան], Փարիզ, Տպա-գրութիւն «Համալսարան»ի. դիմել հեղինակին 12, Bd. Arago, Paris. գին 1 եւ 2 ֆրանք:

4. Մարդասպառնութիւն Մանուկ Պոնսացոյ [Քննութիւն 2. Ս. Երեմեանի] Վենետիկ Ս. Ղազար:

5. Արտատարար [Բանաստեղծութիւն, Մ. 2.], Վառնա սպագր. Վզալմուսի, գին 20 սանթիմ:

6. ԼՈՅՍ [Կիսամտեայ հանդէս]. Բաժնեգին 3 1/2 ֆր. Խմբագիր Մ. Մինասեան. Դիմել 59, Flagg st. Cambridge, Mass.

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՆԵՏԻԿ. — [Ս. Ղազար] Մխիթարեան Երկրաւարտաւ-եսայ Յոքեղեանի Յանձնախումբ. — Ենթահակալութեամբ խըմ-բագրութիւնս ստացաւ ի յիշատակ յորեւանի Մխիթար Արքայ Հօր պատկերով ձուլուած մեջաչք: Որչա՛փ ուրախ ենք առանել, որ մեր Վենետիկի Մխիթարեան Հայրերը ոչ մէկ բան չեն խնայեր անմահացնելու անունը Մեծ-Մարդուն, Մխիթարի, քանզակեղ սալով անոր պատկերը եւ կանգնած հաստատութեան մանրանկարը կուռ մտադրին վրայ, զոր մեր մտաւոր զարգացման ամեն նախանձա-խնդիր հայ պիտի պահէ իր սրտին ժօտիկը, երախ-տապէս ակնածանքով մը:

ԲՍՉՄԱՎԷՊ. — Գեղարևին չստացանք եւ հետեւաբար չկրցինք անոր վրայ որ եւ է գնահատութիւն ընել:

ՖԻԼԻՊՊԷ. — պ. Գ. Թիւթիւնճեան, թերթերը 1 թիւէն զրկուեցան. Ձեր ուզած տեղեկութիւնները չուտով կուտանք:

ԵԻԿՈՄԻԴԻԱ. — պ. Գ. Ա. Պաղտասարեան, Ենթահակա-լութիւններ Ձեր ծառայութիւններուն: Չթիւերը զրկուե-ցան Ձեր նշանակած անձերուն: Խիստ գոհ պիտի մնայինք եթէ բաժնեգիրները չուտով գանձէիք եւ ուզակի մեզ զրկէիք:

ԳԱՀԻՐԷ. — պ. Մ. Չրաքեան, չափազանց չնորհակա-լութիւն: Ինչպէս գրած էիք, թերթերու պակասները հի-ներուն զրկուեցան, ինչպէս նաեւ Բ. Շրջանի թիւերը նոր բաժանորդներուն:

ՎԱՇԻՆԿՏՈՆ. — պ. Ա. Տ. Պետրոսեան, Ձեր ուզած գրքերը մեր մօտ չկան. ուրիշ տեղ գրած ենք, ստանալուս ձեզ կը զրկենք անմիջապէս:

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

## Բ. ԾՐՋՍՆ

Իւրաքանչիւր Շրջանին մէջ կուտայ 12 թիւ : Բաժանորդագրութիւնը թիւի վրայ է :

12 թիւ ամեն երկիր 10 ֆրանք, (4 ռուբլի, 2 տոլար) :  
6 " " " 6 " (2 1/2 " 1ա. 20 ս.) :

Տաճկաստանի եւ Պարսկաստանի համար 8 ֆրանք (40 ղրշ. ոսկեղրամ) : 6 թիւի բաժանորդագրութիւնը այս վերջին երկիրներու համար 5 ֆրանք (25 ղրուշ) :

Այն կրթական հաստատութիւնները՝ որոնք լայն պիտածէ մը չունին, կրնան ստանալ 12 թիւը կէս բաժնեգինով՝ այսինքն 6 ֆրանքի :

Նամակ կամ բաժնեգին եւ թղթակցութիւն ղրկել Տնօրէն-խմբագրին՝

Missac Baghdassarian

4, rue Ortolan — PARIS (5)

### «ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Ախջիսա (Ռուսիա)	Արժ. Տ. Ներսէս քհն. Համբարձումեանց
Դալիքեժ (Պարսկ.)	Տօք. Կարապետ Փաշաեան
Եգիպտոս (Գահիրէ)	Պարոն Միհրան Չրաքեան
Թիֆլիս (Ռուսիա)	Արժ. Տ. Եզնիկ Աւագ քհն. Երզնկեանց
Լիւն (Ամերիկա)	Պարոն Յակոբ Պէրպէրեան
Ռաֆրկան (Ամերիկա)	Պարոն Կարապետ Ստեփանեան
Տրապիզոն	Պարոն Պ. Սիմաւոնեան

### ՏՊԱՐԱՆ - ԳՐԱՏՈՒՆ " ՀԱՄԱԼՍԱՐԱՆ " Ի

Ա. Երջան Հանաչաւարանի (12 թիւ թղթակազմ)	8 ֆրանք
" " ( " կէս կաշի)	10 "
" " ( " կէս կաշի ոսկեգօծ)	12 "
Ճրանասահայ պատկերազարդ բառարան (A—H) (Իշխան Գ. Լուսինեան)	25 "
Մկա Վախ Չունիմ (Գիւլտանցի)	— 50սանթ
Ուխտ (Բէլլուբէկեան)	1 "
Հոգեր (Վահան Թէքէեան)	3 "
Ուարազան (Ս. Պարթեւեան)	1 "

Այս հրատարակութիւնները մեծաքանակ գնողներուն գոհացուցիչ զեղջ կը լինի :

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի (Պ. Միսսակ) տպարանին մէջ կը լինին անեն տեսակ տպրագրական աշխատութիւններ խիստ խնամուած կերպով եւ պահանջուած կատարեալ նրբութեամբ :

Յանձնարարութիւնները կանխիկ են եւ կը կատարուին ճշգրտութեամբ եւ փութով :

Տպարան-Գրատան վերաբերեալ ամեն յանձնարարութիւն ղրկել.  
Imprimerie B. MISSAC  
4, rue Ortolan — PARIS